

«Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն

«Zoravar Sepouh» historical-political analytical center

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԹԻՎ 5(10)

HISTORY AND POLITICS

ACADEMIC JOURNAL

№5(10)

ԵՐԵՎԱՆ 2020

Հանդեսը տպագրվում է «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

Աշոտ Ենգոյան, Արմեն Ճուղուրյան, Արմեն Սահակյան, Բագրատ Էսդուգյան (Թուրքիա, Ստամբուլ), Գարիկ Քեռյան, Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյան, Էդիկ Մինասյան, Ժիրայր Լիպարիտյան (ԱՄՆ, Բոստոն), Հովսեփ Աղաջանյան, Մարտին Գիլավյան, Վալերի Միրզոյան, Վալերի Թունյան, Ռաֆիկ Նահապետյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Արտաշես Ղազարյան

Պատասխանատու քարտուղար՝ Թամարա Սարգսյան

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր – Ալեքսանդրապոլի պայմանագիր, Խորհրդային Ռուսաստան, Քեմալական Թուրքիա, Ալ. Խատիսյան, Կարաբեքիր, Ս. Վրացյան, Դրո, Դաշնակիցներ, Մոսկվայի պայմանագիր, Կարսի պայմանագիր, տարածք, սահման:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը հաջորդեց հայ-թուրքական խորհրդաժողովին, պատմաբանների կողմից բազմաթիվ անգամներ է քննության ենթարկվել: Սակայն, այդ պայմանագրով նախատեսված Հայաստանի տարածքների ճշգրտման առումով, կարծում ենք, դեռ ասելիքները չեն սպառվել:

Այն փաստորեն կնքվել է հայերի կողմից պետություն չներկայացնող անձանց և թուրքական կողմի միջև, որը նույնպես ներկայցնում էր մի իշխանություն, որը դեռևս միայն ճանաչված էր Ռուսաստանի կողմից: Այդ շրջանում գոյություն ուներ երկու Թուրքիա՝ քեմալական Թուրքիան և Օսմանյան Թուրքիան, որը մի փոքրիկ պետություն էր՝ Անգլիայի վերահսկողության տակ: Քեմալական Թուրքիային Դաշնակիցները ճանաչեցին 1922թ. հոկտեմբերի 11-ին Մուդանյա քաղաքում (Մարմարա ծովի ափին) ստորագրած զինադադարով, որը փաստորեն փոխզիջումային համաձայնություն էր նոր Թուրքիայի և նրանց միջև: Թուրքիան դրանով առանց ռազմական գործողությունների ստացավ Արևելյան Թրակիան, իսկ Անտանտի տերություններն իրենց զորքերը Ստամբուլում և նեղուցներում պահելու իրավունք ստացան մինչև հաշտության պայմանագրի կնքումը[1]:

Նույնիսկ Լոզանի կոնֆերանսին մասնակցելու հրավեր ուղարկվում է ոչ միայն Անկարա, այլև՝ Ստամբուլ. ուր դեռ կար սուլթանական կառավարությունը: Այս կառավարությունը ԹԱՄԺ-ի կողմից լուծարվեց 1922թ. նոյեմբերի 1-ին ընդունված օրենքով: Այդ օրենքով լուծարվեց սուլթանութ-

[1] **Հասրաթյան Մ. Ա., Օրեշկովա Ս. Ֆ., Պետրոսյան Յու. Ա.,** Թուրքիայի պատմության ուրվագծեր, էջ 242-243:

յունը և վերջին սուլթան Մեհմեդ VI անգլիական ռազմանավով փախավ Մալթա կղզի[1]:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը հանձին հայկական կողմի կնքում էր մի պատվիրակություն, որն այլևս չէր ներկայացնում որևէ պետություն, քանի որ ՀՀ –ն ծորհիրդայանցել էր, իսկ մյուս կողմից՝ մեկ այլ պատվիրակություն, որը դարձյալ չէր ներկայացնում պետություն, քանզի սուլթանական Թուրքիան դեռ կար և ԹԱՄԺ-ն ոչ թե պետություն էր ներկայացնում, այլ՝ նոր Թուրքիայի ստեղծելուն նպատակաուղղված շարժման ղեկավար մարմին, որ միջազգային իրավական սուբյեկտ չէր: ԹԱՄԺ-ն ճանաչել էր միայն Խորհրդային Ռուսաստանը: Նույն կարգավիճակում էր նաև Խորհրդային Ռուսաստանը:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը երկու կողմի համար էլ ոչ իրավական պայմանագիր էր: Ուրեմն, ո՞րն է պատճառը, որը հակառակ այս հանգամանքին, այս պայմանագիրը շարունակում է մնալ պատմաբանների ուշադրության կենտրոնում:

Կարծում ենք այն պատճառով, որ **այս պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը փորձեց ստեղծել կեղծ հիմնավորում, որ Թուրքիային տարածքային զիջումներն արվել են այդ պայմանագրով, և այդ քողի տակ թաքցրեց նրա հետ Հայաստանը բաժանելու պարզ իրողությունը**: Իսկ Թուրքիան համոզված լինելով, որ Ռուսաստանը չի ցանկանա հանուն Հայաստանի տարածքային զիջումների կորցնել իրենէ որպես դաշնակցի, ինքը կորզեց տարածքներ Հայաստանից:

Որ իսկապես մինչև Ալեքսանդրապոլի պայմանագիրն արդեն Կարսի նահանգի հարցը հօգուտ քեմալականների էր վճռված, երևում է նաև այն խոսքերից, որոնք ասել է Կարաբեքիրը Ալ . Խատիսյանին Ալեքսանդրապոլում՝ «Դուք պէտք է գիտնաք, պ. Խատիսեան, որ մենք նախապես համաձայնած ենք Մոսկվայի հետ ստանալու Կարսի նահանգը, աւելին մեզ չեն տար: **Բայց եթէ այժմ դուք չընդունեք մեր պայմանները, ես կը քաղեմ աւելի առաջ, փոյթ չէ թէ վաղը ստիպուած ետ կը դառնամ**»[2] (ընդգծումը մերն է – Ա.Ն.):

Հատկապես մեր ընդգծած նախադասությունը ապացուցում է այն պարզ ճշմարտությունը, որն նույնիսկ այդ բեմադրությունը իրականության տեղ ներկայացնելու համար չէր բացառվում թուրքերի արշավանքի շարունակությունը, թեպետ և պարզ էր, որ նրանք հետ էին դառնալու:

Հնարավոր է, որ այս խոսքերը Կարաբեքիրն ասել է՝ վախեցնելու համար Ալ. Խատիսյանին և եթե նա չստորագրեր պայմանագիրը, թուրքերը որևէ առաջխաղացում չունենային այլևս: Բայց այն հոգեբանական

[1] Նույն տեղում:

[2] «Ժողովրդի ձայն», Կ. Պոլիս, 24 փետրվար, 1921:

պահը, որն ապրում էր այս խելամիտ անձնավորությունը, տվյալ իրավիճակում չէր կարող մերժողական պատասխան թելադրել:

Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանի տարածքների ճշգրտումը ունի կարևորություն այն առումով, որ ոչ օրինական այս պայմանագրով նախատեսված հայ-թուրքական սահմանագիծը հիմնականում հիմք հանդիսացավ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի մատնանշած սահմանների համար, և բացի այդ՝ Մոսկվայի պայմանագրով ավելին էր թողնվում Թուրքիային, քան այս պայմանագրով: Այնպես, որ ճիշտ է նկատել պատմաբան, քարտեզագետ Բ. Հարությունյանը, «որ տարածքային առումով Մոսկվայի պայմանագիրը անգամ զիջում էր Ալեքսանդրապոլի պայմանագրին»[1]:

Եվ, վերջապես կուզենայինք ուշադրություն դարձնել մեկ այլ հանգամանքի վրա: Պայմանագրի ստորագրումից առաջ Ալ. Խատիսյանը կապվելով Դրոյի հետ, որը արդեն խորհրդայնացած Հայաստանի իշխանությունն էր ներկայացնում և նրանցից ստանում է այնպիսի պատասխան, որով պայմանագրի ստորագրման նպատակահարմարությունը թողնվում էր իր վրա:

«Երեկոյեան ժամը 6ին, - գրում է Ալ. Խատիսեանը, - ինձ հրաւիրեց ուղղակի հեռագրաթելի մօտ Դրօն, որ ըսաւ հետեւեալը. - **«Յեղափոխական կառավարութեան անունից յայտնում եմ ձեզ, որ դուք ազատ էք ստորագրել դաշնագիրը կամ ոչ»**:

Լաւ գիտակցելով դաշնագիրը ստորագրելու կամ մերժելու ամբողջ պատասխանատուութիւնը, ես երկրորդ անգամ հարցուցի.

«Արդեօք կառավարութիւնը ստորագրելո՞ւ կողմն է թէ մերժելու: Մենք սպասում ենք որոշ եւ պարզ հրահանգների»:

Դրօն պատասխանեց.

«Ես ձեզ ասացի արդէն: Գործեցէ՛ք համաձայն ձեր հասկացողութեան: Ես խօսում եմ ընկեր Սիլինի եւ իմ անունից:

Ես հաւաքեցի պատուիրակութեան եւ խորհրդականներու ընդհանուր նիստ եւ ըսի «**Պարոններ, յեղափոխական կառավարութիւնը մեզ վրայ է դնում ամբողջ պատասխանատուութիւնը: Մենք պարտաւոր ենք ստանձնել այդ պատասխանատուութիւնը մեր ժողովրդի առաջ, խնդրում եմ իւրաքանչիւրին ձեզանից յայտնել իր կարծիքը**»:

Բոլորը **միաձայնութեամբ** արտայայտուեցան յօգուտ դաշնագրի ընդունելուն եւ ստորագրելուն: Բոլորի պատճառաբանութիւնները միատեսակ էին»[2]:

---

[1] **Հարությունյան Բ.,** Ալեքսնադրապոլի և Մոսկվայի, պայմանագրերի համադրական քննության շուրջ, տե՛ս «Պատմաբանասիրական հանդես»,Երևան, թիվ 3 (188), 2011, էջ 51:

[2] **Խատիսեան Ա.,** նշվ. աշխ., էջ 210:

Հետաքրքրութիւնից զերծ չէ Ալ. Խատիսյանին Ս. Վրացյանի հետևյալ հեռագիրը. «**Կառավարութիւնը հրաժարական տուեց: Դիլիջանում եւ Քարվանսարայում մեր զօրքերը առանց կռուի հանդիպեցին բոլշեւիկեան զորքերի հետ:**

Կազմւում է կոալիսիոն կառավարութիւն բոլշեւիկների հետ մասնակցութեամբ Դրօյի եւ Տէրտերեանի՝ Դաշնակցութեան կողմից: Թուրքերի պայմանները ստիպուած ենք ընդունել: Դուք լիազօրուած էք ստորագրել դաշինքը»[1]:

Ալ. Խատիսեանի և Դրոյի խոսակցությունից եզրակացությունները հետևյալն են.

Առաջին. Դրոն նորաստեղծ կառավարութեան անունից հրահանգում է նրան ստորագրել պայմանագիրը կամ ոչ: Ստացվում է, որ անկախ կառավարության հրահանգի անորոշությունից, այդ կառավարությունը լիազորում էր Ալ. Խատիսյանին գործելու, որը կարող է նշանակել, որ Ալեքսանդրապոլի պատվիրակությունը եթե գնացել է պայմանագրի ստորագրմանը, ապա՝ դա արել է Հայաստանի խորհրդային իշխանության հրահանգով: Ուրեմն, եթե կնքված պայմանագիրը խայտառակ էր, ապա՝ դրա մեղավորը հենց այդ իշխանությունն էր: Ալ. Խատիսյանը կարող էր նաև չկնքել պայմանագիրը, քանզի նաև այդպես վարվելու հրահանգ ուներ Սիլինից և Դրոյից:

Երկրորդ. Ս. Վրացյանի վերոհիշյալ հեռագիրը վերջանում է հետևյալ նախադասությամբ. **«Դուք լիազորուած էք ստորագրել դաշինքը»**:

Բնականաբար, եթե նույն հեռագրում նշվում է, որ Ս. Վրացյանի կառավարությունը հրաժարական է տվել, ապա՝ դաշինքն ստորագրելու հրահանգ տրվել է նոր կառավարության կողմից:

Ստացվում է, որ Ալ. Խատիսյանը հրահանգ է ստացել ստորագրելու դաշինքը: Եվ դրանում մեղքը խորհրդային իշխանությանն էր:

Իսկ Ալ. Խատիսյանն այն կարող էր ստորագրել միայն այն դեպքում, եթե ստանար լիազորագիր, որով իր պատվիրակությունը ճանաչվում էր խորհրդային իշխանության կողմից որպես բանակցող կողմ և անպայմանորեն գրավոր: Բայց, քանի որ դա չի եղել, ուրեմն պայմանագիրն անօրինական էր և չէր համապատասխանում միջազգային իրավունքի որևէ դրույթի:

Թերևս կարելի է համաձանվել պատմաբան Ա. Հակոբյանի հետևյալ տեսակետի հետ. «Բազմահմուտ դիվանագետը և հավասարակշիռ պետական գործիչը, մեր կարծիքով, չցուցաբերեց դիվանագիտական ճկունություն, չկարողացավ կամ գուցե չուզեց օգտագործել քաղաքական նպաստավոր պահը, որ Հայաստանը արդեն խորհրդայնացել է և կուլ

[1] Նույն տեղում:

գնալով Կարաբեքերի սպառնալիքին ու պարտադրանքին՝ ստորագրեց պայմանագիրը, թեկուզ և այն այլևս չուներ իրավական ուժ»[1]:

Ինչ վերաբերում է այն խնդրին, թե չստորագրելու դեպքում թուրքերը կշարունակեին առաջխաղացումը, ապա՝ դա նույնպես վիճելի էր, և դարձյալ կարելի է համաձայնվել Ա. Հակոբյանի հետ, որ հազիվ թե թուրքերը շարժվեին դեպի Երևան[2]:

Եթե թուրքերը ուզենային շարժվել դեպի Երևան, ապա՝ դա կարող էին անել այն պատճառաբանությամբ, որ Ալ. Խատիսյանն այլև լիազորված անձ չէ պայմանագիր կնքելու համար: Այսինքն՝ նրանք շատ լավ գիտեին, որ Ալ. Խատիսյանի հետ կնքելիք պայմանագիրն իրավական հիմք չունի: **Եթե նրանք նպատակ ունենային առաջ շարժվելու, ապա՝ դա կանեին նաև առանց պայմանագիրը կնքելու: Բայց, դա անհնար էր, քանի որ նախապես նրանք ունեցել են պայմանավորվածություն բոլշևիկների հետ**:

Հակառակ դեպքում պետք է մտածել, որ նրանք կասկածել են Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման հնարավորության վրա և որոշել են այդ պայմանագրով ամրագրել իրենց պահանջները: Սակայն, նման դատողության համար հիմքեր չկան:

Եվ վերջապես, որ թուրքերը առաջ չէին գնալու, հաստատվում է նաև Գ. Գալոյանի բերած այն փաստով, որ ՀՀ խորհրդայնացման օրերին Մդիվանին հեռագրով տեղեկացրել է Չիչերինին, «որ Կարաբեքիր փաշան առաջարկել է ռուսական զորքեր մտցնել Հայաստան, ինչը հնարավորություն կտար թուրքերին՝ «իրենց զորքերը տեղափոխել Արևմուտք՝ ընդդեմ Անտանտի»[3]:

Տրամաբանական է հնչում նաև Ե. Սարգսյանի այն վարկածը, որ հայկական կողմը պայմանագիրը ստորագրեց, այն հույսով, որ այն իրավական ուժ չի ունենա, քանի որ իրենց կառավարությունն արդեն իշխանությունը հանձնել էր բոլշևիկներին[4]:

Սակայն, սա վարկած է, քանզի չունի ոչ մի փաստական հիմնավորում:

Հետաքրքիր է նաև Լ. Խուրշուդյանի մեկ փաստը՝ կապված Մդիվանու՝ որպես Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի՝ Ալեքսանդրապոլի բանակցություններում ունեցած թուրքանպաստ դերակատարության հետ: Նոյեմբերի 29-ին Մդիվանին Օրջոնիկիձեին և Ստալինին ուղարկած հեռագրի մեջ հետևյալն է գրում. «Երեկ Կարաբեքիրի հետ միա-

---

[1] **Հակոբյան Ա.,** Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, էջ 59:

[2] Նույն տեղում, էջ 61:

[3] **Գալոյան Գ.,** նշվ. աշխ., էջ 367:

[4] Տե'ս «Литературная Армения», N 1, Ереван, 1991, ст. 79.

սին խոսեցի Անգորայի ազգային մեծ ժողովի երկու ազդեցիկ անդամների հետ: Նրանք պնդում են մեր միջև անհապաղ ձևական պայմանագիր կնքելու վրա: Նրանք մեզանից միայն զենք են պահանջում: Իրենց կողմից պարտավորվում են այնզիջում պայքար մղել անգլիացիների դեմ, մեր քաղաքականությունն անցկացնել արևելքում: Հենվելով նրանց՝ Հայաստան և Վրաստան մեր զորամասերը մտցնելու մասին պայմանագիր կնքելու և Բաթումի կողմից անգլիական հարվածը կանխելու համար իրենց աջակցության մասին առաջարկների վրա, գտնում եմ, որ նրանք առայժմ Անգլիայի հետ որևէ համաձայնություն չունեն: Պնդում եմ առաջին երկու առաջարկների անհապաղ կատարման վրա: **Պայմանագիր կնքելու համար պետք է Ալեքսանդրապոլ ուղարկել համապատասխան լիազորություններով հանձնաժողով: Նրանք, մեր համաձայնության դեպքում, անմիջապես կհայտնեն Անգորային և այնտեղից կժամանի նույնանման հանձնաժողով: Սպասում եմ ձեր անհապաղ պատասխանին**»[1] (ընդգծումը մերն է – Ա. Ն.):

Մի կողմ թողնելով այն խնդիրը, որ այս հեռագրով Մդիվանին ցանկանում էր հասնել նրան, որ Ռուսաստանը Թուրքիային ճանաչեր հավատարիմ դաշնակից և զենք մատակարարեր նրան՝ Անգլիայի դեմ պայքարելու, ինչպես նաև Արևելքում բոլշևիկյան քաղաքականությունը տարածելու համար, ուզում ենք անդրադառնալ մեր ընդգծած պարբերության տրամաբանությանը: Իսկ դա հետևյալն է՝ **եթե բոլշևիկներն ուզենային, անմիջապես օրենքից դուրս կհայտարարեին Ալ. Խատիսյանի պատվիրակությունը և Ալեքսանդրապոլ կուղարկեին նոր պատվիրակություն՝ միանգամայն այլ լիազորություններով, որոնց մեջ մտնելու էր նաև Հայաստանի և Վրաստանի գրավումը ռուսների կողմից**: Սակայն, կենտրոնը չլսեց Մդիվանուն, թերևս ցույց տալու համար հայերին, որ թուրքերին 1914 թ.-ի սահմանները չպարտադրելն իրենց մեղքով չէր:

Սակայն, խոսելով Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին, վստահ կարելի է պնդել, **որ դա մի փաստաթուղթ էր, որի մատնանշած տարածքներով Հայաստան գոյություն չի ունեցել:**

Դրանում համոզվելու համար սկսենք Ալեքսանդրապոլի բանակցություններից:

Ալ. Խատիսյանի պատվիրակությունը Ալեքսանդրապոլ է հասնում նոյեմբերի 24-ին, առավոտյան ժամը 6-ին: Պատվիրակության կազմում էին՝ Ալ. Խատիսյանը (նախարար), Աբր. Գյուլխանդանյանը և Ստ. Ղորդանյանը: Խորհրդականներն էին Վահան Մինախորյանը, իրավաբան Տիգրան Հովհաննիսյանը, գնդապետ Աթայանը և կապիտան Խնձորյանը[2]:

[1] **Խուրշուդյան Լ.,** նշվ. աշխ., էջ 282-283:

[2] **Խատիսյան Ա.,** նշվ. աշխ., էջ 294:

Թուրքական Ազգային մեծ ժողովի կողմից բանակցությունները վարում էին Քյազիմ Կարաբեքիր փաշան, որն Արևելյան ռազմաճակատի հրամանատարն էր, Համէդ բեյը (Էրզրումի նահանգապետ) և Սուլեյման Նաճարի բեյը (Էրզրումից ԹԱՄԺ-ի պատգամավոր)[1]: Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչն էր Մդիվանին:

Ալ. Խատիսյանը մի շատ հետաքրքիր դիտարկում է անում՝ կապված Էրզրումի ներկայացուցչի (ըստ նրա՝ բերդապետի) պատվիրակության կազմում ընդգրկելու հետ: «Ինչպես յետոյ տեղեկացայ, - գրում է նա, - Թուրքերը դիտմամբ մըտցուցած էին իրենց պատուիրակութեան մէջ Էրզրումի ներկայացուցիչները՝ ընդգծելու համար Սեւրի դաշնագրի անարժէք ըլլալը իրենց աչքին, այն ինչ դաշնագրի զօրութեամբ եւ Ուիլսոնի իրաւարարութեան որոշմամբ Էրզրումը կ'անցներ Հայաստանին»[2]:

Սա նշանակում է, որ թուրքերը նպատակ են հետապնդել հայերին պարտադրել տարածքներ, որոնք ամենևին չէին համընկնելու Վիլսոնյան սահմանագծի հետ:

Առաջին հանդիպման ընթացքում, որը տեղի է ունենում հայոց պատվիրակության ժամանման օրը, Կարաբեքիրը հայտնում է, որ Թուրքիան «պատրաստ է ամուր եւ երկարատեւ հաշտութիւն կնքել Հայաստանի հետ»: Ալ. Խատիսյանը նույնպես հայտնում է հայկական կողմի նման ցանկության մասին[3]:

Շատ կարևոր է, որ Կարաբեքիրը հայտնում է, թե բանակցությունները «կարող են տեղի ունենալ Հայերու եւ Թուրքերու միջեւ միայն եւ առանց որեւէ մասնակցութեան ռուս ներկայացուցիչներու»[4]:

Խնդիրը վերաբերում էր Բ. Մդիվանուն, որը Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչն էր: Հարց է առաջանում՝ կա՞ր արդյոք պայմանավորվածություն ռուսների և թուրքերի միջև՝ նրա մասնակցությունը ձևական դարձնելու առումով:

Ենթադրում ենք, որ ոչ: Բայց Մդիվանու, հակառակ Ալ. Խատիսյանի ջանքերի, այս բանակցություններում դերակատարություն չունենալը ձեռնտու էր և՛ ռուսներին և՛ թուրքերին:Ռուսներին նրա համար, որ չէին ցանկանում թուրքերին պարտադրել Հայաստանին զիջելու առավել շատ տարածքներ, իսկ թուրքերին՝ նրա, որ հետագայում ռուսների կողմից տարածքային հարց մեջտեղ բերելու դեպքում մատնանշեին հայերի հետ պայմանագիրը՝ այդ տարածքներից հրաժարվելու մասին:

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 93:

[2] **Խատիսեան Ա.,** նշվ. աշխ., էջ 300:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

Առաջին պաշտոնական նիստը կայանում է նոյեմբերի 25-ին, ցերեկվա ժամը 5-ին (17-ին):

Թուրքերը պատերազմն սկսել էին Բաթումի պայմանագրի սահմանները պարտադրելու պահանջներով: «Բայց մեր պատուիրակութիւնը կը կարծէր, - գրում է Ալ. Խատիսեանը, - **որ Թուրքերը կը ցանկանան կենսունակ Հայաստանի մը ստեղծումը, որ օգտակար էր իրենց պետական շահերու տեսակետէն**, ինչպես որ այդ մասին շարունակ կը յայտարարէին Թուրք պետական գործիչները: Հայաստանի կառավարութեան կողմէ մեզ տրուած հրամաններուն համաձայն՝ **մենք վճռած էինք պաշտպանել Հայաստանի սահմանները՝ մտցնելով անոնց մէջ ամբողջ ռուսական Հայաստանը, Վան, Մուշ, ամբողջ Վանայ լիճը, Րիզե նաւահանգիստով՝ թողելով Էրզրումը եւ Տրապիզոնը Թուրքերուն: Էրզրումը եւ Տրապիզոնը Թուրքերուն թողուլը մենք կը համարէինք իբրեւ զիջում մեր կողմէն**»[1] (ընդգծումները մերն են – Ա.Ն.):

Պարզապես զարմանալ կարելի է հայկական կողմի դիրքորոշման վրա: Նախ, եթե նրանք գտնում էին, որ թուրքերին ձեռնտու էր «կենսունակ Հայաստանի» ստեղծումը, այդ դեպքում ինչո՞ւ նրանց հետ չգնացին բանակցությունների, առավել նեղ տարածքների պահանջով մինչև հայ-թուրքական պատերազմը: Միգուցե այդ կերպ հնարավոր լիներ խուսափել պատերազմից:

Երկրորդ. Թուրքերն, հարկավ, ցանկացել են անկախ բոլշևիկների հետ դաշինքից, Անդրկովկասում տեսնել ինքնուրույն քաղաքական միավորներ, բայց միթե՞ դա նշանակում է, որ նրանք այդ միավորներից Հայաստանը կուզենային ստեղծել իրենց համար կարևոր այնպիսի տարածքների զիջումով, որոնք մատնանշում է Ալ. Խատիսյանը: Բացի այդ՝ նա ինքն իրեն հակասում է, մինչև այդ գրելով, որ պատերազմի սկսումով թուրքերը ձգտում էին պահպանել Բաթումի պայմանագրի սահմանները:

Երրորդ. ՀՀ պատվիրակությունը, ելնելով իր կառավարության ցուցումներից դնելու էր հիշատակված տարածքները պահանջելու հարց և զիջելու էր միայն Տրապիզոնն ու Էրզրումը: Դա այն դեպքում, երբ պարտված կողմ էր: Ուրեմն, ի՞նչ հույսով էր դա անում: Բնականաբար, դաշնակիցների, որոնք արդեն քեմալականների հետ գաղտնի համաձայնության քայլերի էին գնում և Վիլսոնի, որը սահմաններ գծելու ժամանակ այլևս ընտրված նախագահ չէր:

Կարելի է նաև համաձայնվել, որ Ալ. Խատիսյանն այդ պայմանագիրն ստորագրելով՝ համոզված է եղել, որ խորհրդային իշխանությունը դրանից կհրաժարվեր, քանզի իրավական ուժ չուներ[2]:

---

[1] Նույն տեղում, էջ 302-303:

[2] Նույն տեղում:

Ալ. Խատիսյանը պատվիրակության մյուս անդամների հետ ձևակերպում է վերոհիշյալ պահանջները, որից հետո նշանակված օրվա պայմանավորված ժամին տեղի են ունենում բանակցությունները:

Կարաբեքեր փաշան ի սկզբանե հայտարարում է, որ եթե ՀՀ պատվիրակությունը չհրաժարվի Սևրի պայմանագրից, ապա՝ խորհրդաժողովը կհետաձգվի: Դրանից հետո նիստն ավարտվում է:

Պատվիրակությունը կապվելով Ս. Վրացյանի կառավարության հետ և ստանալով նրա համաձայնությունը՝ ընդունում է թուրքերի առաջարկը: Այդ մասին հայտարարվում է նոյեմբերի 27-ի նիստի ժամանակ:

Զերծ մնալով բանակցությունների մանրամասնություններից, հարկ ենք համարում շեշտել, որ Ալ. Խատիսյանն իրեն պահում է բարձր հայրենասիրությամբ օժտված գործիչի նման և ձգտում է հայության ապրելու և գոյատևելու համար թուրքերից պոկել անհրաժեշտ տարածքներ: Սակայն, նման պահանջների հետևում նա չուներ թիկունք, ոչ հանձինս դաշնակիցների, ոչ Ռուսաստանի և ոչ էլ հայկական բանակի:

Նոյեմբերի 30-ին թուրքերն ուղարկում են դաշնագրի իրենց նախագիծը, որով «Հայաստանին կը ձգուէր 27.000 քառ. քիլոմետր, Կարսի նահանգը եւ Սուրմալուի գաւառը կ'անցնէին Թուրքիոյ, իսկ Նախիջեւանն ու Զանգեզուրը կը դրուէին Ադրբեջանի հովանավորութեան տակ: Հայաստանին իրաւունք կը տրուէր ունենալ 1200 զինուոր, 20 գնդացիր, 8 թնդանօթ: Ժանտարմների թիւը չէր սահմանափակուեր: Բերդերը կը ձգուէին, սակայն միայն փոքր տեսակի թնդանօթներով: Դաշնակիցներու ներկայացուցիչները պետք է ձգէին Հայաստանը»[1]:

ՀՀ պատվիրակությունն իր պատասխանն է ուղարկում նոյեմբերի 30-ի երեկոյան, իսկ դեկտեմբերի 1-ին, առավոտյան ժամը 11-ին տեղի է ունենում երրորդ նիստը, որի ընթացքում թուրքերը վերջնագրի ձևով ներկայացնում են իրենց պատրաստած դաշնագիրը՝ պահանջելով ընդունել այն, հակառակ դեպքում սպառնալով շարժվել Երևանի վրա[2]:

ՀՀ պատվիրակությունը դարձյալ առարկություններ է անում, պատճառաբանելով, որ պետք է դաշնագրի գլխավոր կետերը հաղորդվի Երևան, ինչը և անում է: Գիշերը Ս. Վրացյանից ստանում են այն հեռագիրը, որին, ինչպես նաև՝ Դրոյի հետ խոսակցությանն, արդեն անդրադարձել ենք: Այնուհետև Ալ. Խատիսյանը հրավիրում է պատվիրակության անդամների և խորհրդականների ընդհանուր նիստ, ուր «բոլորը միաձայնութեամբ արտայայտուեցան յօգուտ դաշնագրի ընդունելուն եւ ստորագրելուն»[3]:

---

[1] **Խատիսյան Ա.,** նշվ. աշխ., էջ 308-209:

[2] Նույն տեղում, էջ 309:

[3] Նույն տեղում, էջ 310:

Երեկոյան ժամը 8-ին (20-ին) տեղի է ունենում խորհրդաժողովի չորրորդ և վերջին նիստը, որի ընթացքում հայերը հայտարարում են, թե ընդունում են դաշնագիրը: Այնուհետև ընթերցում են այն հոդված առ հոդված: ՀՀ պատվիրակությանը հաջողվում է մի քանի փոփոխություններ մտցնել հօգուտ հայոց (Աղբաբայի մի մասը Հայաստանի սահմանների մեջ մտցնելը, զորքի քանակը 1200-ից 1500-ի հասցնելը)[1]:

Այնուհետև դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը (փաստորեն դեկտեմբերի 3-ին) ժամը 2-ին ստորագրվում է պայմանագիրը:

Հաջորդ օրը պատվիրակությունը վերադառնում է Երևան: Մինչև պայմանագրով Հայաստանի սահմանների ներկայացնելը, հարկ ենք համարում մեջբերել Ալ. Խատիսյանի հետևյալ վկայությունը. «Տուն գալով ես հեռախոսով կանչեցի Դրօն եւ խնդրեցի անկէ նշանակել կառավարութեան նիստ՝ պատուիրակութեան զեկուցումը լսելու համար: Զեկուցումը նշանակուեցաւ նոյն օրը ցերեկուայ ժամը 12ին: Մենք ամբողջ կազմով գացինք կառավարութեան տունը: Մեզ ընդունեցին Դրօն եւ Սիլինը: Մենք մանրամասն զեկուցում տուինք: Պարզ էր, որ **յեղափոխական նոր իշխանութիւնը չէր ուզէր իր վրայ վերցնել պատասխանատուութիւնը դաշնագիրը ստորագրելու համար ո՛չ Թուրքերու եւ ո՛չ ալ հայ ժողովրդի առջեւ**: Երեւանի նոր իշխանութիւնը կ՚ուզէր, որ դաշնագիրը ստորագրուէր մեր եւ ոչ իր ձեռքով»[2] (ընդգծումները մերն են –Ա. Ն.):

Հատկապես մեր ընդգծած նախադասությունները հիմք են տալիս հետևյալ եզրակացությունների համար.

Առաջին. Փաստորեն Ալ. Խատիսյանը պայմանագիրն ստորագրել է՝ հասկանալով, որ այդպես է ուզում նոր իշխանությունը:

Երկրորդ. Պայմանագրով նախատեսված սահմանները նախորոշված են եղել, բայց դրա ստորագրումը բոլշևիկները ցանկացել են իրականացնել նախկին իշխանության պատվիրակության ձեռքով՝ պատասխանատվությունը գցելով նրա վրա:

Երրորդ. Ստացվում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչ թե Հայաստանի առաջին Հանրապետության, այլ՝ Խորհրդային Հայաստանի պայմանագիրն էր, որը կնքած պատվիրակությունը բանավոր լիազորություն է ստանում Դրոյի միջոցով:

Ուրեմն, եթե այս պայմանագիրը «խայտառակ» էր, դրա մեղավորը բոլշևիկներն էին: Այս է պատմական ճշմարտությունը:

[1] Նույն տեղում, էջ 311:

[2] Նույն տեղում, էջ 313:

Պայմանագիրը կնքվում է ֆրանսերեն և թուրքերեն լեզուներով, որի բնագրերը Ալ. Խատիսյանը դեկտեմբերի 5-ին հանձնում է Դրոյին՝ երեք քարտեզների հետ մեկտեղ[1]:

Այժմ փորձենք ճշտել Հայաստանի տարածքներն ըստ Ալեքսանդրապոլի դաշնագրի: Դրա բնագիրը Հայաստանում չի պահպանվել: Հայաստանի ազգային Արխիվում պահպանվել են դրա հայերեն և ռուսերեն թարգմանությունները[2]: Այն հրատարակվել է Ս. Վրացյանի[3], Շ. Նաթալիի[4] աշխատություններում, Ջ. Կիրակոսյանի խմբագրած ժողովածուում[5] և այլն:

Պետք է նշել, որ հոդվածների կետերը տարբեր հրատարակություններում խախտված են և իրար հետ չեն համընկնում: Բայց անկախ դրանից, դրանց բովանդակությունը նույնն է:

Հարմար ենք համարում Հայաստանի սահմանները ներկայացնել ՀԱԱ-ում պահպանված բնագրի հայերեն թարգմանության կետերի հիման վրա:

Պայմանագրով «Հայաստանի կառավարութիւնը չեղեալ է յայտարարում իր կողմից եւ Թուրքիայի վերաբերյալ կնքւած բոլոր դաշնագրերը, ինչպես նաեւ այն բոլոր դաշնագրերը որ կնքած են ի վնաս Թուրքիային»[6]:

Սա կարդում ենք մեր ձեռքի տակ գտնվող փաստաթղթի 12-րդ կետում: Նրանում թեպետ չկա Սևրի պայմանագրի մասին հիշատակություն, բայց հասկանալի է, որ գլխավորապես այդ պայմանագիրը նկատի ուներ:

Ջ. Կիրակոսյանի խմբագրած ժողովածուի այդ պայմանագրին վերաբերվող 9-րդ կետում սակայն, հետևյալն ենք կարդում. «Երևանի կառավարությունը համաձայնվում է Սևրի պայմանագիրը, որը կտրականապես մերժել է Թուրքիայի կառավարությունը, համարել և հայտարարել անվավեր»[7]:

Սևրի պայմանագրից հրաժարվելու փաստը Ս. Վրացյանի մոտ ամրագրված է պայմանագրի 3-րդ կետում, այն է՝ «Հայերը հրաժարւում են Սեւրի դաշնագրից, յետ են կանչում բոլոր այն կոմիտէները եւ ներկայացուցիչները, որոնք գոյութիւն ունեն Եվրոպայում, չեն պահում Հայաստանում Դաշնակիցների ո'չ մի ներկայացուցիչ, մինչեւ որ Թուրքիան հաշտութեան դաշն կնքի նրանց հետ»[8]:

---

[1] Նույն տեղում:

[2] Տե'ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 93-99, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 15-17:

[3] Տե'ս **Վրացեան Ս.,** Հայաստանի Հանրապետութիւն, էջ 504-505:

[4] **Նաթալի Շ.,** Երեք դաշնագրեր, «Արարատ» մատենաշար, թիւ 24, Բէյրութ, 1957:

[5] Հայաստանի միջազգային դիվանագիտություն և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 683-687:

[6] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 96:

[7] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 685:

[8] **Վրացյան Ս.,** նշվ. աշխ., էջ 505:

Ինչպես համոզվում ենք՝ տարբեր հրատարակություններում պայմանագրի կետերը փոխվել են, բայց դա չէ կարևորը, այլ այն, որ դրանք հիմնականում ճիշտ են ներկայացնում պայմանագրի էությունը, որ փաստորեն այլևս Սևրի պայմանագիրը մնում էր պատմությանը:

Իսկ այս պայմանագրով Հայաստանի և Թուրքիայի սահմանագիծը հետևյալ կերպ էր մատնանշվում (հոդված 2) «Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանը սկսւում է Կարա-Սուին Արաքսի մէջ թափւած կետից, հետեւում է Հիսիս Արեւելք Թեխնիս (Տիգնիս- Ջ. Թ.) Մեծ Քիւմլի (Մեծ Ղմլու - Ջ. Թ.), Քըզըլ Դաշ (Ղըզըլ Դաշ – Ջ. Թ.) մինչեւ Մեծ Աղբաբա, հետո Կակի Դաղի (10282) (Կաքի-դաղ – Ջ. Թ.) հարաւ գտնւող Շարուր եւ Շահթախթիի շրջաններում անցնում է 8272 բարձունքը, Կամա-սու լեռը (8160) (Գամասուլթ Դաղ – Ջ. Թ.), Կարա-Կոլչակ գիւղը-Սահաթ լեռը (Սահաթ Դաղ- Ջ. Թ.) 7868 (ծանոթութիւն 3680), Արփաչայի վրա (5 վերստանոց 1908ի քարտէս) Սարա բուլաղ 8711 - Արարատ կայարանը մինչեւ այն կետը, ուր Կարա-Սուն թափվում է Արաքսի մէջ»[1]:

Այսպիսով, Ալեքսանդրապոլի պայմանագրով հայ-թուրքական սահմանագիծն սկսվում է Մեծ Աղբաբա լեռնագագաթից, որը պրոֆ. Բ. Հարությունյանը բացատրում է նրանով, որ թուրքերի համաձայնությամբ վրացիները ռազմակալել էին Հայաստանի Հանրապետության Արդահանի և Չըլդըրի շրջանները[2]:

Փաստորեն հայ-թուրքական սահմանագիծը չէր հասցվում մինչև հայ-վրացական սահմանը (Ուչթափալար լեռը), ուստի և Բ. Հարությունյանի մեկ այլ դիտարկմամբ Մեծ Աղբաբա լեռնագագաթից մինչև Ուչ Թափալար լեռն ընկած տարածքը թուրքերի կողմից ժամանակավորապես դիտվում էր որպես հայ վրացական սահմանագիծ[3]: Որ Բ. Հարությունյանը չի սխալվում և հիշատակած հատվածը առժամանակ համարվել է Վրաստանի մաս, վկայում է նաև Ալ. Խատիսյանը՝ Ալեքսանդրապոլի բանակցությունները ներկայացնող բաժնում: Նոյեմբերի 29-ին Կարաբեքիրի հետ առանձին հանդիպման ժամանակ, վերջինս խոսում է Հայաստանի մերձակա հարևանների մասին: Ալ. Խատիսյանը գրում է. «Վրաստանի մասին անոր ըսածը առանձնապէս ուշագրաւ էր:

-Դեռ հայերու դէմ պատերազմական գործողութիւններ սկսելէ առաջ, ըսավ ան, Անգորայի ներկայացուցիչները ի դէմս Եուսուֆ Քեմալ բե-

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 93, նույնը մի փոքր այլ խմբագրությամբ տես Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 684:

[2] **Հարությունյան Բ.,** Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերի համադրական քննության շուրջ, տես «Պատմաբանասիրական հանդես», թիվ 3, 2011, էջ 52:

[3] **Հարությունյան Բ.,** Երկու ճշգրտում, տե՛ս Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, գիտաժողովի նյութեր, Երևան, 2001, էջ 72:

յի եւ Ալի Ֆուատ փաշայի 1920 թ. ամառը եղան Թիֆլիս և վրաց կառավարութեան հետ դաշն կապեցին, որու զորութեամբ Վրաստանը, հայ-թրքական պատերազմ ծագելու պարագային, **պէտք է ստանար Բորչալուի եւ Ախալքալակի գաւառները եւ Արտահանի շրջանը**: Կարաբեքիր նոյնիսկ ցոյց տուաւ ինձ այն քարտէսը, որուն վրայ գծուած էին Վրաստանի սահմանները, համաձայն չէզոքութեան մասին կնքուած դաշնագրի»[1] (ընդգծումը մերն է – Ա. Ն.):

Մեծ Աղբաբայից մինչև Ուչթափալար հատվածը Վրաստանին թողնելով, այնուհետև հայ-թուրքական սահմանագիծն անցել է Ղըզըլ դաշ, Մեծ Ղմլու և Տիգնիս գյուղերով և ձգվել մինչև այն վայրը, ուր Ղարա-Սուն թափվել է Արաքսը:

Բ. Հարությունյանի մատնանշումով Ախուրյանի աջ ափին գտնվող հայաբնակ Մեծ Թիգնիսն (Թիխնիս) անցել է Թուրքիային, իսկ ձախ ափինը՝ Հայաստանին, Մուրադ-չայ և Ղմլու գետերի ջրբաժանում գտնվող Մեծ Ղմլուն թողնվում էր Հայաստանին, իսկ Փոքր Ղմլուն՝ Թուրքիային[2]:

Ավելորդ չենք համարում ավելացնել, որ Բ. Հարությունյանի Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերին նվիրված համադրական վերլուծությունում ապացուցվում է, որ Մոսկվայի պայմանագրով ոչ միայն վերահաստատվել է Ալեքսանդրապոլի պայմանագրով նախատեսված հայ-թուրքական սահմանագիծը, այլև նույնիսկ 150 կմ² զիջվել է Թուրքիային[3]: Ալեքսանդրապոլի պայմանագրով, այսպիսով Թուրքիային էին անցնում Կարսի մարզը՝ բացառությամբ Աղբաբայի գավառի 600 կմ² կազմող տարածքի (Ամասիա), որի մասին վերևում խոսեցինք:

Գրեթե այս նույն սահմանագիծն է մատնանշված Շ. Նաթալու հրատարակած Ալեքսանդրապոլի պայմանագրի թուրքերեն տարբերակից արված թարգմանության և կից քարտեզի մեջ[4]:

Ավելացնենք նաև, որ Ամասիան թեև պայմանագրով մաս էր կազմելու Հայաստանին, բայց այն թուրքական զորքերի կողմից շարունակեց ռազմակալված մնալ մինչև 1921 թ. ապրիլ ամիսը:

Ալեքսանդրապոլի դաշնագրի 2-րդ հոդվածի 2-րդ մասը վերաբերվում է Նախիջևանի, Շարուրի և Շահթախթիի շրջաններին: Այնտեղ կարդում ենք. «Նախիջեւանի, Շարուրի եւ Շահթախթիի շրջաններում ապագայում հանրաքւեի միջոցով մի վարչակազմ պիտի հաստատւի, Հայաս-

---

[1] **Խատիսեան Ա.,** նշվ. աշխ., էջ 307:

[2] **Հարությունյան Բ.,** Երկու ճշգրտում, տե'ս նույն տեղում, էջ 72:

[3] Տես **Հարությունյան Բ.,** Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերի համադրական քննության շուրջ, «Պատմաբանասիրական հանդես», թիվ 3, 2011, էջ 51-53:

[4] **Նաթալի Շ.,** Երեք դաշնագրեր, «Արարատ» մատենաշար, թիւ 22, Բէյրութ, 1957, էջ 15, նույնի՝ Վերստին յաւելուած» Ալեքսանդրապոլի դաշնագիրը, Բոստոն, 1955, էջ 84, **Հակոբյան Ա.,,** նշվ. աշխ., էջ 83-84:

տանը իրավունք չունի միջամտելու այդ վարչակազմին ինչ էլ որ լինի նրա ձեւը: Այդ շրջանները ժամանակաւորապէս պիտի մնան Թուրքիոյ հովանաւորութեան տակ»[1]:

Ինչպես համոզվում ենք, Ալ. Խատիայանի այն տեղեկությունը, որին անդրադարձել ենք և համաձայն որի Նախիջևանը և Զանգեզուրը անցնում էին Ադրբեջանին, այս փաստաթղթով չի հաստատվում:

Սահմանագիծը Շարուր-Նախիջևանի և Շահթախթիի շրջաններով թե ինչպես էր անցնում, արդեն մեջբերել ենք, այն է՝ Կուքի դաղից Ջամսուր-դաղ, Ղուրդ-ղուլաղ գյուղ, ապա՝ Սայաթ լեռ, որտեղից այն տեղը, ուր Ղարասուն թափվում է Արաքսը: Ինչպես նկատել է Ա. Հակոբյանը՝ «փաստորեն Զանգեզուրի և Նախիջևանի միջև սահմանագիծ չի նշվում»[2]:

Սա Բ. Հարությունյանը բացատրում է նրանով, որ Կուքից հարավ և արևելք ընկած տարածքները թուրքերը համարել են հայ-ադրբեջանական, որի պատճառով էլ ավելորդ են համարել Հայաստանի հետ սահման գծել[3]:

Եթե ընդհանրացնենք, ապա պետք է ընդունենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիային են անցել Կարսի մարզը, բացի Աղբաղայի վերոնշյալ տարածքից, Սուրմալուի գավառը, Նախիջևանի Շարուրի և Շահթախթի շրջանները, որտեղ թեպետ պետք է հանրաքվե անցկացվեր, բայց մինչև այդ դրանք դրվում էին Թուրքիայի տիրապետության տակ:

Կարևոր ենք համարում անդրադառնալ նաև այն խնդրին, թե ինչո՞ւ Սուրմալուի գավառը, որը Թուրքիայի մաս չի կազմել և Ալեքսանդրապոլի պայմանագրով չի կցվել Խորհրդային Հայաստանին, Մոսկվայի պայմանագրով տրվել է Թուրքիային: Մոսկվայի պայմանագրի 2-րդ հոդվածում կարդում ենք.

«Թուրքիան համաձայն է Վրաստանին զիջել Բաթում նավահանգստի ու քաղաքի և սույն Պայմանագրի առաջին հոդվածում նշված սահմանագծից հյուսիս ընկած ու Բաթումի մարզի բաղադրիչ մասը կազմող տարածքի սյուվերենությունն այն պայմանով, որ.

1. Սույն հոդվածում նշված վայրերի բնակչությունը վարչական առումով կունենա տեղական լայն ինքնավարություն, որը կապահովի յուրաքանչյուր համայնքի մշակութային ու կրոնական իրավունքները, և բնակչությանը հնարավորություն կընձեռնի սահմանել իր ցանկություններին համապատասխանող հողային օրենք:

2. Թուրքիային կտրվի Բաթում նավահանգստի վրայով Թուրքիա ներմուծվող և այնտեղից արտահանվող ամեն տեսակ ապրանքների ան-

[1] ՀԱԱ, ֆ. 113,ց. 3, գ. 56, թ. 93-94, նաև՝ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 684:

[2] **Հակոբյան Ա.,** նշվ. աշխ., էջ 86:

[3] **Հարությունյան Բ.,** Երկու ճշգրտում, տե'ս նույն տեղում, էջ 73:

տուրք, ազատ տեղափոխման իրավունք, տեղի չեն ունենա խափանումներ, ապրանքները չեն ենթարկվի ոչ մի տեսակ տուրքի: Թուրքիան կստանա Բաթում նավահանգստից օգտվելու իրավունք, որի համար չեն գանձվի հատուկ տուրքեր»[1]:

Այսպիսով Բաթումը հարակից տարածքներով՝ Թուրքիայի համար շահեկան պայմաններով տրվում էր Վրաստանին: Ըստ Բ. Հարությունյանի՝ Ռուսաստանին Թուրքիան այդ տարածքը տալիս էր Սուրմալուի գավառի դիմաց, որն ուներ 3750 կմ^2 տարածք: Ուրեմն, ըստ նրա 750 կմ^2 տարածքը Թուրքիան պետք է վերադարձներ, ինչն անում է Կարսի մարզից տալով Ամասիայի շրջանը, որը կազմում էր հենց այդքան[2]:

Այս ամենը Բ. Հարությունյանը համարում է մինչև Ալեքսանդրապոլի պայմանագիրը ռուս-թուրքական գաղտնի պայմանավորվածության արդյունք:

Այս առումով Բ. Հարությունյանի վերջնական եզրակացությունը հետևյալն է. «Թուրքիան զավթեց Հայաստանի Հանրապետությունից Սուրմալուի գավառը Խորհրդային Ռուսաստանի համաձայնությամբ, որի դիմաց վերջինս Վրաստանի ՍԽՀ-ին կցեց Բաթումի մարզի 3000 կմ^2 տարածք: Եվ քանի որ Սուրմալուի գավառն ուներ 3750 կմ^2 , ապա տարածքային տարբերությունը վերացվեց՝ Հայաստանի Հանրապետությունը զիջելով Աղբաբայի շրջանն ու Տիգնիս, Մեծ Ղմլու ու Ղըշըլ-դաշ գյուղերը՝ իրենց շրջակա տարածքով, որը, իրոք, կազմել է 750 կմ^2»[3]:

Կարելի է հետևյալ եզրահանգումը կատարել՝ **հայ-թուրքական սահմանագիծը բոլշևիկների և քեմալականների կողմից մինչև Ալեքսանդրապոլի պայմանագիրը նախորոշված էր և այդ ոչ օրինական պայմանագրի շահարկմամբ Մոսկվայի և ապա նրա կրկնօրինակ հանդիսացող Կարսի հոկտեմբերի 13-ի պայմանագրերով օրինականացվեցին հիշյալ տարածքների նվիրատվությամբ Թուրքիային** :

Մեզ մնում է այն հարցը ճշտել, թե արդյո՞ք հնարավոր է որոշել, թե Հայաստանի տարածքներըերը Ալեքսանդրապոլի պայմանագրով որքան քառ. կմ էին կազմում:

Հենց սկզբից շեշտենք, որ դա անհնար է որոշել և սխալվում են բոլոր նրանք, ովքեր հակառակն են պնդում: Այսպես, Գ. Գալոյանը հետևյալն է գրում. «Ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի, եթե այն ուժի մեջ մտներ

---

[1] **Ղազարյան Հ.,** Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Երևան, 2010, էջ 662, պայմանագիրն ամբողջությամբ տես Документи внешней политики СССР, том 3, Москва, 1958, стр. 597-604.

[2] **Հարությունյան Բ.,** Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերի համադրական քննության շուրջ, «Պատմաբանասիրական հանդես»,նշվ. համարը, էջ 56:

[3] Նույն տեղում, էջ 58:

Հայաստանը սահմանափակվում էր մոտ 10 հազար քառ. կմ տարածքում: Թուրքիային էր անցնում Արևելյան Հայաստանի 1914թ. սահմաններից ավելի քան 20 հազ քառ. կմ տարածք, այդ թվում՝ Կարսը, Սարիղամիշը, Արդահանը, Օլթին, Սուրմալուի գավառը, Կաղզվանը, Ալեքսանդրապոլը»[1]:

Ջ. Կիրակոսյանը մեր բազմիցս հիշատակած ժողովածուի Ալեքսանդրապոլի պայմանագրին վերաբերվող ծանոթագրություններից մեկում գրում է. «Ինչպես երևում է պայմանագրի հոդվածներից, Հայաստանի տերիտորիան սահմանափակվում էր Երևանի և Սևանա լճի շրջաններով»[2]:

Հ. Ղազարյանը մասնավորապես գրում է. «Ալեքսանդրապոլի պայմանագրի համաձայն՝ Հայաստանի տարածքը հավասարվում էր Բաթումի դաշնագրով նախատեսված տարածքին, այսինքն՝ շրջափակվում է Երևանի և Սևանա լճի սահմաններում»[3]:

Փաստորեն նա գրեթե նույն բանն է ասում, ինչ Ջ. Կիրակոսյանը: Եվ եթե ընդունված է, որ Բաթումի պայմանագրով Հայաստանը կազմում էր մոտավորապես 10 հազ. կմ^2, ապա՝ ստացվում է, որ նրանք Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանն էլ ընդունում են նույնքան:

Սակայն, ինչպե՞ս է հնարավոր չափել Հայաստանի տարածքը, եթե ա) ճշտված չէր Նախիջևանի և Զանգեզուրի միջև եղած սահմանը, բ) Զանգեզուրն անկախ քաղաքական միավոր էր և գտնվում էր Նժդեհի իշխանության տակ, գ) Ալեքսանդրապոլի գավառը, Կարսի մարզից հատկացվելիք տարածքը մնում էին թուրքերի կողմից ռազմակալած (թուրքական զորքերն այնտեղից հեռացան 1921թ. ապրիլի 22-ին միայն՝ խորհրդային իշխանության կտրուկ պահանջից հետո, դ) Լեռնային Ղարաբաղի կացությունն անորոշ էր, ե) պարզ չէր, թե ումն է անցնելու Լոռվա չեզոք գոտին:

Եզրակացությունը մեկն է՝ **Ալեքսանդրապոլի պայմանագրով Աղրբեջանի հետոչ մի վիճելի տարածքի խնդիր չէր կարգավորվում**:

Կուզենայինք նաև մի հարցադրում կատարել. **եթե Ալեքսանդրապոլում կնքվածը պայմանագիր էր և ոչ թե մի դատարկ, ոչինչ չասող վավերաթուղթ, ապա՝ ում միջև էր այն կնքված՝ Հայաստանի Հանրապետության որն այլևս չկար, թե Խորհրդային Հայաստանի, որի պատվիրակությունը չէ, որ ներկայացված էր Ալեքսանդրապոլում: Փաստորեն ոչ առաջինի և ոչ էլ՝ երկրորդի:**

Կարծում ենք, որ ավելորդ են բոլոր դատողությունները՝ կապված այս պայմանագրի հայերի համար ստրկական լինելու հետ: Որպես փաս-

---

[1] **Գալոյան Գ.,** Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923թթ., էջ 376:

[2] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 775:

[3] **Ղազարյան Հ.,** նշվ. աշխ., էջ 203:

տաթուղթ այն իսկապես ստրկական էր, բայց այն չիրականացավ, քանզի չվավերացվեց, թեպետ այդ պետք է արվեր մեկ ամսից[1]:

Ստրկական էին Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, որոնք Խորհրդային Հայաստանին չտվեցին ավելի լայն սահմաններ, ինչքան այն փաստաթուղթը, որն ստորագրվեց Ալեքսանդրապոլում՝ (նույն խորհրդային իշխանությունների մեղսակցությամբ) մնալով անվավեր, ի տարբերություն հիշյալ երկու պայմանագրերի, որոնք վավերացված են:

Ашот Нерсисян, Анализ Александропольского договора - Александропольский договор, подписанный 3 декабря 1920 года, неоднократно анализировался многими армянскими историками. Несмотря на это, пока нужны новые научные концепции. В статье делается попытка представить эти новые концепции путем изучения новых фактов. Это свидетельствует о том, что договор был подписан незаконным путем и границы РА практически не зафиксированы. Александропольский договор не ратифицирован. При этом уточняются территории, которые по этому соглашению должны были быть оставлены Армении.

Ashot Nersisyan, The Examination-analysis of the Alexandropol Treaty - The Alexandrapol treatey, signed in December 3 of 1920, was numerous times analised by many Armenian historians. Despite this, it needs new scientifical concepts yet. The article tries to present these new concepts by studying new facts. It proves that the treaty was signed using illegal way and the RA borders were not fixed practically. The Alexandrapol treaty was not ratified. At the same time, the territories that were supposed to be left to Armenia by that agreement have been specified.

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 99:

СВЯТОЙ ЭЧМИАДЗИН

ВАЛЕРИЙ ТУНЯН

Ключевые слова – Армения, Святой Эчмиадзин, монастырь, развитие, историография, Вагаршапат, Григорий Просветитель, католикос, Агатангеос.

Публикации отдельных деятелей являются ценным источником для воспроизведения исторических реалий Армянской Апостольской церкви. Некоторая их часть характеризуется незнанием общего происходящего процесса, либо конкретики. В то же время в них содержится важная информация относительно отдельных аспектов церковной деятельности, которая может представлять миссию первопрестола св. Эчмиадзина, давать ценные сведения.

В 1844 г. "Журнал Министерства внутренних дел" поместил статью Якова Арапетова "Эчмиадзинский монастырь".[1] Автор являлся служащим Министерства внутренних дел и вместе с ст. сов. В. Желтоуховым должен был надзирать процесс выборов католикоса всех армян на избирательном собрании 15 - 17 апреля 1843 г. в Эчмиадзине. Арапетов являлся зятем известной семьи Лазаревых желавших, чтобы руководитель Бессарабо-Нахичеванской епархии Нерсес Аштаракеци стал главой Армянской церкви. Арапетов имел встречи с армянскими деятелями в Тифлисе, Ереване и Эчмиадзине, проводя активную деятельность в пользу Нерсеса Аштаракеци.[2] По возвращении в С. Петербург состоялось награждение высшей властью орденом св. Анны Желтоухова и чином кол. асессора Арапетова, означающее успешное выполнение миссии.[3]

Статья "Эчмиадзинский монастырь" имела цель дать представление о духовном центре армянской церкви для русской общественности. Структурно она состояла из ряда положений: 1) место и время основания монастыря св. Григория, первосвятителя Армении; 2) местопребывание эчмиадзинских патриархов; 3) мусульманское владычество; 4) контакты эчмиадзинских католикосов с высшей властью России; 4) описание и достопримечательности Эчмиадзинского монастыря.

---

[1] **Арапетов Я.** Эчмиадзинский монастырь. - Журнал Министерства внутренних дел (ЖМВД), 1844, ч. VI, с. 208 - 243.
[2] **Тунян В. Г.** "Положение "Армянской церкви". Ереван, 2001, с. 69.
[3] Национальный архив Армении (НАА), ф. 400, по. 1, д. 48, л. 90 об.

Согласно историческому преданию, в 569 до н. э. царь Армении Ерванд I в области Котайк построил г. Ардимет или Анаит (Диа- ны). Позже он стал называться Вардкесаваном по имени владетеля князя Вардкеса, супруга сестры царя Ерванда I. Царь Тигран Великий (95-55 до н.э.) заселил город пленным еврейским населением, ставший вскоре центром ремесленничества и торговли. Царь Вагарш в конце II в. укрепил город крепостными стенами и назвал его своим именем - Вагаршапат, хотя имелось и другое название - Нор кахак (Новый город). Город стал политическим центром древней Армении и духовным, возникшего христианства: "Преемники Вагарша жили здесь до половины III века по Р. Х. Вскоре, развенчанная столица армянского царства была взята и разорена персами. Но на развалинах её почивала сила неодолимая. Здесь еще во время пребывания царей была основана столица туземного христианства, утвердилось первопрестольное святилище армянской церкви".[1]

Вагаршапат сохранился в качестве селения вокруг знаменитого Эчмиадзинского монастыря. История его создания представлена в духе армянской традиции. Преследования христиан при императоре Диоклианте в 300 г. заставили из Рима удалиться 37 св. дев во главе с Гаяне и Рипсиме. Царь Армении Трдат III также преследовал христиан, но влюбился в красавицу Рипсиме. Его чувства были отвергнуты, потому что был язычником. Разъяренный царь предал смерти часть дев и Рипсиме. После этого он заболел формой проказы ("свиное рыло"). Из-за неудачных лечений сестра царя Хосровидухт увидала вещий сон, что вылечить его может лишь св. Григорий Просветитель, который был брошен в Хорвирабскую тюрьму за верность христианству и за то, что был сыном Артака Партева, от которого погиб отец царя Хосров II. Царь Трдат III выполнил пожелание сестры и был вылечен. Затем в 301 г. св. Григорий в местечке Багаран у реки Арацани окрестил царский двор. Христианство стало окончательно официальной религией Армении, а её главой - Григорий Просветитель с титулом католикоса всех армян.

Необходимость преодоления сопротивления язычества привела св. Григория Просветителя к созданию центрального духовного храма - "Эчмиадзин", означающего место "сошествия", как торжества и значимости христианства. Армянский историк Агатангеос представляет чудесное наитие во время сна св. Григория: "Разверзается небо, и легион Ангелов нисходит, блистая в ослепительных лучах света. Впереди величественно спускается с небес светлый образ Мужа, высокого и могучего, внушающего

[1] Эчмиадзинский монастырь…, с. 209.

благовейный страх. Он держит в руках золотой молот, сокрушающий идольские капища, и светлозарным лучом с небес начертывает первообраз храма истинного Бога".[1] 303 г. св. Григорий Просветитель создал храм Эчмиадзин во имя девы св. Марии. С этого времени, по мнению Арапетова "первопрестольное хранилище христианства в Армении сохранилось до наших времен в первобытном своем"[2] состоянии.

После св. Григория Просветителя местопребыванием Эчмиадзинских патриархов стал Вагаршапат, который потерял статус столицы вплоть до мученической смерти католикоса Иосифа от персов в 454 г. "Беспощадное разорение" Эчмиадзина со стороны персов заставило патриархов переселиться в новую столицу Армении - г. Двин, где находились вплоть до 925 г. Восстановление независимости Армении от власти Арабского халифата при династии Багратуни сопровождалось переносом патриаршей кафедры в новую столицу - г. Ани, где насчитывалось до 100 тыс. домов и до 1000 церквей. Падение Анийского царства в 1045 г. привело к переносу резиденции католикосов в армянскую Киликию. Вначале она находилась в горной крепости Ромокла (1148-1294), а затем в г. Сисе (1294 -1340). Положение католикосов ухудшилось после захвата Сиса египетскими мамелюками 16 апреля 1375 г. и пленения армянского царя Левона VI Лузиньяна.

Такое состояние Эчмиадзинских патриархов Арапетов определяет как скитальческий период, который сопровождался появлением партикулярных патриархов - "совместников": "Со странствовавшим таким образом патриархатами возникали беспрерывно совместники в разных местах, бывших резиденциями Первосвященников: в Ани, в Себастии и, наконец, в Ахтамаре, городке, стоящем на острове озера Ван".[3] Подразумевалось назначение католикосов со стороны армянских царей Ани, Васпуракана и Киликии. В 1404 г. католикосом стал Акоп III Сисский при поддержке мамелюкских владетелей, который, однако, проводил общенациональную церковную политику. Он лишил Ахтамарский католикосат общенационального статуса, преобразовав в партикулярный, и принял титул "Католикос всех армян и Вагаршапата". Это означало необходимость признания со стороны партикулярных патриархов Ахтамара и Алуанка (Гандзасар) св. Эчмиадзина в качестве духовного центра.[4]

---

[1] Там же, с. 211.

[2] Там же.

[3] Там же, с. 213.

[4] Всеармянские католикосы. Под ред. П. Ованнисяна. Ереван, 2001, с.106 - 110, 114, 122, 124, 170. – На арм. яз.

Отсутствие государственности обусловило появление “спасительной мысли” о необходимости возвращения кафедры св. Григория Просветителя в Эчмиадзин. В 1439 г. Эчмиадзинский собор предложил киликийскому католикосу Григорию IX перенести престол из Сиса в Эчмиадзин. Встретив отказ, Эчмиадзинский собор в 1441 г. в Вагаршапате избрал верховным католикосом всех армян Киракоса Вирапеци, настоятеля Вирапского монастыря. Этот акт осуществили четыре первенствующих престолов святителя Армении - Татевского, Питчинского, Ахшатского монастырей и монастыря св. Фадея, которым традиционно принадлежало право утверждения патриархов. Решение Эчмиадзинского собора сочтено дальнозорким: “С того времени Эчмиадзин после тысячелетнего запустения снова сделался первопрестольным святилищем всей церкви Армянской, каким остается и доныне”.

По мнению Арапетова, отсутствие глав церкви в Эчмиадзине оставило свой отпечаток в армянской истории: “Тысячелетнее отсутствие Первосвященников Армянских от своей древней законной кафедры оставило следы, которые и теперь еще не изгладились”.[1] Отрицательным последствием указывается формирование церковной системы управления из партикулярных католикосов и патриархов. Еще в VI в. возникло Иерусалимское армянское патриаршество, связанное с активностью - армянских богомольцев, для нужд которых имелось уже 70 монастырей. К Ахтамарскому католикосу с 1113 г. (на острове Ахтамар озера Ван патриарший престол находился в 927-947 гг.), прибавился новый.[2] Карапет Евдокаци в 1446 г. провозгласил самостоятельность Киликийского католикосата, ставшего антипрестолом. Возникла также патриархия Константинополя с 1461 г., под контролем которой находились армяне Османской Турции. Католикосы Ахтамара и Сиса лишь в духовном отношении подчинялись католикосу Эчмиадзинскому как ”единственному правильному преемнику св. Григория, освящаемому возложением нетленной руки Просветителя, которая хранится в Эчмиадзине”. Исключительной прерогативой верховного католикоса являлось варение св. миро в Эчмиадзине и посвящение в сан епископа.[3]

Структура высшего управления армянской церкви показывала нахождение нации в составе различных держав, что получило отражение в начале XIX в., когда Россия приобрела право на участие в утверждении католикоса всех армян наряду с Персией и Турцией. В декабре 1815 г. ка-

[1] Эчмиадзинский монастырь…, с. 214.
[2] **Петросян Е.** Армянская апостольская святая церковь.Св. Эчмиадзин, 2008, с. 65 - 68.
[3] Эчмиадзинский монастырь…, с. 215.

толикос всех армян Епрем Дзорагехци преобразовал Агванское патриаршество в митрополию, что диктовалось необходимостью пресечения местных распрей и усиления значения главы армянской церкви в ходе противоборства России и Персии за доминирование в регионе. В то же время Османская Турция, учитывая возрастание влияния России на Эчмиадзин, не признала полномочий католикоса Епрема.[1] Вытекающие из этого последствия носили объективный характер, отражая состояние исторического развития армянской государственности и нации.

Учитывался факт нахождения армянской нации в составе различных держав и место главной святыни христианства. В 1833 г. Иерусалимский патриарх именовал католикоса Иоаннеса Карбеци главой национальной церкви: "Христовенчанный Святой Верховный Владыка, достойный викарий апостольского отца армянской церкви св. Просветителя Григория и наместника Господа нашего Иисуса Христа". Собор константинопольских армян 1842 г. по случаю избрания нового католикоса, фокусирует значимость Эчмиадзинского католикоса и его местопребывания: "Иерарх всех армян", а Эчмиадзин именуется "светом всех церквей Армянских".[2]

Во время мусульманского владычества первенствующее значение Эчмиадзинского престола стеснялось шахами Персии, османскими султанами и местными правителями. Это обусловило интерес к России как избавительницы от иноверцев. В начале Гандзасарский патриархат Карабаха установил связи с Петром Великим. Затем Эчмиадзинский католикос Симеон Ереванци направил к Екатерине II архимандрита Давида для получения покровительства. Императрица санкционировала нахождение российских армян в духовной зависимости от Эчмиадзинского католикоса с правом назначения архиепископов и посылкой нвираков для сбора добровольных приношений. Местным архиепископом стал И. Аргутинский, содействовавший переселению крымских армян на юг России, где был создан г. Новый Нахичеван, а в 1796 г. он был участником Восточного похода графа Валериана Зубова в Закавказье. За свою активную деятельность Аргутинский был награжден орденом св. Анны I первой степени. По инициативе католикоса Гукаса Карнеци глава российских армян в 1798 получил грамоту от императора Павла I с подтверждением привилегий Эчмиадзина в России. Дано повторное указание константинопольскому послу России от 1781 г. оказывать содействие уполномоченным католикоса, посылаемым в Османскую империю.

---

[1] **Тунян В. Г.** Церковная политика самодержавия в Закавказье в I п. XIX в. Ереван, 2005, с. 22, 23.

[2] Эчмиадзинский монастырь…, с. 216.

При этом России приходилось учитывать, что назначение католикосов Эчмиадзина осуществлялось фирманами шаха Персии и бератами султана Османской Турции. В берате излагались привилегии армянского народа в Турции: свобода богослужения, роль Армянской церкви и прочее. Утвердительный берат стоил 10800 пиастров. Россия впервые приняла участие в избрании иерарха Аргутинского главой Армянской Апостольской церкви. Константинопольские армяне хотели избрать архиепископа Даниеля, но он был в опале у Высокой Порты. Русский посланник в Порте В.Томара добился берата в пользу Владыки Иосифа.[1]

Скоропостижная кончина князя Иосифа в Тифлисе привела к конфликту патриархов Даниела и Давида. Самодержавие остановило свой окончательный выбор на католикосе Даниеле, которого в 1808 г. наградило орденом св. Анны I. Преемником Даниела, согласно его желанию, стал архиепископ российских армян Епрем Дзорагехци. Он получил утвердительную грамоту от Русского двора, наследника Персидского престола Аббас Мирзы, но встретил отказ от Высокой Порты. В октябре 1827 г. русские войска заняли Ереванскую крепость и обеспечили безопасность Эчмиадзина.Это явление сочтено выдающимся: "Святилище Эчмиадзинское освободилось из-под четырнадцативекового уничтожения под игом врагов Креста Христова. Оно приобщилось к составу сильной Хриистианской державы".[2]

На протяжении представленного исторического времени Эчмиадзинский монастырь переживал определенные бедствия. При ослаблении власти царя Аршака IV в 380 г. персы, вторгшись в Армению захватили и разрушили Вагаршапат. Спустя три года он был восстановлен полководцем Ваганом Мамиконяном, с первоначальным состоянием храма Эчмиадзина. После удаления католикосов из Эчмиадзина глава армянской церкви Нерсес II (548-557)[3] основал здесь монастырь. В 618 г. католикос Комитас заменил деревянный купол Эчмиадзина каменным. В конце IX в. арабский востикан захватил все богатства Эчмиадзина, а монахов предал смерти. Еще большая угроза нависла в 1605 г., когда персидский Шах-Аббас, переселивший более 600 тыс. армян, решил перенести в разобранном виде храм Эчмиадзина в Персию. Местопребыванием должно было стать предместье столицы г. Испаган, именуемое Новою Джульфою, где жили переселенные

[1] Архив внешней политики России (АВПР), ф. Армянские дела. 1780-1801, д. 184, л. 198.

[2] Эчмиадзинский монастырь…, с. 217.

[3] Время правления католикоса Нерсеса II Багревандеци в тексте указано с 524 по 533 гг.. - Эчмиадзинский монастырь…, с. 220.

армяне из г. Джульфа на р. Аракс. Было вы- везено несколько камней, служивших основанием алтаря.

Начались ремонтные и восстановительные работы. Католикос Мовсес II Татевци (1629-1632) отремонтировал Эчмиадзинский храм. Вокруг монастыря была построена высокая каменная стена с восемью башнями. Церковное строительство довершил преемник Филиппос (1632-1655), который в 1654 г. построил у главных западных ворот храма колокольню с оригинальной архитектурой. В 1682 г. Егиазар I Айнтапци (1681-1691) построил еще три колокольни. Под ними в храме было созданы два новых предела: Иоанна Предтечи - для одевания избранного католикоса и первомученика Степана - для миропомазания католикоса. Перед "ичман тех", где явилось видение св. Григорию Просветителю, был построен новый алтарь во имя сошествия Единородного (Эчмиадзин), который был окружен медной решеткой при католикосе Абрааме в 1732 г. Он же основал еще два престола во имя св. Якова апостола и св. Гр. Просветителя. Довершил устройство Эчмиадзинского храма католикос Хазар в 1750 г., возведя новый патриарший дворец Газарапат - четырехугольное здание для приезжих богомольцев.

Во время посещения Эчмиадзина Арапетовым в 1843 г. храм впечатлял своим библейским воздействием пятнадцативековой святыни: "Не столько своею наружною красотою, сколько святостью своих воспоминаний и тем характером древности, которым весь, так сказать, дышит и который составляет его главное неоцененное достоинство. Наружность храма, несмотря на все бедствия, коим он многократно подвергался, свято сохранилась в том самом виде, какой дал ему св. Просветитель".[1]

Уделено внимание достопримечательностям Эчмиадзинского храма: большое серебряное Распятие; патриарший престол, сделанный из орехового дерева и украшенный перламутром; образ Богоматери; образ снятия с Креста Спасителя. Представлены святые мощи: 1) копье, пронзившее ребро Спасителя; 2) нетленная десница св. Гр. Просветителя; 3) частица Ноева Ковчега; 4) череп св. Рипсиме, обнесенный серебром; 5) частица от Креста Иисуса Христа; 6) десница св. Якова Мцбинского; 7) десница первого апостола Фадея (Тадевоса); 8) десница Матвея Евангелиста и 9) десница апостола Фомы (Бардугимеоса).

Дано описание патриаршего дворца из двух отделений: в первом находились служащие, а в другом - католикос. Представлено здание

Эчмиадзинского Синода, открытого в 1837 г., где в центре находился большой зал, олицетворявший самодержавную власть, и канцелярия

[1] Эчмиадзинский монастырь…, с. 218.

Синода. Смежным с патриаршим дворцом являлось здание библиотеки, приведенное в приличный вид епископом Ованесом Шахатуновым. Каталог библиотеки, включавший около 500 сочинений, был направлен в С.-Петербург, где академик М. Броссе осуществил перевод на русский и французский языки. Важными достоинствами библиотеки указывались духовный характер и использование национального алфавита, составленного в начале V в. Месропом Маштоцом, что позволило сохранить ценные сведения о Востоке. Книгопечатание в Армении стало осуществляться с 1565 г.

Объяснение малого состава Эчмиадзинской библиотеки имело прямую связь с иноземными нашествиями и правлениями. Так, грозный Тамерлан в 1380 г. приказал собрать армянские рукописи и направить их в Самарканд. Среди хранившихся рукописей выделена Библия V в., известная точностью перевода. Имелись работы греческих авторов, сохранившихся лишь на армянском языке.

Представлено экономическое состояние Эчмиадзинского монастыря на основе сведений труда епископа О. Шахатуняна "Описание св. Эчмиадзина и пяти уездов Арарата",[1] рассматриваемого "прекрасным руководством",[2] а также статистической записки прокурора Эчмиадзинского Синода Ф. Корганова о положении армянского духовенства в Закавказье.[3] Отмечено наличие пяти церковных деревень - Вагаршапата, Ошакана, Мастара, Егварда, Мугни и имений в Грузии. В них имелось 4566 крестьянских душ, которые в Армянской области платили подушную подать по 2 руб. 50 коп. сер.; вносили хлебную подать натурою и платили со всех земных произведений одну пятую часть урожая. Помимо этого, в городах находилось 8, а в деревнях - 30 фруктовых садов, сдаваемых в аренду: 159 лавок в разных местах и 15 домов, а также мельницы. Все недвижимое имущество Эчмиадзинского монастыря оценивалось в 114412 руб. сер.

Доход от монастыря в 1842 г. составил 10605 руб. От богомольцев поступило 7869 руб. сер. Весь доход оценен в 18472 руб. сер. Помимо этого, с 1840 г. в С.-Петербургском заемном банке имелось денежных капиталов на сумму 20 тыс. руб., а в Английском заемном банке Индии - 25 тыс. рупий (15 тыс. руб. сер.) Братство Эчмиадзинского монастыря в

[1] **Шахатунян О.**, Описание св. Эчмиадзина и пяти уездов Арарата. Эчмиадзин. 1842. - На арм. яз.

[2] НАА, ф. 400, оп. д. 46, л. 56 об.

[3] Российский государственный исторический архов (РГИА), ф.1268, оп. 1, 254, л.8.

1843 г. имело 34 священнослужителя: 5 архиепископов, 7 епископов, 7 архимандритов и 15 монахов.[1]

Таким образом, очерк Я. Арапетова содержит ценную информацию об Эчмиадзинском храме и истории армянской церкви для русской общественности, основанную на армянских источниках. Представлена канва исторического возникновения, состояния и развития. Отсутствие католикосов в Эчмиадзине и вытекающие из этого последствия носили объективный характер, отражая состояние исторического развития армянской государственности и нации. Очерк свидетельствует о наличии значительного объема информации об армянской церкви, находящейся в распоряжении внутриполитического ведомства. Некоторые шероховатости событий и датировки имеют связь с уровнем развития представлений об Армянской церкви.

Վալերի Թունյան, Սուրբ Էջմիածին - Ռուսաստանի ներքին գործերի նախարարության աստիճանավոր Հ. Արապետովի “Էջմիածնի վանքը” (1843 թ.) նկարագրությունը պարունակում է զգալի չափով արժեքավոր և հետաքրքիր նյութեր Հայոց առաքելական եկեղեցու և հայ հասարակության զարգացման վերաբերյալ.առկա վրիպումները կապ ունեն ժամանակի պատմագիտական գիտելիքների զարգացման հետ.

Valeri Tunyan, Mother See of Holy Etchmiadzin - H. Arapetov of the Russian Ministry of Internal Affairs wrote a description of "Echmiadzin Monastery," which contains a lot of valuable and exciting materials. The latter includes the existing mistakes on the development of the Armenian Apostolic Church and the Armenian society that are related to the development of the historical heritage of the time.

[1] Эчмиадзинский монастырь…, с. 221.

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃԻ ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԸ. ԱՄՆ ՕՐԻՆԱԿԸ

ՄԱՐԻԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր - Նախընտրական հեռուստաբանավեճ, խնդիր, հանգուցային նշանակություն, խնդիրների տնօրինում, խնդիրների հետ կապված դիրքորոշում, խնդիրների ակներևություն, հանրային օրակարգ:

Նախընտրական հեռուստաբանավեճի գոյության սկզբնական և հիմնական շարժառիթը թեկնածուին ընտրողների հնարավորինս լայն խմբի միաժամանակյա ներկայացման հնարավորությունն է, և քաղաքական ուժերի համար այդ ներկայացումը ի սկզբանե ունի միայն մեկ նպատակ՝ «վաճառել սեփական թեկնածուին», ապահովել նրա հաղթանակն ընտրություններում, որի համատեքստում էլ ի հայտ են եկել «քաղաքական մարքեթինգ» և «քաղաքական PR» երևույթները:

Նախընտրական հեռուստաբանավեճը ***այն կենտրոնական հանգույցն է***, որտեղ հեռարձակողի նախասահմանած կանոնների համաձայն ներկայացվում է հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական զարգացման վեկտորների, կարիքների, հեռանկարների խտապատկերը, որն իր հերթին ընտրողին թույլ է տալիս ստանալ գիտելիքներ, ստուգել և համեմատել սեփական պատկերացումները մրցող թեկնածուների պատկերացումների հետ, հարել նրանց քաղաքական հայացքներին կամ նույնականացնել սեփական հայացքները մրցող թեկնածուներից մեկի հայացքների հետ և դրա արդյունքում կայացնել որոշում: Բոլոր այդ հանգամանքները լուսաբձակի տակ դնելու հնարավորությունը մենք անվանում ենք հեռուստաբանավեճի ***հանգուցային նշանակություն***՝ հաշվի առնելով, որ երևույթը երևան է բերում միաժամանակ քաղաքական, սոցիալ-տնտեսական և հաղորդակցական, իմա՝ տեղեկատվական-լրատվական հայեցակետերի մի բարդ համախումբ:

Ներկայացվող հոդվածում ԱՄՆ-ի օրինակի հիման վրա դիտարկելու ենք նախընտրական հեռուստաբանավեճի վերոնշյալ **հանգուցային**

նշանակությունը՝ առաջադրելով և պարզաբանելով հետևյալ մի քանի հարցադրումները.

1) հաշվի առնելով վերջին տասնամյակներում քաղաքական գործընթացներում լրատվամիջոցների և մասնավորապես՝ հեռուստատեսության դերի մեծացման աստիճանը՝ կարո՞ղ է արդյոք մեդիան առհասարակ դիտարկվել որպես առանձին դերակատար ընտրություններում՝ տեղակայվելով թեկնածուի և ընտրողների միջակայքում և դառնալով առանձին կողմ թեկնածու-մեդիա-ընտրող հարաբերության մեջ,

2) ինչպե՞ս են սահմանվում այն խնդիրները, որոնց շուրջ պիտի բանավիճեն թեկնածուները և որոնք պիտի համապատասխանեն ընտրողների սպասելիքներին, ովքե՞ր են այդ խնդիրները սահմանողները՝ թեկնածունե՞րը, նրանց թիմե՞րը (կուսակցությունները), լրագրողնե՞րը, թե՞ ընտրողները,

3) ո՞ր չափով է արդյունավետ հետադարձ կապը թեկնածուից ընտրող և ինչպե՞ս են չափվում և ինչպիսի՞ դերակատարություն ունեն հանրային տրամադրությունները,

4) ո՞ր չափով են հեռուստաբանավեճում հանդես եկող լրագրողների պանելային խմբերն իրենց հարցադրումներով օգնում ընտրողին ճանաչել թեկնածուներին և նրանց ծրագրերը և նպաստում ընտրության օբյեկտիվ ելքին,


5) առկա՞ են արդյոք ռիսկեր թեկնածուներ-լրագրողներ-ընտրող հարաբերության մեջ ի վնաս կողմերից մեկի կամ մի քանիսի:

Ամերիկյան գիտական շրջանակներում հեռուստաբանավեճի բովանդակային կողմի առնչությամբ ընդունված է տարբերել ***խնդիրներ (issues), խնդիրների տնօրինում (issue ownership), խնդիրների հետ կապված դիրքորոշում (issues position), խնդիրների ակներևություն (salience of issues) և հանրային օրակարգ (public agenda)*** հասկացությունները: Խնդիրները ներքին և արտաքին քաղաքականության այն առաջնահերթություններն են, որոնց առջև կանգնած է երկիրը տվյալ ժամանակահատվածում: Թեկնածուներից ակնկալվում է խնդիրների տիրապետում և դրանց շուրջ լուծումների տեսլական: Տիրապետումն ու լուծումների տեսլականը, իսկ գործող նախագահ-թեկնածուի պարագայում՝ նաև իր փորձը և կոնկրետ խնդիրների լուծման ուղղությամբ ներդրված ջանքերը՝ կատարողականը (performance), հենց այդ խնդիրների տնօրինման աստիճանն է[1]: Խնդրի վե-

[1] Խնդիրների տնօրինման տեսությունը (Issue Ownership Theory) զարգացում է ստացել 1990-ական թվականներից սկսած: Տեսության հիմնադիրը Ջոն Պետրոսիկն է Կալիֆորնիայի համալսարանից, այս ուղղությամբ նրա առաջինն ուսումնասիրությանը ծանոթանալու համար տե՛ս J. R. Petrocik, Issue Ownership in Presidential Elections, with a 1980 Case Study, *in* American Journal of Political Science, Vol. 40, No 3, 1996, էջ 825-850: Տե՛ս

րաբերյալ հստակ կարծիք ունենալը թեկնածուի դիրքորոշումն է այդ խնդրի առնչությամբ: Խնդիրների ակներևությունը որոշակի մի ժամանակակետում դրանց կարևորության աստիճանն է, խնդիրները կարող են ակներև դարձնել. ա) թեկնածուները՝ ելնելով իրենց նախընտրական մարտավարություններից, քաղաքական, աշխարհաքաղաքական և տնտեսական իրավիճակից, բ) լրագրողներն ու լրատվամիջոցները՝ ելնելով նրանց կարծիքով այս կամ այն խնդրի առաջնահերթության աստիճանից: Որևէ խնդիր կարող է նաև ակներև դարձվել արհեստական եղանակներով, այսինքն՝ առաջնահերթություն չունեցող խնդիրը կարող է ներկայացվել իբրև առաջնահերթ: Հանրային օրակարգը թեկնածուների կողմից առաջադրված խնդիրների, դրանց նկատմամբ իրենց մոտեցման և հանրության կողմից դրանց տրվող գնահատականի ամբողջությունն է:

Այս սահմանումները հիմք ընդունելով՝ փորձենք պատասխանել վերը առաջադրված հարցերին: Դրանցից հիմնականը առաջինն է՝ արդյո՞ք կարելի է լրատվամիջոցները և մասնավորապես հեռուստատեսությունը համարել առանձին դերակատար կամ կողմ, մյուս հարցադրումները, ըստ էության, այս հարցի լրացումներն են կամ մանրամասնումները: Այս հարցադրմանը դրական պատասխանելը կնշանակի հեռուստատեսությունը և ընդհանրապես ՋԼՄ-ները միջոցի կարգավիճակից փաստորեն բարձրացնել առանձին լիիրավ՝ թեկուզ միջնորդական կողմի կարգավիճակի և թեկնածու-հեռուստատեսություն-ընտրող կապը դիտարկել ոչ թե որպես գծային, այլ որպես եռանկյունատիպ հարաբերություն (ինչպես պատկերված է գծապատկերում): Այսպիսի մոտեցումը հարցին ունի գոյության իրավունք՝ հաշվի առնելով հեռուստատեսության որոշ իմաստով «պետության մեջ պետություն» լինելու կարգավիճակը և այն արդյունքը, որ կարող է լինել թե՛ ընտրարշավի ընթացքում թեկնածուների վարկանիշի վրա ազդելու, թե՛ ընտրությունների ելքի տեսանկյունից: Եվ հաջորդ հարցադրումների քննությունը ավելի է ամրապնդում հեռուստատեսության առանձին կողմ լինելու հանգամանքը:



Ցանկացած պետության մեջ առաջնահերթ խնդիրների սահմանման հարցում կարևոր է հասարակական-քաղաքական բոլոր դերակատարների ներգրավվածությունը: Քաղաքական առումով, սակայն, խնդիրների

նաև **J. R. Petrocik, W. L. Benoit, G. J. Hansen,** Issue Ownership and Presidential Campaigning, 1952 – 2000, *in* Political Science Quarterly, Vol. 118, No 4, 2004, էջ 599-626:

սահմանումը լուծումներ առաջարկելը առավելապես քաղաքական կուսակցությունների իրավասության շրջանակներում է: Յուրաքանչյուր երկրում խոշոր կուսակցություններն ունենում են ներքին և արտաքին քաղաքականության հետ կապված խնդիրների և լուծման առաջարկների իրենց համախումբը. «Ընտրողները, - նշում են Պետրոսիկը, Բենուան և Հանսենը, - կարևորություն են տալիս (երբեմն՝ շատ բարձր կարևորություն) գրեթե բոլոր խնդիրներին և ի վիճակի են տարբերություն տեսնելու քաղաքական կուսակցությունների կողմից դրանք «ամրագրելու» կարողությունների մեջ: Գաղափարական ընտրողները կարող են հստակ պատկերացում ունենալ առ այն, թե որդեգրված քաղաքականություններից որոնք են ավելի արդյունավետորեն լուծում այս կամ այն խնդիրը, սակայն ընտրողների մեծամասնությունը պրագմատիկ և գործիական (instrumental) մոտեցում ունի և առավելապես հետաքրքրված է խնդիրներն «ամրագրելու» առումով ու տարբերություն է տեսնում այդ հարցում կուսակցությունների մոտեցումների մեջ: Ընտրողներին համոզելու տեսանկյունից խնդրի տնօրինումը թեկնածուի էական առավելությունն է, որովհետև այդ խնդիրների լուծմանը լծված կուսակցության հետ նրա պարզ հարաբերումը բարձրակարգ քաղաքականությունների իրականացման ունակության ցուցիչ է: Համբավը կարևոր է, որովհետև թեկնածուի ընտրության էական և վճռորոշ բաղադրիչը ոչ թե այն քաղաքականություններն են, որոնց թեկնածուն խոստանում է հետամուտ լինել, այլ խնդիրները լուծելու կառավարության կարողությունը»[1]:

Հետևելով Ռոբերտ Ֆրիդենբերգին՝ կարելի է առանձնացնել հեռուստաբանավեճում արծարծվող խնդիրների հետ կապված երեք հիմնական նպատակ (issue-related goals): Առաջին՝ թիրախավորել ընտրողների այնպիսի խմբեր, որոնք թեկնածուների հաջողության համար կարևոր նշանակություն ունեն: Թեկնածուներն այս պարագայում փորձում են ընտրել այնպիսի խնդիրներ, որոնց նկատմամբ տվյալ խմբերն առանձնահատուկ զգայունություն ունեն: Երկրորդ՝ զարգացնել այնպիսի լայն և ներառական թեմաներ, որոնցում շատ ընտրողներ կկարողանան իրենք իրենց նույնականացնել: Երրորդ, բանավիճել չպարտվելու համար[2]: «Նախընտրական հեռուստաբանավեճերը դարձել են ողջ ընտրարշավի երևի թե ամենակարևոր 90 րոպեները, և թեկնածուները դրան գալիս-հասնում են իրենց, իրենց ընտանքների և թիմերի տարիների ջանքերից հետո: Քիչ թեկնածու-

[1] **R. Petrocik, W. L. Benoit, G. J. Hansen**, Issue Ownership and Presidential Campaigning, 1952 – 2000, *in* Political Science Quarterly, Vol. 118, No 4, 2003-2004, p. 601.

[2] Տե՛ս **R. V. Friedenberg,** Patterns and Trends in National Political Debates: 1960-1996, *in* Rhetorical Studies of National Political Debates – 1996 (edited by R. V. Friedenberg), Praeger, Westport, Connecticut, London, 1996, էջ 66-68:

ներ են […] պատրաստ, ռիսկերի գնալով, խոսել ավելի լայն լսարանի առջև, քան երբևէ խոսել են, խոսել այնպիսի իրավիճակներում, որոնք շատ ավելի դրամատիկ կարող են լինել, քան հնարավոր այլ հաղորդակցական իրավիճակներ: Նույնիսկ ընտրարշավի առաջատարների համար համապետական բանավեճի բարձր հարթակում ռիսկերը պարզապես շատ մեծ են» - նշում է Ֆրիդենբերգը[1]: Իսկ թեկնածուների հիմնական մարտավարական նպատակը ընտրարշավերի ընթացքում հնարավոր ռիսկերը նվազեցնելն է և առավելագույն օգուտներ ստանալը[2]:

Պատմական, գաղափարախոսական կամ այլ նկատառումներով, յուրաքանչյուր կուսակցություն որոշ իմաստով մասնագիտանում է այս կամ այն խնդրի մեջ: Այսպես՝ ԱՄՆ-ում հանրապետականները դիտվում են որպես ամերիկյան ավանդական արժեքների, ցածր հարկերի, կառավարության կազմի փոքրաթիվության և ազգային անխոցելի անվտանգության ջատագովներ, իսկ դեմոկրատները՝ սոցապահովության արդյունավետ համակարգի, գործազրկության նվազման, շրջակա միջավայրի պահպանության և փոքրամասնությունների շահերի ջատագովներ[3]: Խնդիրները տնօրինելու համբավը, սակայն, հավերժ կամ անփոփոխ չէ.կուսակցությունը կարող է որևէ երկարաժամկետ լուծում պահանջող խնդրի հետ կապված կորցնել իր առավելությունը. կարճաժամկետ հանգամանքները, օրինակ՝ արտաքին քաղաքականության ձախողումները կամ տնտեսական անկումները, կարող են կուսակցությանը զրկել իր առավելություններից: Կարող է ստացվել այնպես, որ համընդհանուր դրական վերաբերմունք վայելող թեկնածուն դիտվի որպես խնդիրը լուծելու ունակ, եթե նույնիսկ այդ խնդիրն ավանդաբար իր կուսակցության տիրույթում չէ, և հաղթի ընտրություններում[4]: Այն թեկնածուները, որոնք ունակ են ընտրարշավի օրակարգ սահմանել, հստակ առավելություն ունեն այն թեկնածուների նկատմամբ, որոնք գործում են մրցակից թեկնածուի սահմանած օրակարգի ներքո[5]: ԱՄՆ-ում թեկնածուները հիմնականում աշխատում են մնալ իրենց կուսակցությանը վերապահվող խնդիրների շրջանակներում: Որոշ հետազոտողներ նշում են *խնդիրների համաձայ-*

---

[1] **R. V. Friedenberg,** նշվ. աշխ. , էջ 68:

[2] Տե՛ս **L. R. Jacobs, R. Y. Shapiro**, Issues, Candidate Image and Priming: the Use of Private Polls in Kennedy's 1960 Presidential Campaign, *in* American political Science Review, Vol. 88, No.3, 1994, էջ 527-540:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 528:

[3] Տե՛ս **R. Petrocik, W. L. Benoit, G. J. Hansen,** նշվ. աշխ. էջ 603:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս **D. A. Damore,** The Dynamics of Issue Ownership in Presidential Campaigns, *in* Political Research Quarterly, Vol. 57, No 3, 2004, էջ 391:

նեցման (issue convergence) կամ *ընտրաշրջավային երկխոսության* (campaign dialog) մասին[1]՝ էմպիրիկ հետազոտությունների միջոցով պարզելով այն փաստը, որ նախընտրական հաղորդակցական արշավներում յուրաքանչյուր կուսակցության թեկնածու ընտրարշավի ընթացքում հանդես է գալիս որպես խնդիրների որոշակի մի խմբի առաջատար, որի արդյունքում որոշակի հավասարակշռություն է ստեղծվում, այսինքն՝ օրինակ պաշտպանության, հարկային քաղաքականության, առողջապահության վերաբերող խնդիրները մի թեկնածուի տիրույթում են, սոցապահովությանը, կրթությանը, շրջակա միջավայրին վերաբերող խնդիրները՝ մյուս: Կուսակցությունների և թեկնածուների այդ մոտեցումն առաջին հերթին, իհարկե, ունի մարտավարական նշանակություն.թեկնածուները երբեք չեն ցանկանա բարձրացնել այն խնդրի ակներևության աստիճանը, որը մրցակցի տիրույթում է, ինչով կնպաստեն մրցակցի հաջողությանը և սեփական ձախողմանը[2]: Խնդիրների տնօրինման տեսությունը կառուցվում է հենց այս վերջին հանգամանքի շուրջ: Բացի նշված հանգամանքից, ինչպես արձանագրվել է 1984 թվականին Ռեյգան-Մոնդեյլ մրցավազքի ժամանակ, թեկնածուները նույն խնդրին վերաբերող հարցին ի պատասխան հնչող իրենց մեկնաբանություններում հաճախ հակված են լինում շեշտադրել այլ՝ շատ տարբեր խնդիրներ՝ այդպիսով հարցադրումը բերելով իրենց տիրույթ և շեշտելով իրենց հիշատակած խնդիրների կարևորությունը.«Այդ խնդիրները, - նշում են Դեվիդ Լանուն և Պետեր Շրոտը, - և դրանք ներկայացնելու թեկնածուների հաջողությունը մեծ հավանականությամբ ձևավորում են հանրության վերաբերմունքը մրցավազքի նկատմամբ»[3]:

Խնդիրների համաձայնեցման հանգամանքը ամրապնդում հեռուստաբանավեճի ձևաչափի նկատմամբ առաջ է բերում որոշ չափով արդարացված թերահավատություն: Փաստորեն, եթե արտառոց կամ միտումնավոր որևէ բան տեղի չունենա, թեկնածուներից յուրաքանչյուրը մնում է իր թեմաների ներսում և խոսում իր կուսակցության համբավը ամրապնդող խնդիրներից, ըստ էության, թեկնածուների տեսակետերի բախում տեղի չի ունենում միևնույն խնդրի շուրջ. «Մամուլի անդրադարձները միաձայն նշում են ժամանակակից ամերիկյան քաղաքական արշավնե-

[1] Տե՛ս **Kaplan, D. K. Park, T. N. Ridout,** Dialog in American Political Campaigns? An Examination of Issue Convergence in Candidate Television Advertising, *in* American Journal of Political Science,Vol. 50, No 3, 2006, էջ 724-736: Տե՛ս նաև L. Sigelman, E. H. Buell, Jr., Avoidance or Engagement? Issue Convergence in U.S. Presidential Campaigns, 1960-2000, *in* American Journal of Political Science, Vol. 48, No 4, 2004, էջ 650-661:

[2] Տե՛ս **N. Kaplan, D. K. Park, T. N. Ridout,** նշվ. աշխ. , էջ 724:

[3] **B. J. Lanoue, P. R. Schrott,** Voters' Reactions to Televises Presidential Debates: Measurement of the Source and Magnitude of Opinion Change, *in* Political Psychology, Vol. 10, No 2, 1989, p. 283.

րում խնդիրների իմաստալից քննարկման ակնհայտ պակասի մասին», - նշում է Կապլանն-Պարկ-Ռայադաուտ հեղինակային խումբը[1]: Այս հետազոտողների կարծիքով ժողովրդավարության տեսության տեսանկյունից մրցակցային ընտրություններն անհրաժեշտ են ընտրարշավային երկխոսության համար, և իրապես մրցակցային արշավներում խնդիրների համաձայնեցում չպիտի լիներ[2]:

Սակայն որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ թեկնածուները, այնուամենայնիվ, երբեմն հակված են հատելու սահմանը և մտնելու մրցակցի տիրույթ (issue trespassing), նույնիսկ եթե այդպիսի ձեռնարկը իրենց հաջողության երաշխավորը չէ: Դեվիդ Դեմորնը նշում է, որ թեկնածուները կարող են իրենց արշավի ուղերձների բովանդակությունը հարմարեցնել երկրում առկա տրամադրություններին, և երբ հանրային տրամադրությունները նպաստավոր չեն թեկնածուի կուսակցության կողմից որդեգրված խնդիրների խումբն առաջ մղելու համար, նա կարող է արծարծել այդ խմբից դուրս եղած խնդիրներ՝ ընտրազանգվածի ցանկությունների և սպասելիքների հետ համահունչ լինելու նպատակով[3]: Իր հետազոտության արդյունքում նա գալիս է այն եզրահանգման, որ միմյանց տիրույթ մտնելու թեկնածուների որոշումը հիմնականում կարող է պայմանավորվել ընտրողների հետ գործակցության աստիճանով (partisanship), ընտրարշավի ուղերձների տոնայնությամբ, թեկնածուների մրցակցային կեցվածքով և որևէ խնդրին ընտրողների կողմից տրվող առաջնահերթությամբ[4]: Մեկ այլ էմպիրիկ հետազոտության արդյունքում Պետրոսիկ-Բենուա-Հանսեն հեղինակային խումբը եզրակացնում է, որ էական կոռելացիա գոյություն ունի հանրապետականների և դեմոկրատների կողմից տնօրինվող խնդիրների նկատմամբ ամերիկացիների ունեցած մտահոգությունների (concerns) և թեկնածուի կողմից շեշտադրվող՝ իր կուսակցության տնօրինած խնդիրների բալանսի միջև: Թեև հետազոտությամբ չի հաստատվում, որ թեկնածուներին հաջողվում է ստեղծել խնդրի նկատմամբ այնպիսի վերաբերմունք, որը ընտրողներին կստիպի քվեարկել տվյալ թեկնածուի օգտին, այդուհանդերձ այն բացահայտում է հետադարձ ազդեցության հարաբերություն, թեկնածուի թիմը տեղեկություններ է քաղում ընտրողների մտահոգությունների վերաբերյալ և օգտագործում է դրանք ի շահ թեկնածուի[5]: Ընտրողների ռացիոնալության վրա հեռուստաբանավեճի ազդեցությանը և խնդիրների վրա հիմնված ընտրության (issue-

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս **N. Kaplan, D. K. Park, T. N. Ridout,** նշվ. աշխ. , էջ 725:
[3] Տե՛ս **D. A. Damore,** նշվ. աշխ. , էջ 392-393:
[4] Տե՛ս **D. A. Damore**, նշվ. աշխ. , էջ 396:
[5] Տե՛ս **J. R. Petrocik, W. L. Benoit, G. J. Hansen,** նշվ. աշխ, էջ 622:

based voting) վերաբերյալ իր էմպիրիկ հետազոտությամբ հետաքրքիր արդյունքների է հանգում նաև Ալան Աբրամովիչը: Համաձայն այդ արդյունքների, հեռուստաբանավեճը ձևավորում է ավելի լավ տեղեկացված ընտրազանգված, սակայն գրեթե երբեք ազդեցություն չի ունենում ընտրական վարքի վրա. երբեմն ընտրողներն իրենց նախապատվությունը տալիս են որևէ թեկնածուի ոչ թե վերջինիս՝ խնդիրների վերաբերյալ ունեցած դիրքորոշման համար, այլ ընտրում են դիրքորոշումներն ըստ իրենց նախընտրած թեկնածուի[1]: Այս պարագայում առավելություն կարող են ունենալ գործող նախագահ թեկնածուները, որոնք իրենց պաշտոնավարման ընթացքում կարողացել են ձեռք բերել ընտրողների աջակցությունը[2]:

Ընդհանրապես, խոսելով որևէ խնդրի ակներևության մասին, պետք է նշել, որ խնդրի ձևակերպումը լրատվական միջոցների միջոցով ավելի է բարձրացնում այդ ակներևության աստիճանը, և, ըստ էության, այն ձևավորվում է մի քանի աստիճանով՝ հանրային մտահոգություններ, կուսակցությունների արձագանք, դրանց ձևակերպում հեռուստաբանավեճի ընթացքում, մամուլի մեկնաբանություններ: Այս իմաստով, Պետրոսիկը, Բենուան և Հանսենը միանգամայն իրավացի են՝ նշելով, որ «լրատվամիջոցները, ինչպես էլ որ մեկնաբանեն ընտրարշավը, բարձրացնում են խնդիրների ակներևության արդեն իսկ բարձր աստիճանը՝ պարզապես լուսաբանելով այդ խնդիրների առնչությամբ արվող թեկնածուների մեկնաբանություններն ու առաջարկները»[3]: Նույն տրամաբանության մեջ են Ջոան Միլլերն ու Ջոն Կրոսնիկը՝ նշելով հետևյալը. «Թերթերը և հեռուստատեսությունը նորությունների միջոցով երբեմն արտակա (explicit) են դարձնում այս կամ այն խնդրի կարևորության մասին պնդումները՝ դրանց վրա ուշադրություն հրավիրելու նպատակով: Եթե նույնիսկ այդպիսի պնդումներ չեն արվում, միևնույնն է շատ ընթերցողներ կամ հեռուստադիտողներ ընդունում են, որ որևէ խնդրի վրա ուշադրություն հրավիրելը նշանակում է, որ խմբագիրների և թղթակիցների կարծիքով այդ խնդիրը կարևոր է: «Քանի որ լրատվամիջոցներով առողջապահական բարեփոխումների լուսաբանումն ու քննարկումը ակներև է դարձնում որոշ խնդիրներ, - նշում են Լոուրենս Ջեյքոբսն ու Ռոբերտ Շապիրոն, - մեծ է հավանականությունը, որ առանձին անձանց մոտ այդ խնդիրների նկատմամբ վերաբերմունքը ակտիվանա և դառնա չափանիշ թեկնածուին կամ հարակից

---

[1] Տե՛ս **A. I. Abramowitz,** The Impact of a Presidential Debate on Voter Rationality, *in* American Journal of Political Science, Vol. 22, No 3, Texas University Press, 1978, էջ 680-690:

[2] Պաշտոնավարող թեկնածուների առավելությունների մասին տե՛ս **J. R. Petrocik, S. W. Desposato**, Incumbency and Short-Term Influences on Voters, *in* Political Research Quarterly, Vol. 57, No. 3, էջ 363-373:

[3] **R. Petrocik, W. L. Benoit, G. J. Hansen,** նշվ. աշխ, էջ 623:

այլ խնդիրներ գնահատելու համար»[1]: Փաստորեն կարելի է պնդել, որ լրատվամիջոցները և լրագրողները այս կամ այն խնդրի վրա ուշադրություն հրավիրելով՝ լեգիտիմացնում են այդ խնդրի կարգավիճակը, հետևաբար՝ ձևավորում հանրային օրակարգ: Թեկնածուների և ԶԼՄ-ների միջև օրակարգի համաձայնեցմանն ու դրա էֆեկտներին նվիրված իր ուսումնասիրության մեջ Դեննի Հայսը որպես հետազոտության մեկնակետ է սահմանում այն պնդումը, ըստ որի «հանրային օրակարգ սահմանելու հարցում թեկնածուների հաջողությունը կախված է իրենց ուղերձները փոխանցելու լրատվամիջոցների կամքից»[2] և որ «թեկնածուների օրակարգերը մեծ հավանականությամբ կարող են ազդել ընտրողների շրջանում որոշ խնդիրների ակներևության աստիճանի աճին, ինչպես այն դեպքում, երբ լրատվամիջոցները նույնպես շեշտադրում են այդ նույն խնդիրները, այնպես էլ երբ նրանք շեշտադրում են թեկնածուներից տարբեր խնդիրներ»[3]: Հայսի կարծիքով, թեկնածուները չեն կարող ընտրողներին հասու խնդիրները միակողմանիորեն վերահսկել. նրանց օրակարգերը մրցում են այլ աղբյուրներից կամ հաղորդակցական այլ կապուղիների միջոցով (ինչպիսին են օրինակ ընտրողների անմիջական շրջապատը, մամուլը և մրցակից թեկնածուի ճամբարը) ստացվող տեղեկատվության հետ, և յուրաքանչյուր աղբյուր կարող է ինչ-որ չափով հասանելի կամ ակներև դարձնել այս կամ այն խնդիրը, ինչը կանխում է թեկնածուի կողմից հանրային օրակարգ միակողմանիորեն սահմանելու հնարավորությունը[4]: Հայսի կարծիքով, բոլոր եղած աղբյուրներից ամենադինամիկ ազդեցությունն այս առումով լրատվամիջոցներինն է, և թեև շատ հետազոտողներ ընդունում են, որ լրատվական ծածկույթը անվերապահորեն ներկայացնում է օրակարգային խնդիրները, այդուամենայնիվ թեկնածու-ԶԼՄ օրակարգերը տարբերվում են միմյանցից. լրատվական անդրադարձերը շեշտադրում են խնդիրներ, որոնք տարբեր են թեկնածուների շեշտադրած խնդիրներից[5]: Սակայն, ինչպես ցույց են տալիս որոշ ուսումնասիրություններ, որոնց մենք կանդրադառնանք քիչ ներքևում, լրագրողները կարող են ունենալ նաև խնդիրներից շեղող կամ խնդիրները երկրորդ պլան մղող դերակատարություն հօգուտ իրենց լրագրողական կարգավիճակի կարևորության:

Այսպիսով, պատասխանելով հարցին, թե ովքե՞ր են սահմանում խնդիրները, կարելի է պնդել, որ խնդիրները հիմնականում նախասահ-

---

[1] **L. R. Jacobs, R. Y. Shapiro,** նշվ. աշխ. , էջ 528:

[2] **D. Hayes,** Does the Messenger Matter? Candidate-Media Agenda Convergence and Its Effects on Voter Issue Salience, *in* Political Research Quarterly, Vol. 61, No 1, University of Utah, 2008, p. 134.

[3] **D. Hayes**, նշվ. աշխ, էջ 134:

[4] Տե՛ս **D. Hayes,** նշվ. աշխ, էջ 135:

[5] Տե՛ս նույն տեղում:

մանված են կուսակցությունների կողմից, սակայն խնդիրների սահմանման գործում կարևոր դերակատարություն կարող են ունենալ ինչպես հանրային տրամադրությունները (և թեկնածուներին մնում է միայն մնալ կուսակցական գծի մեջ՝ իհարկե այս կամ այն ձևով բերելով սեփական ներդրումը խնդրի հանրային ընկալմանը նպաստելու գործում), այնպես էլ, և հատկապես, լրատվամիջոցները կամ լրագրողները՝ մի կողմից երևան բերելով խնդիրներ և միայն այդպիսով հանրության շրջանում բարձրացնելով դրանց կարևորության աստիճանը, մյուս կողմից՝ թույլ չտալով, որ թեկնածուները միաձնյա կամ միակողմանի եղանակով սահմանեն և վերահսկեն հանրային օրակարգերը:

Այստեղ մենք հանգում մեր հաջորդ հարցադրմանը՝ ո՞ր չափով է արդյունավետ հետադարձ կապը թեկնածուից ընտրող, ինչպե՞ս են չափվում և ինչպիսի՞ դերակատարություն ունեն հանրային տրամադրությունները: Եթե կրկին վերադառնանք վերևում բերված գծապատկերին, որտեղ հստակ երևում է, որ թեկնածուի և ընտրողի մեջ կապը միջնորդվում է հեռուստատեսության կամ լայն իմաստով՝ ԶԼՄ-ների միջոցով, ապա հարց է առաջանում՝ ինչպե՞ս և ի՞նչ եղանակով է գործում հետադարձ կապը ընտրողից թեկնածու: Այստեղ էական դերակատարություն է վերապահված, բնականաբար, հանրային կարծիքի ուսումնասիրությանը: Վերևում արդեն նշել ենք, որ թեկնածուները խնդիրների նկատմամբ իրենց դիրքորոշումները կարող են փոփոխել՝ հաշվի առնելով հանրային մտահոգությունները, ինչը, իհարկե, տեղի է ունենում հանրային հարցումների արդյունքում: Այսպես, Լոուրենս Ջեյքոբսն ու Ռոբերտ Շապիրոն իրենց էմպիրիկ հետազոտության արդյունքում պարզում են, որ դեռևս պատմության մեջ առաջին՝ Նիքսոն-Քենեդի հեռուստաբանավեճի շրջանում Քենեդիի՝ խնդիրների նկատմամբ դիրքորոշումները բխում էին իր կողմից մասնավոր կերպով պատվիրված հանրային կարծիքի հարցման արդյունքներից և նպատակ ունեին ազդելու իր սեփական որակները գնահատելու ընտրազանգվածի չափանիշների վրա[1]: Այս նպատակով Քենեդին ակներև խնդիրներն օգտագործել էր բանիմաց և հոգատար թեկնածուի կերպար ստեղծելու համար, որը նրան շահեկանորեն տարբերում էր իր մրցակցից[2]: «Կասկած չկա, - նշում է Սիդնեյ Կրաուսը, - որ նախագահի թեկնածուները նախընտրական հեռուստաբանավեճին պատրաստվելիս և դրա ընթացքում օգտագործում են հանրային հարցումների արդյունքնե-

[1] Տե՛ս **L. R. Jacobs, R. Y. Shapiro,** Issues, Candidate Image and Priming: the Use of Private Polls in Kennedy's 1960 Presidential Campaign, *in* American political Science Review, Vol. 88, No.3, 1994, էջ 527-540:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 529:

րը մարտավարական նպատակներով»[1]: Այս հեղինակի կարծիքով, թեև խնդիրների վերաբերյալ հանրության մտահոգությունները գնահատելու նպատակով հասարակական կարծիքի հարցումներն օգտագործելը ներկայացուցչական կառավարման ժողովրդավարական իդեալների դրսևորում է, այդուհանդերձ բավականին քննադատության է արժանացել: Նա, մասնավորապես, մեջբերում է անվանի հեռուստալրագրող Էդվին Նյումանի կարծիքը, համաձայն որի հանրային հարցումները վտանգավոր են, որովհետև ստիպում են քաղաքական գործիչներին ասել այն, ինչ ընտրողները ցանկանում են լսել[2]: Այսինքն, որոշ իմաստով թեկնածուները, դիմում են մանիպուլիացիայի ընտրվելու նպատակով: Այսպես, Ջեյքոբս ու Շապիրոն նշում են, որ 1970-ականներից սկսած՝ գերիշխող միտումը ոչ այնքան հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքում տարորոշված խնդիրներին գործող նախագահի արձագանքելիությունն է (responsiveness), որքան հանրային կարծիքը մանիպուլացնելը[3]: «Այսպիսով, - նշում են նրանք, - նախագահներն ու օրենսդիրները զգուշորեն հետևում են հանրային կարծիքին առանձնացնելու համար այն բառերը, փաստարկները և խարհրդանիշները, որոնք մեծ հավանականությամբ կարող են արդյունավետ լինել դրական լրատվական ծածկույթ ապահովելու և վերջնաարդյունքում իրենց վարած քաղաքականությունների համար հանրային աջակցություն ստանալու համար»[4]: Ըստ էության, թե՛ գործող նախագահների, և թե՛ նախագահի թեկնածուների համար նույն տրամաբանությունն է գործում՝ կապված հասարակական կարծիքի տվյալների օգտագործման հետ:

Ինչպես տեսնում ենք, ընտրող-թեկնածու հետադարձ կապը կա, ընտրողների արձագանքին և հանրային տրամադրություններին, ինչպես արդեն պարզ էր դարձել քիչ ավելի վերևում, թեկնածուներն ուշի ուշով հետևում են և փորձում իրենց դիրքորոշումներն այս կամ այն մարտավարական եղանակով դնել հանրային տրամադրությունների հունի մեջ: Այլ հարց է, որ, թեև ժողովրդավարության տեսանկյունից հետադարձ կապը և ընտրողների արձագանքը կարևոր է, սակայն ի վերջո կարող է լինել մանիպուլիացիայի առարկա և ծառայել միմիայն ընտրվելու նպատակին, և լրատվամիջոցները, ու մասնավորապես նախընտրական հեռուստաբանավեճը, ինքնաբերաբար դառնում են այն հարթակը, որի միջոցով այդ

[1] **S. Kraus,** Televised Presidential Debates and Public Policy, 2nd Edition, New Jersey-London, 2000, էջ 198:

[2] Տե՛ս **S. Kraus,** նշվ. աշխ, էջ 23:

[3] Տե՛ս **R. Y. Shapiro, L. R. Jacobs,** Presidents and Polling: Politicians, Pandering, and the Study of Democratic Responsiveness, *in* Presidential Studies Quarterly 31, No. 1, Center for the Study of the Presidency, 2001, էջ 160:

[4] **R. Y. Shapiro, L. R. Jacobs,** նշվ. աշխ, էջ 155.

մանիպուլյատիվ դրսևորումները կարող են ազդեցություն ունենալ հանրության վրա: Այդ դրսևորումները, սակայն, չեն գործում միայն թեկնածու-ընտրող ուղղությամբ, ինչպես կտեսնենք ստորև, ռիսկեր առկա են նաև այլ ուղղություններով:

ԱՄՆ-ում մինչև 1990-ական թվականների սկիզբը հեռուստաբանավեճերի ընդունված ձևաչափերում լրագրողների պանելային խմբերը հանդես են գալիս իբրև ընտրողների խոսնակներ՝ իրենց կարծիքով թեկնածուներին ուղղելով հանրությանը հուզող առաջնահերթ հարցեր: Սակայն այստեղ առկա են խնդրահարույց մի շարք տարրեր: Նախ, այն պատճառով (և այդ մասին ոչ միանշանակորեն նշում են որոշ հետազոտողներ), որ հեռուստաբանավեճերի քննադատելի կողմն այն է, որ նրանք «ոչ թե տեղեկացնում են, այլ ավելի շուտ զբաղեցնում» (entertaining rather than informing)[1], և հարցերի լրագրողական մեկնաբանությունը բանավեճը հավասարեցնում է մրցախաղի[2]: Երկրորդ, և սա պետք է համարել նախորդի հետևանք, լրագրողական պանելների ներկայության պատճառով առաջին մի քանի տասնամյակների ընթացքում հանրային օրակարգերը խղճուկ կերպով են ներկայացված հեռուստաբանավեճերի ժամանակ, ինչը 1992 թվականին ԱՄՆ Նախագահական բանավեճերի հարցերով զբաղվող հանձնաժողովին (Commission on Presidential Debates) ստիպում է նախատեսել առնվազն մեկ հեռուստաբանավեճ չկողմնորոշված ընտրողների մասնակցությամբ[3]: Երրորդ, պանելային խմբերում ներկա լրագրողներն այս կամ այն խնդրի վերաբերյալ հարցեր տալով՝ կարող են հանրային օրակարգ թելադրողի կարգավիճակ վերագրել իրենք իրենց՝ օրակարգային դարձնելով այնպիսի հարցեր, որոնք իրականում այդպիսին չեն: Այսպես, Բենուան և Հանսենը նշում են, որ «քանի որ լրագրողները ավելի շուտ հետապնդում են սեփական կարևորության աստիճանը բարձրացնելու (personal aggrandizement) նպատակ, ընտրողների հետաքրքրությունները դուրս են մնում նրանց տեսադաշտից[4]: Այս հեղինակների կողմից իրականացված հետազոտության արդյունքում ընտրողներին հետաքրքրող ամենակարևոր խնդիրների և լրագրողների կողմից թեկնածուներին հասցեագրված հարցերի միջև որևէ կապ չի արձանագրվել[5]: Ե-

[1] Տե՛ս **K. H. Jamieson, D. S. Birdsell,** Presidential Debates: The Challenge of Creating an Informed Electorate, New York: Oxford University Press, 1988, էջ 174:

[2] Տե՛ս **K. H. Jamieson, D. S. Birdsell,** նշվ. աշխ, էջ 87:

[3] Տե՛ս **J. S. Trent, R.V. Friedenberg, R. E. Denton Jr,** Political Campaign Communication, 8th Edition, Lanham, Boulder, New York, London, 2016, էջ 223:

[4] **W. L. Benoit, G. J. Hansen,** Presidential Debate Questions and the Public Agenda, *in* Communication Quarterly, No 49, 130-141, մեջբերման աղբյուրը՝ **W. L. Benoit,** Political Election Debates: Informing Voters about Policy and Character, Lexington Books, Maryland, 2004, էջ 44-45:

[5] Տե՛ս նույն տեղում:

թե ասվածին ավելացնենք այն, ինչ արդեն նշվել է քիչ վերևում, այսինքն՝ որոշակի խնդիրների վրա ուշադրություն հրավիրելով՝ դրանք հանրային ընկալման մեջ ամրագրել իբրև կարևոր և օրակարգային, ապա պետք է որ դժվար լինի ստանալ հանրային օրակարգի օբյեկտիվ պատկեր, ինչն էլ, ըստ էության ակնարկում են վերևում մեջբերված հեղինակները։

Գալով այն հարցադրմանը, թե չկա՞ արդյոք այլ ռիսկերի հնարավորություն թեկնածուներ-լրագրողներ-ընտրող հարաբերության մեջ ի վնաս կողմերից մեկի կամ մի քանիսի՝ պետք է նշենք, որ մենք արդեն դիտարկեցինք այդպիսի ռիսկերի երկու տարբերակ՝ կապված թեկնածուների կողմից հանրային կարծիքի հետազոտության արդյունքների օգտագործման և դրանցից բխող քայլերի, ինչպես նաև ի վնաս հանրային օրակարգերի՝ լրագրողների կողմից սեփական կարգավիճակին կարևորություն տալու և օրակարգային խնդիրները երկրորդ պլան մղելու մասին խոսելիս։ Առաջին դեպքում թեկնածուների կամ նրանց թիմերի առերևույթ կամ ծածուկ մանիպուլիացիայի զոհ են ընտրողները, երկրորդ դեպքում՝ ինչպես թեկնածուները, այնպես էլ ընտրողները, քանի որ կենտրոնական տեղը լրագրողները վերապահում են իրենք իրենց։ Սակայն վերջին տասնամյակների հետազոտությունների մի ստվար մաս անդրադառնում է նաև այն հանգամանքին, որ լրատվամիջոցների և մասնավորապես հեռուստատեսության միջոցով թեկնածուների հանրայնացման հետևանքով զգալիորեն նվազել է կուսակցությունների դերը։ Նույնիսկ երբ թեկնածուն կուսակցական գծի տանողն է, եթե նա օժտված է առաջնորդի այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են պրագմատիզմը, խարիզման, հանրությանը դուր գալու այլ հատկություններ, ապա կուսակցության դավանած արժեքները, նրա խնդիրները և տեսլականները կարող են մարմնավորվել այդ թեկնածուի միջոցով՝ կուսակցությանը թողնելով ստվերում։ Այսպես, Սիդնեյ Կրաուսը նշում է, որ քաղաքական կուսակցությունների ազդեցությունը նվազել է հեռուստատեսության կարևորության աճին զուգահեռ և մատնանշում է երեք ուղի, որոնցով ընտրական գործընթացի վրա հեռուստատեսության ազդեցության աճը հանգեցրել է կուսակցությունների դերի նվազման։ Առաջին՝ ընտրողների ուշադրությունն ուղղակիորեն նախագահի հնարավոր թեկնածուների վրա հրավիրելու, վերջիններիս հանրային տեսանելիության աստիճանը բարձրացնելու կարողության շնորհիվ հեռուստատեսությունը, փաստորեն, առաջանցիկ դիրքերում է և թեկնածուների անունները դնում է շրջանառության մեջ ավելի շուտ, քան կկատարվեն թեկնածուների կուսակցական նշանակումները։ Երկրորդ՝ քանի որ հեռուստատեսությունն ԱՄՆ-ում հեռարձակվում է 1948 թվականից, այն աստիճանաբար փոխել է ամերիկացիների միջսերնդային նույնականացումը կուսակցությունների հետ, այսինքն՝ եթե առաջ կուսակցա-

կան կողմնորոշման մեջ մեծ դերակատարություն ունեին ընտանիքի ավագները, որոնց հետևելով զավակները նույնպես հարում էին նույն կուսակցական գաղափարներին, հետևաբար՝ ունենում նույն կուսակցական կողմնորոշումը, ապա հեռուստատեսության ի հայտ գալով այդ միջսերնդային կապը խզվում է, և ընտրողներն ավելի ու ավելի հաճախ են իրենց կողմնորոշումը համաձայնեցնում հեռուստատեսությամբ ստացված տեղեկատվության հետ: Երրորդ՝ հեռուստատեսությամբ ավելի ու ավելի հաճախ հանդես գալու, սեփական տեսանելիությունը բարձրացնելու շնորհիվ քաղաքական գործիչներին հաջողվում է գալ առաջին պլան և հետին պլան մղել սեփական կուսակցությունները[1]:

Այսպիսով՝ կարելի է պնդել, որ շնորհիվ հեռարձակող լրատվամիջոցների դերի մեծացման, այն շտկումների ու փոփոխությունների, որ նրանք ներմուծեցին նախընտրական արշավների ընթացքի մեջ, այդ լրատվամիջոցները որոշակիորեն ներկայանում են առանձին կողմի կարգավիճակում, կողմ, որը ոչ միայն ազդեցություն ունի նախնտրական գործընթացների, այլև թեկնածուների ու կուսակցությունների համբավի, երբեմն նաև՝ ընտրության արդյունքի վրա: Այսինքն, սխալ կլինի պնդել, թե հեռարձակող մեդիան և մասնավորապես՝ հեռուստատեսությունը զուտ կրավորական դիրքերից է հանդես գալիս՝ որպես միջնորդ, որը թեկնածուներին ներկայացնում է հանրությանը: Հետևաբար, հաշվի առնելով նրա ազդեցությունը, կարելի է արձանագրել, որ հեռուստատեսությունը նախընտրական գործընթացների կարևոր դերակատար է՝ բոլոր առավելություններով և թերություններով կամ հնարավոր սահմանափակումներով հանդերձ:

Марианна Акопян, Узловое значение и содержательные элементы предвыборных теледебатов. Пример США - Предвыборные теледебаты являются тем узловым центром, где, согласно предусмотренным правилам транслирующих сетей, вырисовывается панорама видений кандидатов о векторах социально-политического и социально-экономического развития, что в свою очередь позволяет избирателю получать информацию, проверять и сопоставлять собственные представления о конкурирующих кандидатах, отождествлять собственные взгляды со взглядами одного из них и в результате делать выбор в пользу одного из них. Совокупность всех этих обстоятельств в статье рассматривается как ***узловое значение предвыборных теледебатов***, состоящих из конкретных содержательных элементов.

[1] Տե՛ս **S. Kraus,** Televised Presidential Debates and Public Policy, 2nd Edition, New Jersey-London, 2000, էջ 10-13:

Marianna Hakobyan, The nodal value and the content elements of televised campaign debates: USA case - Televised campaign debates are a kind of nodal center where, according to the rules of broadcasting networks, a panorama of candidates' visions emerges about the vectors of socio-political and socio-economic development. It allows the voters to receive information, check and compare their own perceptions of competing candidates, to identify their own views with the views of one of them and, as a result, make a choice in favor of one of them. The totality of all these circumstances, examined in the article, is considered as the nodal ***value of televised campaign debates***, consisting of specific content elements.

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

ԽՈՍՐՈՎԱԴՈՒԽՏ ԱԶԱՏՅԱՆ

Բանալի բառեր - կուսակցական համակարգ, երկկուսակցականություն, բազմակուսակցականություն, դասական պառլամենտարիզմ, բազմակուսակցական պառլամենտարիզմ, գաղափարական բազմակարծություն, համամասնական ներկայացուցչություն, փոխակերպվող հասարակություններ:

Պլյուրալիստական ժողովրդավարության պայմաններում ժամանակակից խորհրդարանի արդյունավետ գործունեությունը պայմանավորված է ուժեղ և հեղինակավոր կուսակցություններով: Պառլամենտարիզմի արդի սահմանումներից շատերն այն կապում են խորհրդարանի գերակա դիրքի և զարգացման հետ[1]: Նման խորհրդարանի ձևավորումն ու գործառնումը պահանջում է քաղաքական կուսակցությունների անմիջական մասնակցություն և կայացած կուսակցական համակարգի առկայություն: Ամուր դիրքերում գտնվող կուսակցությունների գոյությունը հատկապես կարևոր է խորհրդարանական հանրապետությունների համար: Հետևաբար, պառլամենտարիզմի տեսության առանցքային հարցերից է պառլամենտարիզմի և կուսակցությունների փոխազդեցության ուսումնասիրությունը: Հիմնախնդրի ձևակերպումից ակնհայտ է, որ այն ունի հետազոտման մի քանի շերտեր և կապված է ինչպես քաղաքական համակարգի կառուցվածքի և գործառնության, այնպես էլ ընտրական համակարգի, պատգամավորի ինստիտուտի և այլնի հետ:

Պառլամենտարիզմի հայեցակարգի դիրքերից՝ քաղաքական կուսակցություններն ապահովում են կամ առնվազն կոչված են ապահովել հասարակության տարբեր շերտերի դիրքորոշումների արտահայտումը քաղաքական առանցքային հարցերի վերաբերյալ: Դրանք ընտրողների՝ բնույթով տարբեր՝ տարածքային, էթնիկական, կրոնական, սոցիալ-տնտեսական և այլ շահերի արտահայտողներն են: Տեղին է հիշատակել Ֆ. Նոյմանի մեջբերումը. «Սոցիալական իշխանությունը քաղաքականի վե-

[1] Ավելի մանրամասն տե՛ս **Ազատյան Խ.,** «Պառլամենտարիզմ» հասկացության ըմբռնման շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Եր., 2018 № 2 (26), էջ 77-78, **Титов С. А.,** История парламентаризма в Росии. М., 2015, էջ 88 և ուրիշներ:

րածելու միակ կարևորագույն գործիքը քաղաքական կուսակցությունն է»[1]: Ըստ Գ. Քեռյանի՝ քաղաքական կուսակցությունն իրավամբ կարելի է համարել քաղաքակրթության կարևորագույն նվաճումներից մեկը, առանց որի հասարակության մյուս ինստիտուտների բնականոն գործունեությունը ենթարկվում է արգելակման ու ձևախեղման[2]: Իսկ իտալացի քաղաքագետ Ջ. Սարտորին իր «Վերանայելով ժողովրդավարության տեսությունը» գրքում նշում է, որ ժողովրդավարությունն առանց կուսակցությունների կնմանվի քաոսի[3]: Ուստի ինչպես Ն. Բրախերն է նկատում. «Կուսակցությունների հետազոտումը ժամանակակից քաղաքագիտության՝ որպես ժողովրդավարության մասին գիտության առանցքային առարկան է»[4]:

Կուսակցությունների և խորհրդարանի անքակտելի կապը ցույց է տալիս գերմանացի տեսաբան Կ. Բեյմեն, համաձայն որի՝ ժամանակակից արդյունաբերական պետություններում խորհրդարանն այն կենտրոնական վայրն է, որտեղ տարբեր կուսակցական համակարգերի շրջանակներում բազմազան խմբային շահեր արտահայտող ներկայացուցիչներ որոշում են կառավարության կազմը և վերահսկում գործադրին: Ըստ նրա՝ կուսակցությունները միայն խորհրդարանի միջոցով հնարավորություն ունեն առաջ մղել իրենց ընտրողների կամքը: Դրանք պետության և հասարակության միջև յուրօրինակ կապող օղակի դեր են կատարում, ինչը մեկ այլ ինստիտուտ նման արդյունավետությամբ դժվար թե կարողանա իրականացնել[5]:

Խորհրդարանական հանրապետություններում կուսակցությունների կենտրոնական դիրքը համարժեքորեն ամրագրված է ինչպես սահմանադրական տեքստերում, այնպես էլ համապատասխան օրենսդրական ակտերում: ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 3-րդ մասում, օրինակ, նշված է. «Կուսակցությունները նպաստում են ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը»[6]: Սահմանադրորեն ամրագրված է նաև դրանց ազատորեն կազմավորվելու և գործելու իրավունքը:

---

[1] **Neumann F.,** Demokratischer und autoritärer Staat. Beiträge zur Soziologie der Politik, Frankfurt a. M., 1967, S. 67.

[2] Տե՛ս **Քեռյան Գ.,** Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Եր., 2002, էջ 3:

[3] Տե՛ս Konferenzbericht „Parteien und Parteiensystem in jungen Demokratien“ KAS-Demokratie-report 2007 Internationale Fachkonferenz Steigenberger Grandhotel Petersberg 29. bis 30. Januar 2007, https://www.kas.de/documents/252038/253252/7_dokument_dok_pdf_10104_1.pdf/c374fffa-7edf-4d68-4576-843e87779154?version=1.0&t=1539664830707, հասանելի՝ 25.06.2020:

[4] **Alemann von U.,** Parteiensysteme im Parlamentarismus. Eine Einführung und Kritik von Parlamentarismus, Bertelsmann Universitätsverlag, 1973, S. 19.

[5] Տե՛ս **Beyme von K.,** Die parlamentarische Demokratie. Entstehung und Funktionsweise 1789-1999, Springer-Verlag, 2013, էջ 140-142:

[6] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1

Կուսակցությունների համար օրենքով երաշխավորվում են գործունեության հավասար իրավական հնարավորություններ[1]: Ըստ այսմ, հասարակական գործընթացների վրա ազդելու հնարավորությամբ օժտված ուժեղ կուսակցությունների ձևավորումն անհնար է առանց իրավական կարգավորման արդյունավետ համակարգի առկայության:

Հարկ է նշել, սակայն, որ կուսակցությունները խորհրդարանական ներկայացուցչության անփոխարինելի դերակատարի նշանակությունը ձեռք են բերել ժամանակակից պառլամենտարիզմի փուլում: Դրան նախորդող շրջաններում ժամանակակից ընկալմամբ կուսակցություններ չկային. խորհրդարանը կադրային բնույթի էր:

Մի շարք կուսակցություններ առաջացել են խորհրդարանական աշխատանքի արդյունքում, խոսքը քաղաքական ակումբների ձևավորման մասին է, որոշներն էլ՝ խորհրդարանից դուրս՝ հասարակական շարժումների հետևանքով ձևավորված արտախորհրդարանական կազմակերպական կառույցների տեսքով[2]: Կուսակցությունների խորհրդարանական և էլեկտորալ ծագմանն իր «Քաղաքական կուսակցություններ» աշխատանքում հատուկ գլուխ է նվիրել կուսակցությունների ժամանակակից տեսության հիմնադիր Մ. Դյուվերժեն: Վերջինս որպես խորհրդարանական ծագման կուսակցությունների օրինակներ նշում է Յակոբինյանների, Ժիրոնդիստների ակումբները, 1789 թ. Ֆրանսիական Սահմանադիր ժողովում խորհրդարանական խմբերի առաջացումը և այլն[3]:

Սակայն, դասական առումով կուսակցությունները 19-րդ դարի բուրժուական հասարակարգի ծնունդ են: Այդ ժամանակ էր, որ լիբերալ և պահպանողական կուսակցությունների կողքին բանվորների, աշխատավորների դասի քաղաքական և արհեստակցական միավորումների խորհրդարան մուտք գործելով դրանց դերակատարությունը փոխվեց: Կուսակցությունների զարգացման մեկնարկին զուգահեռ դասական երկկուսակցական համակարգը, որը լավագույնս դրսևորվել էր Անգլիայում, կորցրեց իր մենաշնորհային նշանակությունը՝ տեղը զիջելով արագ տեմպերով զարգացող բազմակուսակցական համակարգին[4]: Սա, իր հերթին, պառլամենտարիզմի զարգացման պատմության մեջ հանգեցրեց որակապես նոր փուլի՝ բազմակուսակցական խորհրդարանների ձևավորմանը՝

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1

[2] Տե՛ս **Marschall St.,** Parlamentarismus: Eine Einführung, Nomos Verlagsgesellschaft, Baden-Baden, 2016, էջ 39-40:

[3] Տե՛ս **Дюверже М.,** Политические партии, М., 2002, էջ 23:

[4] Տե՛ս https://www.lernhelfer.de/schuelerlexikon/politikwirtschaft/artikel/parlamentarismus#, հասանելի՝ 14.05.2020:

հնարավորություններ ստեղծելով խորհրդարանում շատ ավելի մեծ ծավալների և տարբերակված շահերի ներկայացման համար:

Խորհրդարանի և կուսակցությունների գործունեության անբաժանելի կապի մասին է վկայում վերջիններիս իրականացրած գործառույթների փոխլրացվածությունն ու նմանությունը, որից պարզ է՝ առանց մեկի առկայության մյուսի գոյության իմաստը դադարում է: Ի տարբերություն պետական իշխանության մյուս մարմինների՝ խորհրդարանը միակ կոլեգիալ մարմինն է, որտեղ.

• ներկայացված են պետության բնակչության սոցիալական խմբերի մեծամասնության շահերը կուսակցական ներկայացուցչության միջոցով:

• Իրականացվում է օրենսդրական գործառույթ, որի ակտիվ մասնակիցների դերում խորհրդարանում հանդես են գալիս կուսակցական խմբակցությունները, ինչպես նաև դրանց անդամ հանդիսացող առանձին պատգամավորները:

• Իրականացվում է որոշումների ընդունման և հասարակության զարգացման այլընտրանքային ուղիների մատնանշման գործառույթ: Նման այլընտրանքներ առաջարկողի դերում ևս, որպես կանոն, հանդես են գալիս կուսակցությունները:

• Առկա են գործադիր իշխանության սահմանափակման և վերահսկողության իրական մեխանիզմներ: Ժամանակակից պետություններում իշխանության նկատմամբ հասարակական վերահսկողությունը ևս հիմնականում իրականացվում է կուսակցությունների միջոցով[1]:

Այսպիսով, խորհրդարանները, լինելով ընտրական գործընթացի արդյունք և ժողովրդի կողմից ձևավորված կազմակերպություններ, կուսակցությունների շնորհիվ օժտվում են լեգիտիմության մեծ ներուժով: Վերջիններս հանդես են գալիս քաղաքական որոշումներ քննարկողի և ընդունողի դերում, իրագործում են ընդունված որոշումները, վերահսկում են քաղաքական գործընթացները, ընտրում են քաղաքականություն իրականացնող անձանց, ներկայացնելով տարբեր խմբերի շահերը՝ միաժամանակ իրականացնում են առաջնորդման և ինտեգրման գործառույթներ: Խորհրդարանի աշխատանքի որակն ու արդյունավետությունն անմիջականորեն և մեծապես կախված է նշված գործառույթների կատարման արդյունավետությունից, խորհրդարանական խմբակցությունների, ինչպես նաև առանձին պատգամավորների գործունեությունից: Բացի դրանից՝ որևէ երկրում կուսակցությունների ուժեղ և ազդեցիկ լինելն ուղիղ համեմատական է արդյունավետ աշխատող կուսակցական համակարգի հաստատմանը: Կուսակցական համակարգերը բազմաթիվ և համալիր

[1] Տե՛ս **Beyme von K.,** նշվ. աշխ., էջ 225:

գործոնների՝ սահմանադրության, ընտրական օրենսդրության, քաղաքական համակարգի ընդհանուր բնույթի փոխազդեցության արդյունք են: Կախված այն հանգամանքից, թե ինչպիսի կուսակցական համակարգ է գործում երկրում, պառլամենտարիզմի զարգացումն այնտեղ կարող է ընթանալ տարբեր ուղղություններով: Որքան կուսակցական համակարգը կայացած է, այնքան պառլամենտարիզմն ամուր հիմքերի վրա է: Ի տարբերություն միակուսակցական համակարգի, օրինակ, որի պարագայում պառլամենտարիզմի զարգացման մասին խոսելն ավելորդ է, ինչը միանշանակորեն ընդունում են գիտական բոլոր շրջանակները, երկկուսակցական և բազմակուսակցական համակարգերի դեպքում մի շարք հարցեր են առաջ գալիս: Դրանց տարբերությունները հասկանալը ոչ միշտ է հեշտ, քանի որ դուալիստական վարչակարգերում ևս խոշոր կուսակցություններին կողքին գործում են տարբեր մանր կուսակցություններ: Օրինակ ԱՄՆ-ում դեմոկրատներից և հանրապետականներից բացի այլ կուսակցություններ էլ կան, ուստի դժվար է ասել պառլամենտարիզմի զարգացման համար տեղին է երկկուսակցական համակարգը՝ միակուսակցական կառավարությունների ինստիտուցիոնալ «կաշկանդվածությամբ», թե± բազմակուսակցական համակարգը՝ պոտենցիալ կոալիցիոն կառավարություններով: Կամ ինչպես գերմանացի սահմանադրագետ-միջազգայնագետ Ռ. Ռեդսլոբն էր հարցադրում անում, պետք է ընտրություն կատարել «դասական», «իրական» կամ «ֆունկցիոնալ», թե± «ոչ իրական» պառլամենտարիզմի միջև[1]: Վերջինս որպես առաջինի օրինակ նշում էր բրիտանական, վեստմինիստերյան մոդելը, որը բնութագրվում է երկկուսակցական խորհրդարանի պայմաններում կառավարության և ընդդիմության միջև դերերի հստակ տարանջատմամբ: Երկրորդին հատուկ է կառավարության նկատմամբ խորհրդարանի ուժեղ դերը, ինչպես նաև կոալիցիաների վտանգով լեցուն խորհրդարանական բազմակուսակցական համակարգը:

Հարցադրումը, թե ժողովրդաիշխանության զարգացման համար որ համակարգն է ավելի մեծ հնարավորություններ ստեղծում՝ կուսակցական դուալիզմը, թե± կուսակցական պլյուրալիզմը, ուսումնասիրողների ուշադրության տիրույթում է արդեն իսկ երկու դար: Նշված երկու հայեցակարգերի ժամանակային սահմանները հասնում են 19-րդ հարյուրամյակ՝ խորհրդարանական կուսակցական կառավարությունների ձևավորման շրջան[2]: Ուսումնասիրելով նշված հարցի հետ կապված գիտական գրականության մեջ գոյություն ունեցող մոտեցումները՝ նկատում ենք եր-

[1] Տե՛ս **Redslob R.**, Die parlamentarische Regierung in ihrer wahren und ihrer unechten Form. Eine vergleichende Studie über die Verfassungen von England, Belgien, Ungarn, Schweden und Frankrech, Tübingen, 1918:

[2] Տե՛ս **Alemann von U.**, նշվ. աշխ., էջ 21:

կու միտում. տեսաբանների մի խումբը միանշանակ երկկուսակցական, մյուսը՝ բազմակուսակցական համակարգի կողմնակից է:

Դուալիստական հայեցակարգի արմատներն առաջին հերթին կարելի է գտնել պառլամենտարիզմի անգլիացի հանրահայտ տեսաբան Վ. Բագեհոթի մոտ, իսկ պլյուրալիստական հայեցակարգինը՝ մի կողմից ազատական բազմակարծության գաղափարախոսների աշխատանքներում, մյուս կողմից Ֆրանսիական մեծ հեղափոխության ծնունդ հեղափոխական ժողովրդական կառավարության արմատական գաղափարներում: Տարածական առումով, ինչպես տեսնում ենք, և' դուալիստական, և' պլյուրալիստական կուսակցական հայեցակարգերը արմատավորվել են լիբերալ ժողովրդավարություններում և խորհրդարանական մշակույթի զարգացման պայմաններում, առաջին հերթին պառլամենտարիզմի բնօրրաններ Անգլիայում և Ֆրանսիայում:

Դուալիստական կուսակցական հայեցակարգը ենթադրում է երկու կուսակցությունների հակադրություն խորհրդարանում, որոնցից մեկը կառավարության, մյուսը՝ ընդդիմության դերն է ստանձնում: Այս դեպքում կառավարությունը խորհրդարանական մեծամասնական խմբակցության կամ, այլ կերպ ասած, իշխող կուսակցության վրա է հենվում: Մեծամասնության կուսակցության առաջնորդը տվյալ դեպքում հաճախ միևնույն ժամանակ նաև կառավարության ղեկավարն է: Այստեղ առանձնապես կարևոր է կառավարության կազմում ընդգրկված երկու քաղաքական ուժերի հարաբերակցության հարցը: Ընդդիմադիր կուսակցությունը՝ այլընտրանքի, իսկ դրա առաջնորդը կառավարության ղեկավարի այլընտանքային թեկնածուի դերում է հանդես գալիս: Տևական ժամանակ քաղաքագիտական քննարկումներում նշված առանձնահատկություններով հայտնի բրիտանական պառլամենտարիզմն ու կուսակցական համակարգը դիտարկվում էին որպես զարգացած ժողովրդավարական համակարգի միակ հարացույցներ: Որոշ տեսաբաններ էլ բրիտանական օրինակը համարում էին խորհրդարանական ժողովրդավարական կառավարման իդեալական տիպ: Վ. Բագեհոթի վերլուծությունների համաձայն՝ իր զարգացման համար ունենալով յուրահատուկ և եվրոպական մնացած բոլոր հասարակություններից տարբերվող նախապայմաններ, բրիտանական ծագման «իրական» պառլամենտարիզմի պայմաններում քաղաքական ինստիտուտները գործառնել են անխափան[1]: Բնական է՝ արդյունաբերական և կապիտալիստական թռիչքաձև զարգացումը չէր կարող իր ուրույն սոցիալական և քաղաքական հետևանքները չունենալ: Պատահական չէ, որ «կուսակցություն» եզրույթը ևս առաջացել է Անգլիայում: Վ. Բագեհոթի

[1] Տե՛ս **Alemann von U.,** նշվ. աշխ., էջ 37:

մոտեցումը պաշտպանում են նորագույն շրջանի անգլիացի տեսաբաններ Է. Բարքերը, Հ. Լասկին և ուրիշներ՝ երկկուսակցականությունը համարելով կառավարման լավագույն մեթոդներից մեկը:

Բարձր լեգիտիմությամբ, գործունակությամբ, կայունությամբ և խիստ մրցակցությամբ բնութագրվող երկկուսակցականության գաղափարը մերժվեց պլյուրալիստական կուսակցական հայեցակարգի ներկայացուցիչների կողմից: Նրանք խորհրդարանական կուսակցական դուալիզմի դոկտրինը քննադատեցին ոչ միայն կառավարության կայունության և հեղինակության անհեռատեսության տեսանկյունից, այլև մերժեցին «կայունություն» հասկացության ֆետիշացումը որպես ժողովրդավարական համակարգերի գնահատման կարևորագույն չափանիշ: Փոխարենը՝ լիբերալ պլյուրալիզմի դասական ձևակերպումների համաձայն՝ արդար կառավարման «ոսկե միջինը» հնարավոր է ապահովել շահերի բազմաթիվ խմբերի և կուսակցությունների խաղաղ փոխզիջումների արդյունքում:

Պատմական տեսանկյունից կուսակցական պլյուրալիզմի հիմքերը դրել է Ս. Միլլը: Վերջինս խորհրդարանը բնորոշում է որպես ժողովրդի կարծիքների, տեսակետների կոնգրես, ազատ քննարկումների վայր[1]: Ժողովրդի բազմաթիվ կարծիքների ներկայացուցչությունն ըստ Ս. Միլլի՝ գլխավորն է, իսկ կուսակցական պլյուրալիզմը՝ պառլամենտարիզմի զարգացման հիմքը: Է. Վ. Յենքերն իր «Խորհրդարանը և կուսակցությունների պայքարը» աշխատանքում կուսակցությունների տարբերակումը և մասնատումը տարբեր խմբերի համարում է որպես մեկ կուսակցության միակողմանի կառավարումը բարդացնող գործոն և կարծիքների ազատ մրցակցության խթան[2]:

Մ. Վեբերը 1917 թ. մշակած «Խորհրդարանը և կառավարությունը վերակազմավորված Գերմանիայում» ծրագրային աշխատության մեջ նշում է. «Երկկուսակցական համակարգն արդյունաբերական երկրներում ժամանակակից տնտեսական դասերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի բաժանվածության և սոցիալիզմի նշանակության մեծացման պայմաններում անհնար է: Սա անհրաժեշտաբար հանգեցնում է բազմակուսակցական համակարգի պահանջին: Նվազագույնը 4, հավանաբար 5 մեծ կուսակցություն է մեզ պետք (նկատի ունի Գերմանիային) կոալիցոն կառավարություններով»[3]:

---

[1] Տե՛ս **Милль Ст.,** Размышления о представителном правлении, Chalidze publications, 1988, էջ 74:

[2] Տե՛ս **Zenker E. V.,** Der Parlamentarismus. Sein Wesen und seine Entwicklung, Leipzig, 1914, էջ 52:

[3] **Weber M.,** Parlament und Regierung im neugeordneten Deutschland, Schriften zur Politik, http://www.zeno.org/Soziologie/M/Weber,+Max/Schriften+zur+Politik/Parlament+und+Regierung+im+neugeordneten+Deutschland/V.+Parlamentarisierung+und+Demokratisierung, հասանելի 15.06.2020:

Համամասական ընտրական համակարգը ժողովրդավարության կարևորագույն պայման համարող Ռ. Թհոման և Հ. Քելզենը նույնպես բազմակուսակցական համակարգի ջատագովներ էին: Հ. Քելզենը որոշումների փնտրման և կայացման կենտրոնը համարում էր ոչ թե գործադիրը, այլ առաջին հերթին հրապարակային խորհրդարանական քննարկումները: Նրա «ժողովրդավարական կուսակցական պետության» էությունը համամասնական ներկայացուցչությունն է, ինչը ենթադրում է խմբային շահերի արտահայտում և հավասարակշռում: Ի տարբերություն վաղ լիբերալների՝ Հ. Քելզենը գտնում է. «Ոչ թե լուսավորյալ քաղաքացիների հանրային քննարկումները կամ էլ նրանց կողմից ընտրված անհատ ներկայացուցիչները, այլ խմբային շահեր ներկայացնող կուսակցությունները պետք է խորհրդարանական քննարկումների արդյունքում հասնեն քաղաքական որոշումների ընդունմանը»[1]: Նա կարևորում է որքան հնարավոր է շատ խմբերի շահերի ներկայացման երաշխավորումը, ինչը կառաջացնի մրցակցություն և փոխզիջումների գնալու հնարավորություն: Հ. Քելզենը նաև «մրցակցային պառլամենտարիզմ» հասկացության հեղինակն է: Նրա արժեքային ռելյատիվիզմի և իրավական պոզիտիվիզմի, ռելյատիվիստական հանդուրժողականության, ազատական, բազմակուսակցական պառլամենտարիզմի գաղափարները հետագայում մեծապես ազդեցին ժողովրդավարական պլյուրալիզմի գաղափարի զարգացման վրա[2]:

Գերմանացի մեկ այլ տեսաբան Գ. Լայբհոլցը, հիմնվելով Հ. Քելզենի գաղափարների վրա, պարզ ախտորոշում է լիբերալ-ներկայացուցչական պառլամենտարիզմի փոխակերպումները՝ օգտագործելով «կուսակցապետական զանգվածային ժողովրդավարություն» հասկացությունը: Ըստ նրա՝ կուսակցությունների շնորհիվ ընտրությունները սկսեցին իրականացնել ոչ միայն ներկայացուցչական, այլև պլեբիսցիտար-ուղղակի գործառույթ: Հ. Քելզենի «ժողովրդավարական կուսակցական պետությունը» նա փոխարինեց «պլեբիսցիտար կուսակցական պետությամբ»[3]: Կուսակցական պետությունը Գ. Լայբոլցը միանշանակ դիտարկում է որպես պլյուրալիստական պետություն:

Ըստ բազմակուսակցական համակարգի մեկ այլ պաշտպան Ֆ. Շարփի՝ երկկուսակցական համակարգում բացառված չէ մեկ կուսակցության հեգեմոնիան, մյուս կողմից մշտական ընդդիմության առկայութ-

[1] Տե՛ս **Alemann von U.,** նշվ. աշխ., էջ 123:

[2] Տե՛ս **Dreier H.,** Kelsens Demokratietheorie: Grundlegung, Strukturelemente, Probleme, https://www.jura.uni-wuerzburg.de/fileadmin/02160100/Elektronische_Texte/Kelsen.pdf, հասանելի՝ 24.02.2020:

[3] Տե՛ս **Leibholz G.,** Das Wesen der Repräsentation und der Gestaltwandel der Demokratie im 20. Jahrhundert, Berlin, 1960, էջ 38-40:

յունը: Ըստ նրա՝ երկկուսակցականության պայմաններում այն անհրաժեշտ դինամիկան չկա, ինչը կերաշխավորի երկու կուսակցությունների միջև հերթափոխը[1]: Վերջինս երկկուսակցականության պարագայում միակուսակցական կառավարության լեգիտիմությունը հարցականի տակ էր դնում, քանի որ ներկուսակցական բանակցությունները համաձայն նրա՝ չեն կարող թափանցիկ լինել, նույնիսկ եթե դրանք համեմատենք կոալիցիոն փոխզիջումների հետ: Ֆ. Շարփը կառավարության հեղինակությունը ժողովրդավարական պառլամենտարիզմի հիմնարար չափանիշներից էր համարում: Երկկուսակցական համակարգի թերություններից մեկն էլ, ըստ նրա այն է, որ հիերարխիկ միակուսակցական կառավարությունը և դրա ղեկավարների բարձր հեղինակությունը հեռվացնում են խորհրդարանին իշխանությունից, իսկ ընտրողներին՝ քաղաքականությունից: Ֆ. Շարփը եզրակացնում է, որ միակուսակցական կառավարության կայունությունը կարող է հանգեցնել լճացման[2]:

Ռ. Դալը, շեշտը դնելով բազմակուսակցական համակարգի կարգավորիչ կողմի վրա, նշում է. «Այն պետք է դիտարկել որպես միակ միջոց, որի օգնությամբ ժողովրդավարություններում կառավարությունն ու ընդդիմությունը կարող են հարթել կոնֆլիկտները, մինչդեռ երկկուսակցական համակարգում, որքան էլ ամերիկյան կամ էլ բրիտանական օրինակը հաջող լինեն, բացառիկ դեպքերում է նման բան հնարավոր»[3]: Ռ. Դալի իդեալը «պոլիարխիան» էր, որի կարևորագույն չափումներն են՝ մասնակցությունը և մրցակցությունը:

Երկընտրանքից խուսափելու համար ժամանակակից մի շարք տեսաբաններ (Ժ. Բլոնդելը, Ջ. Սարտորին, Ս. Լիփսեթը, Ս. Ռոքքանը և այլք) փորձեցին առաջարկել կուսակցական համակարգերի այնպիսի տիպաբանություններ, որոնք թույլ կտային հաղթահարել սև-սպիտակի ավանդական բաժանումը: Ժ. Բլոնդելը նշում էր գերիշխող կուսակցության գոյությամբ կամ բացակայությամբ երկուսուկես կուսակցական համակարգի մասին: Իտալացի փիլիսոփա և քաղաքագետ Ջ. Սարտորին, զարգացնելով արդեն իսկ գոյություն ունեցող մոտեցումները, առանձնացրեց բազմակուսակցական համակարգի 3 տիպ՝ պարզ երկկուսակցական պլյուրալիզմ, չափավոր կուսակցական պլյուրալիզմ և ծայրահեղ կուսակցական պլյուրալիզմ՝ տարբերակման հիմքում դնելով հետևյալ երկու հիմնական բնութագրիչները՝ կուսակցությունների թիվը (ֆրագմենտացիա) և

[1] Տե՛ս **Scharp F.,** Demokratische Theorie zwischen Utopie und Anpassung, Konstanz, 1970, էջ 55:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս **Даль Р.,** Полиархия, плюрализм и пространство, https://www.gumer.info/bibliotek_Buks/Polit/dal/pol_pl.php, հասանելի՝ 15.07.2020:

գաղափարական տարբերությունները (պոլյարիզացիա)[1]: Սրանով Ջ. Սարտորին փորձում էր ցույց տալ, որ միայն կուսակցությունների բազմաթվությունը չի կարող վկայել որևէ երկրում բազմակուսակցականության գոյության մասին, եթե բացակայում է գաղափարական բազմազանությունը: Պլյուրալիզմի տարբեր ձևերի առաջացման բացատրությունը վերջինս կապում էր պատմական, սոցիալ-տնտեսական և ինստիտուցիոնալ գործոնների հետ: Այդ է պատճառն ըստ նրա, որ մի համակարգում բազմաթիվ կուսակցությունների գոյակցությունն առանց խնդիրների հնարավոր է, իսկ մյուսներում՝ ոչ:

Ս. Լիփսեթը և Ս. Ռոքքանը կուսակցական համակարգերի վերաբերյալ իրենց ազդեցիկ տեսությամբ բազմակուսակցական համակարգերի բացատրման սեփական տարբերակն են առաջարկում՝ այն կապելով քաղաքական էլիտաների առանձնահատուկ կառուցվածքի և վերջիններիս ու հասարակության միջև առկա հարաբերությունների հետ: Ըստ նրանց՝ այս երկու գործոններն են հասարակական կոնֆլիկտների լուծման կարևոր դետերմինանտները: «Տարակարծությունների սրումը էլիտաների մակարդակում, իր հերթին, խորացնում է մասնատվածությունը հիմքում՝ հասարակության մեջ: Ժողովրդավարական կայունությունը հնարավոր է ապահովել միայն երկու էլիտաների մրցակցության և փոխգործակցության միջոցով, բնակչության տարբեր հատվածների հետ էլիտաների համագործակցության ճանապարհով»[2]: Խոսքն, ըստ Էության, համաձայնողական կամ կոնսոցիատիվ ժողովրդավարության մասին է, որը պլյուրալիզմի դրսևորումներից է:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, պառլամենտարիզմը ժամանակակից աշխարհում անքակտելիորեն կապված է քաղաքական կուսակցությունների գործունեության հետ: Կուսակցությունները կրում են հասարակության մեջ խորհրդարանական մշակույթի կայացման պատասխանատվության բեռի հիմնական մասնաբաժինը: Կախված որդեգրած գաղափարախոսությունից, ծրագրից, իրականացրած քաղաքականությունից՝ յուրաքանչյուրի ներդրումն այդ գործում կարող է տարբեր լինել:

Գիտական հանրույթի շրջանում միակարծություն չկա այն հարցի հետ կապված, թե որ կուսակցական համակարգն է միանշանակ ընդունելի պառլամենտարիզմի զարգացման համար. յուրաքանչյուր համակարգ ունի ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ: Կարևորը հասկանալն է, թե առանձին հասարակությունների համար ինչպիսի համակարգ կիրառելի կլինի: Երկկուսակցական մոդելը հատուկ է զարգա-

[1] Տե՛ս http://politics.ellib.org.ua/pages-7211.html, հասանելի՝ 12.06.2020:

[2] Տե՛ս **Marschall St.,** նշվ. աշխ., էջ 40:

ցած քաղաքական մշակույթ և կայուն ժողովրդավարական ավանդույթներ ունեցող երկրներին: Որպես ասվածի դասական օրինակ կարելի է բերել անգլոսաքսոնական երկկուսակցական համակարգը, որը պատմական անցքերի և երկարատև սոցիալ-քաղաքական զարգացման արդյունք է: Ասվածի ապացույց է նաև այն, որ աշխարհում ավելի շատ բազմակուսակցական համակարգերի կարելի է հանդիպել:

Փոխակերպման փուլում գտնվող հասարակություններում պառլամենտարիզմի զարգացման տեսանկյունից առավել ընդունելի ենք համարում բազմակուսակցական համակարգը: Նախ, ի տարբերություն երկկուսակցական համակարգի, որի հիմնական թերություններից է շահերի արտահայտման տեսանկյունից սոցիալական տարբեր խմբերի՝ դաշտից դուրս մղվելը, բազմակուսակցական համակարգը թույլ է տալիս հասարակական ավելի լայն շերտերի շահեր ներկայացնել: Սա պառլամենտարիզմի կարևորագույն հիմքերից մեկի՝ ներկայացուցչականության անհրաժեշտ լրացումն է, պառլամենտարիզմի կայացման հիմնական գործոններից մեկը: Որքան շատ շահեր արտահայտվեն, այնքան պառլամենտարիզմի ներկայացուցչական գործառույթն ավելի լավ կապահովի, կերաշխավորվի շահերի խմբերի հավասարակշռումը:

Երկրորդ՝ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ փոխակերպվող հասարակություններն աչքի են ընկնում կուսակցական շինարարության ոչ հարուստ ավանդույթներով: Անցումային երկրներում կուսակցություններն ինչպես ծրագրային, այնպես էլ գաղափարախոսական առումներով թույլ են զարգացած, ինչն իր հերթին կապված է մի քանի գործոնների հետ, ինչպես օրինակ կուսակցությունների անձնավորված լինելը, միակենտրոն որոշումների ընդունման իներցիոն ավանդույթը և այլն: Նման պայմաններում հավանականությունը մեծ է, որ երկկուսակցական համակարգը կարող է այլասերվել և վերածվել երկու կուսակցությունների շարունակական դիկտատուրայի: Այս մասին ահազանգում էր դեռևս Մ. Դյուվերժեն: Թեպետ վերջինիս աշխատությունը կոչվում է «Քաղաքական կուսակցություններ», սակայն դրա բովանդակությունն ավելի լայն է ու խորը, որի լեյտմոտիվը ժողովրդավարության և քաղաքական կուսակցությունների հարաբերակցության հարցն է: Ռ. Միխելսի բանաձևած երկաթյա օրենքը նա տարածում էր կուսակցությունների վրա՝ նշելով, որ քաղաքական կուսակցությունները ինչպես ցանկացած հիերարխիկ կազմակերպություն անխուսափելիորեն կարող են այլասերվել օլիգարխիայի այս կամ այն ձևի: Այս գաղափարից հետևում է, որ պառլամենտարիզմի զարգացման համար նույնքան կարևոր է ներկուսակցական ժողովրդավարությունը: Մ. Դյուվերժեն ցանկացած կուսակցության մեջ առանձնացնում է երկու խումբ մարդկանց՝ խորհրդարանականների և ղեկավարնե-

րի: Վերջիններիս փոխհարաբերակցության հարցի կարևորությունը նա բացատրում է հետևյալ կերպ. «Ժողովրդավարությունը պահանջում է, որպեսզի խորհրդարանականները վեր կանգնած լինեն ղեկավարներից և կուսակցության մյուս անդամներից, քանի որ խորհրդարանում նրանք ներկայացնում են ոչ թե նեղ կուսակցական խմբերի, այլ ընտրողների շահերը: Գործնականում երբեմն հակառակն է լինում. կուսակցությունը գերիշխանություն է հաստատում իր խորհրդարանականների նկատմամբ, ինչը ներքին օլիգարխիայի յուրօրինակ դրսևորում է»[1]: Ըստ Մ. Դյուվերժեի՝ համամասնական ընտրակարգի պարագայում, երբ յուրաքանչյուր կուսակցություն իր թեկնածուներին ներառում է ցուցակներում ըստ խիստ կարգի, անշուշտ խորհրդարանականներին կախվածության մեջ է գցում ցուցակները և թեկնածուների հերթականությունը որոշող «ներքին» ղեկավարներից: Նույնը չի կարելի ասել մեծամասնական համակարգի մասին, որի դեպքում խորհրդարանականները որոշակի անկախություն են ստանում: Ժողովրդավարացումը ներառում է ինչպես ներկուսակցական կառուցվածքային փոփոխություններ, այնպես էլ կուսակցության ներկայացուցիչների պատասխանատվության մեծացում ժողովրդի առջև[2]: Ինչպես տեսնում ենք, ընտական համակարգը և կուսակցական համակարգը առանձին դիտարկել չի կարելի: Ընտրական համակարգն ու քվեարկության կարգը կողմնորոշիչ ազդեցություն են ունենում կուսակցությունների՝ խորհրդարան մուտք գործելու վրա:

Անցումային հասարակություններում որքան շատ կուսակցություններ լինեն, այնքան մեծ կլինի ճնշումը երբեմն միանձնյա կառավարման ձգտող իշխող ուժի նկատմամբ: Համապատասխանաբար ավելի մեծ թվով կուսակցություններ այլընտրանքային ռազմավարությունների ներկայացման հնարավորություն կունենան: Ժամանակի ընթացքում կուսակցությունների բազմաթվությունը հնարավոր կդարձնի տարբեր գաղափարական ուղղությունների կուսակցությունների ընտրությունը՝ ապահովելով իրական պլյուրալիզմ: Այս դեպքում արտախորհրդարանական կուսակցությունները ևս որոշումների ընդունման գործընթացի վրա ազդելու հնարավորություններ կստանան: Բացի դրանից՝ բազմակուսակցական համակարգի պարագայում քաղաքական որոշումների ընդունման հրապարակայնությունը և հաշվետվողականությունն ավելի արդյունավետ կարող է լինել:

[1] Տե՛ս **Дюверже М.,** նշվ. աշխ., էջ 237-238:
[2] Տե՛ս նույն տեղում:

Хосровадухт Азатян, Становление партийной системы как предпосылка развития парламентаризма - В плюралистической демократии эффективное функционирование современного парламента зависит от наличия сильных, авторитетных партий. В современном мире парламентаризм неразрывно связан с деятельностью политических партий. Данная статья посвящена изучению этой взаимосвязи. Демонстрируя взаимодополняемость и схожесть функций, выполняемых парламентом и партиями, мы пришли к выводу, что отсутствие одного исключает полноценное функционирование другого. Исходя из того, что в любой стране наличие сильных и влиятельных партий прямо пропорционально созданию эффективной партийной системы, следовательно и развитию парламентаризма, мы изучили существующие в научной литературе подходы к различным партийным системам.

Khosrovadukht Azatyan, Establishment of the party system as a precondition for development of the parliamentarism - In a pluralistic democracy, the effective functioning of the modern parliament is conditioned by strong and authoritative parties. Parliamentarism in the modern world is inextricably linked to the activities of political parties. This article is dedicated to uncovering that connection. Demonstrating the complementarity and similarity of the functions performed by the parliamentary parties, we have concluded that the sense of the existence of one without the other stops. In any country, the strong influence of parties is directly proportional to the establishment of an effective party system. In this regard, we have studied the existing approaches in the scientific literature on different party systems in terms of the development of parliamentarism.

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

ԼԻԼԻԹ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Բանալի բառեր - ընտրական իրավունք, սահմանափակում, զրկում, ԱՄՆ, հիմքեր, քաղաքական, փիլիսոփայական, վերականգնում, Գերագույն դատարան:

Ներկայումս ավելի քան 6.1միլիոն[1] չափահաս ու գործունակ ԱՄՆ քաղաքացի չի մասնակցում իշխանության ձևավորման գործընթացին՝ ընտրական իրավունքի սահմանափակման կամ առհասարակ դրանից զրկված լինելու պատճառով: ԱՄՆ-ում ընտրական իրավունքը և դրա սահմանափակումները միարժեք չեն. այստեղ կան նահանգներ, որտեղ ընտրական իրավունքը չի սահմանափակվում նույնիսկ ազատազրկման և պատիժը կրելու ընթացքում (Վերմոնտ և Մեյն), և կան այնպիսիք, որտեղ մեկ անգամ հանցանք կատարած անձը ցմահ զրկվում է ընտրական իրավունքից (Այովա, Կենտուկի, Վիրջինիա): Այս տրամագծորեն հակադիր բևեռների միջակայքում էլ տեղավորվում են մյուս նահանգները, որոնք ընտրական իրավունքը սահմանափակում են այս կամ այն չափով: Հարկ է նշել, որ այդ սահմանափակումներն անցել են պատմաքաղաքական տարբեր շրջափուլեր և ձևավորվել ու ձևափոխվել են տարաբնույթ հիմնավորումներով: Կարծում ենք, որ ընտրական իրավունքի սահմանափակման՝ իրավագիտական հանրույթում հանդիպող ընդհանուր մոտեցումները խտացված ձևով կարելի է գտնել ԱՄՆ Գերագույն դատարանի նախադեպային որոշումներում, նահանգային նորմատիվ իրավական ակտերում և իրավաբանական գրականության մեջ: Բայց նախևառաջ պետք է վեր հանել այս սահմանափակումների պատմական արմատները, որոնք ձգվում են մինչև Հին Հունաստան, որտեղ հանցանք կատարած անձինք հռչակվում էին «պատիվը կորցրած» և զրկվում էին քաղաքացիական և քաղաքական իրավունքներից (*atimia*), ինչի հետևանքով չէին կարող հանդես գալ դատարանում, հրապարակային ելույթներ ունենալ, ընտրել ժողովրդական ժողովում և այլն: Հռոմում նույնպես հանցանք գործելը բերում էր «պատվի կորստի» (*infamia*), ինչն էլ իրավունակության սահմանափակման հիմք էր: Այս փորձը փոխառվեց Միջնադարյան Եվրո-

[1] https://www.sentencingproject.org/publications/6-million-lost-voters-state-level-estimates-felony-disenfranchisement-2016/

պայում, որտեղ որոշ հանցանքների համար որպես պատիժ լայնորեն օգտագործվում էր հանցագործին *օրենքից դուրս հայտարարելը*, ինչը նշանակում էր, որ նրան կարելի էր նույնիսկ կյանքից զրկել՝ առանց պատասխանատվության ենթարկվելու վախի: Հետագայում, շարունակելով այս գիծը, Եվրոպական իրավունքում ծնվեց **«քաղաքացիական մահվան»** գաղափարը, որ «վերջ էր դնում անձի իրավունակությանը, ինչպես բնական մահը վերջ է դնում անձի ֆիզիկական գոյությանը»[1]: Անգլիայում այս կարգավիճակը նշանակում էր, որ հանցանք կատարած անձի ունեցվածքը նրա մահից հետո փոխանցվում էր ոչ թե ժառանգներին, այլ միապետին, քանի որ այդ անձը համարվում էր «օրենքի համար մահացած» և զրկվում էր իրավունակությունից, այդ թվում նաև ընտրելու իրավունքից[2]:

Այսօրինակ պատիժներն, իհարկե, պետության ծայրահեղ ծանր արձագանք էին կատարված հակաօրինական արարքներին, բայց երբ համեմատում ենք քաղաքական և քաղաքացիական իրավունքներից զրկող միջնադարյան պատիժներն ու ժամանակակից պատժի տեսակների հետ վրա հասնող զուգակցող հետևանքները, տեսանելի են դառնում շոշափելի նմանություններ: Տարբերություններն այս պարագայում ավելի կարևոր են: Այսպես՝ վաղ շրջանի Եվրոպայում իրավունակության սահմանափակումները տեղի ունեին բացառապես ծանր հանցագործությունների դեպքում և անհատականացված էին: Այնուամենայնիվ պետք է փաստել, որ դեռևս այն ժամանակ հանցանք կատարած անձանց դուրս մղումը հասարակության՝ քաղաքական որոշումներ կայացնող շերտից արդեն հստակ ուրվագծվում էր: Ժամանակակից իրավակարգավորումները ԱՄՆ-ում, որ թույլ են տալիս ընտրական իրավունքի սահմանափակում, իսկ որոշ դեպքերում նաև զրկում, պատժի անհատակացման տեսանկյունից կարելի է գնահատել որպես հետքայլ: Բանն այն է, որ ամերիկյան իրավաբանական գրականության մեջ ընտրական իրավունքի սահմանափակումը հաճախ դիտարկվում է որպես ***պատժի զուգակցող հետևանք***, որ ինքնին պատժիչ բնույթ չունի: Այս մոտեցման արմատները հասկանալու համար պետք է դիտարկել ընտրական իրավունքի ձևավորման, սահմանափակումների ներդրման պատմական տարբեր փուլերը:

ԱՄՆ ընտրական իրավունքն, իհարկե, ձևավորվել է իր վրա կրելով եվրոպական իրավաքաղաքական մտքի ազդեցությունը: Բացառություն չէ նաև ազատազրկված անձանց ընտրական իրավունքի սահմանափակումը: Իսկ Մեծ Բրիտանիայից անկախանալուց հետո ԱՄՆ հրաժարվեց բրի-

[1] **Carlo Calisse,** A History of Italian law, Layton B. Register trans., 1928 p. 511.

[2] Punishment and Citizenship: A Theory of Criminal Disenfranchisement, Milena Tripkovic. Oxford University press, 2019, p. 27.

տանական իրավական ժառանգության մի մասից[1]: Նահանգային Սահմանադրությունները ընտրելու *արտոնություն* էին տալիս որոշակի բարոյական նկարագիր ունենալու դեպքում, ինչը թույլ էր տալիս հանցանք կատարած անձանց դուրս թողնել ընտրողների ցանկից[2]: Խորհրդանշական է, որ ընտրելու և ընտրվելու հնարավորությունը ընկալվում էր որպես *արտոնություն*, այլ ոչ որպես իրավունք: Այսպես 1776-1821թթ. ԱՄՆ տասնմեկ նահանգներ սահմանադրական մակարդակում հանցանք կատարած անձանց զրկեցին ընտրելու իրավունքից[3]: Հետաքրքիր մոտեցում որդեգրեց Վերմոնտ նահանգը. այնտեղ օրենսդիր մարմինը լիազորեց Գերագույն դատարանին սահմանափակել «աղաղակող հանցագործություն» կատարած անձանց ընտրական իրավունքը, սակայն այս բնորոշումը դիտարկվեց որպես ոչ որոշակի, և ընտրական իրավունքից զրկվեցին միայն ընտրական գործընթացի դեմ ուղղված հակաօրինական արարք կատարած անձինք: Այսպիսի մոտեցումը բացառություն էր, և մինչև 1868թ. ԱՄՆ տասնութ այլ նահանգներ սահմանափակեցին հանցանք կատարած անձանց ընտրական իրավունքը[4]: Պետք է հաշվի առնել նաև ժամանակի առանձնահատկությունները. նույն 1860թ., բացի անգործունակ ճանաչվածներից և հանցանք կատարած և դրա համար դատապարտված անձանցից, ընտրական իրավունք չունեին նաև կանայք, չհաշվառված տղամարդիկ, սևամորթները, զինվորներն ու ուսանողները:

ԱՄՆ ընտրական իրավունքի էության բացահայտման տեսանկյունից անկյունաքարային էր քաղաքացիական պատերազմից հետո ընդունված ԱՄՆ Սահմանադրության 14-րդ լրացումը՝ «Քաղաքացիների իրավահավասարության երաշխավորումը և նահանգի կողմից խտրական օրենքների ընդունման արգելքը» վերտառությամբ: Թվում է, թե այս փոփոխության անվանումն ու իրավունքների հավասար պաշտպանությանը վերաբերող մասը պետք է մեղմացնեին ընտրական իրավունքի սահմանափակման հիմքերը, սակայն այն հակառակ ազդեցություն ունեցավ: Դա տեսանելի դարձավ ավելի քան 100 տարի անց, երբ Գերագույն դատարանը մեկնաբանություն տվեց ընտրական իրավունքի սահմանափակման

---

[1] 1789թ. Սահմանադրությամբ արգելվեցին մարդուն առանց դատական ընթացակարգի քաղաքացիական իրավունքներից զրկելը *(bills of attainder),* ապստամբության, դրա ֆինանսավորման կամ այլ հակաիշխանական արարքի համար անձի ամբողջ գույքի բռնագրավումը հօգուտ միապետի *(forfeiture for treason)* և անձի ժառանգներին ժառանգությունից զրկելը *(corruption of blood).* ԱՄՆ Սահմանադրություն հոդված III, § 3, կետ 2:

[2] Civic Ideals. Conflicting Visions of Citizenship in U.S. History**,** Rogers M. Smith. Yale University press, 1999, էջ 529.

[3] Դրանք էին Ալաբամա, Կոնեկտիկուտ, Իլլինոիս, Ինդիանա, Կենտուկի, Լուիզիանա, Միսսիսսիպի, Միսսուրի, Նյու Յորք, Օհայո և Վիրջինիա նահանգները:

[4] **Kirk Harold Porter,** A History of Suffrage in the United States, Greenwood Press 1971, էջ 148.

սահմանադրականության ու 14-րդ փոփոխությանը համապատասխանության հարցի վերաբերյալ: Ռիչարդսոնն ընդդեմ Ռամիրեսի գործով[1] ԱՄՆ Գերագույն դատարանը որոշեց, որ նահանգների կողմից հանցանք կատարած անձանց ընտրական իրավունքից զրկելը իրավաչափ է և չի հակասում Սահմանադրությանը, քանի որ 14-րդ լրացմամբ հստակեցվում են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում անձը կարող է զրկվել ընտրելու և ընտրվելու իրավունքից. դրանք են՝ ապստամբության մասնակցությունը *կամ այլ հանցագործություն կատարելը*: Դատարանը գտավ նաև, որ նահանգները չունեն իրավունքի սահմանափակման նպատակը հիմնավորելու պարտավորություն:

Այս և ԱՄՆ դատական տարբեր ատյանների կողմից հետագայում կայացրած շատ այլ որոշումները եկան արմատացնելու «քվեատուփը մաքրագործելու[2]» ամերիկյան մոտեցումը:

Այժմ ԱՄՆ տարբեր նահանգներում գործում են ընտրական իրավունքի իրարից տրամագծորեն տարբերվող սահմանափակումներ: Այսպես՝ տասներկու նահանգներում հանցանք կատարած անձինք ընտրական իրավունքից զրկվում են ազատազրկման ընթացքում և չեն վերականգնում ընտրելու իրավունքը պատիժը կրելուց հետո[3], տասնհինգ նահանգներում ընտրական իրավունքը սահմանափակվում է ազատազրկման և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ժամանակահատվածի համար, բայց ոչ պրոբացիայի, տասնվեց նահանգներում

---

[1] **Richardson v. Ramirez** 418 U. S. 24 (1974) Կատարած հանցանքի համար ազատազրկման դատապարտված և պատիժը կրած հայցվորները Կալիֆորնիայի նահանգային դատարանում վիճարկում էին ընտրական իրավունքից զրկելու հարցը՝ հիմնավորելով այն իրավունքի սահմանափակման ընտրված եղանակի և պետության հետապնդած նպատակի անհամաչափությամբ ու «պետական գերակա շահի»բացակայությամբ: Կալիֆորնիա նահանգի Գերագույն դատարանը բավարարում է հայցը՝ ընտրական իրավունքից զրկելը համարելով ԱՄՆ Սահմանադրությանը, մասնավորապես 15-րդ լրացմանը հակասող («ԱՄՆ քաղաքացիների ընտրելու իրավունքը չի կարող որևէ կերպ սահմանափակվել նահանգների կողմից՝ կախված ռասսայից, մաշկի գույնից կամ նախկինում անազատության կարգավիճակից»): ԱՄՆ Գերագույն դատարանը այնուհետև վերանայում է այս որոշումը՝ նշելով, որ ընտրական իրավունքի սահմանափակման համար նահանգները պետական գերակա շահի համապատասխանությունը ցույց տալու պարտավորություն չունեն, և որ իրավաչափ է հանցանք կատարած անձանց ընտրական իրավունքի սահմանափակումը: Դատարանը հղում է անում ԱՄՆ Սահմանադրության 14-րդ լրացմանը:

[2] Washington v. State, 75 Ala. 582, 585 (1884)

[3] Պատիժը կրելուց հետո **բոլոր** հանցագործությունների դեպքում ընտրական իրավունքից ցմահ զրկում են միայն երեք նահանգներում: Չնայած նրան, որ 2018թ. Ֆլորիդա նահանգում ընդունված սահմանադրական փոփոխությունները ուղղված էին պատիժը կրելուց հետո ընտրական իրավունքի վերականգնմանը՝ բացառությամբ սպանության և սեռական բնույթի հանցագործությունների, այդ բարեփոխումը չի ստացվում կյանքի կոչել: Պատճառի մասին խոսվում է այս հոդվածում:

և Կոլումբիայում ընտրական իրավունքը սահմանափակվում է միայն ազատազրկման ընթացքում, և միայն երկու նահանգ (Վերմոնտ և Մեյն) չեն սահմանափակում ընտրական իրավունքն ընդհանրապես[1]: Այն նահանգները, որտեղ հանցանք կատարած անձինք զրկվում են ընտրական իրավունքից նաև պատիժը կրելուց հետո, նախատեսում են որոշակի ընթացակարգեր նահանգային իշխանությունից ներում հայցելու և քաղաքական իրավունքները վերականգնելու համար, սակայն այդ ընթացակարգերը այնպիսի բարդությունների հետ են կապված, որ փաստացի ընտրելու իրավունքը վերականգնում է նախկինում հանցանք գործած անձանց ընդամենը 3%-ը[2]:

Այս պատմական հանգամանքների և դրանց ազդեցության ներքո կայացված դատական որոշումների ուսումնասիրությունը կարևոր է ընտրական իրավունքի սահմանափակման արդի հիմնահարցերը համապարփակ ընկալելու համար: Այսպիսով, որո՞նք են այն հիմնավորումները, որ ծառայում են ազատազրկման դատապարտված և պատիժը կրող[3] քաղաքացու ընտրելու իրավունքը սահմանափակելու գաղափարին: Այդ հանգամանքները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ փիլիսոփայական և քաղաքական, որոնց էլ կանդրադառնանք ստորև:

ա. Ընտրական իրավունքի սահմանափակման փիլիսոփայական հիմնավորումները.

Ընտրական իրավունքի սահմանափակման ծիլերը նշմարելի էին արդեն անտիկ շրջանի փիլիսոփաների աշխատություններում: Ավանդաբար այս իրավունքի սահմանափակումը կամ զրկումը ընկալվում էր որպես անհատի և հասարակության միջև այդ նույն հասարակության կենսագործունեության անարգել ապահովման համար կնքված դաշինքը խախտելու հետևանք: Ընդհանուր առմամբ, ընտրական իրավունքի սահմանափակումն իր տարաբնույթ դրսևորումներով պտտվում է «եթե խախտում ես օրենքը, զրկվում ես օրենքի ստեղծման գործընթացին մասնակցելու իրավունքից» գաղափարի շուրջ: Այս մոտեցումը տեղավորվում է հասարակական դաշինքի էության շրջագծում, ինչն էլ ավելի ուշ շրջանում հիմնավորում գտավ եվրոպական փիլիսոփա-քաղաքագետների գործերում: Այսպես, Ջոն Լոքն իր քաղաքացիական կառավարման մասին երկրորդ տրակտատում առաջ է քաշում հասարակական դաշինքի և սո-

[1] https://www.sentencingproject.org/publications/felony-disenfranchisement-laws-in-the-united-states/

[2] **Marc Mauer & Tushar Kansal**, Barred for Life: Voting Rights Restoration in Permanent Disenfranchisement States, https://www.sentencingproject.org/doc/publications/fd-barredforlife. pdf

[3] Կարծում ենք, որ այդ հիմնավորումները տեղի ունեն թե՛ ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների, թե՛ պատժի կրումն արդեն ավարտած անձանց ընտրական իրավունքի սահմանափակման դեպքում

ցիումի ամեն անդամի՝ մյուսների բնական իրավունքները հարգելու պարտավորության գաղափարը: Ըստ Լոքի՝ նա, ով ոտնձգում է մեկ ուրիշի անձի կամ սեփականության դեմ, պետք է համարվի վայրի գազան, ում հետ հնարավոր չէ կառուցել ո՛չ հասարակություն և ո՛չ էլ ապահովություն, և որ այդպիսի վարք դրսևորելով նա հրաժարվում է քաղաքական կյանքին մասնակցելու իր իրավունքից: Լոքի գաղափարները զարգացնում է նաև Ժան-Ժակ Ռուսսոն, ով օրինախախտ անձին դիտարկում է որպես հասարակական դաշինքը խախտող մեղավոր կողմ, որ ավելի շատ թշնամի է, քան քաղաքացի, և որ օրենքը խախտելու հիմքով անձը դադարում է լինել այդ պետության անդամ[1]: Իսկ ահա ԱՄՆ հիմնադիրհայրերից Թոմաս Ջեֆերսոնը գտնում էր, որ հասարակության բնական կենսագործունեության ապահովման և հասարակական դաշինքի գործարկման համար անհրաժեշտ է հասարակության անդամներին հնարավորություն տալ ընդունելու օրենքներ կամ հակադրվելու դրանց: Հետաքրքիր է, որ Ջեֆերսոնը արդար և հավասար ընտրելու իրավունք նախատեսում էր միայն նրանց համար, ով «կռվում կամ վճարում է (հարկեր)[2]»: Այդ դեպքում հարց է առաջանում՝ ինչպե՞ս վարվել այն անձանց հետ, ովքեր օրինակ կռվում են, այդպիսով վճարելով իրենց պարտքը պետությանը, իսկ հետագայում կատարում հակաօրինական արարք: Ինչևէ, հատկանշական է, որ Ջեֆերսոնը, այս չափորոշիչները մատնանշելով, ընտրական իրավունք ունեցող անձանց շարքից դուրս էր թողնում միայն երեխաներին, կանանց և ստրուկներին, բայց ոչ հանցանք կատարած և պատիժը կրող անձանց:

Ամերիկյան իրավաբանական գրականությունը ընտրական իրավունքից զրկումը կամ դրա սահմանափակումը որոշակի ժամանակով, որպես կանոն, չի դիտում որպես պատժի մաս: Այս սահմանափակումները ներկայացվում են որպես «պատժի զուգակցող հետևանք»[3] (“collateral consequence” of conviction): ԱՄՆ Գերագույն դատարանի բնորոշմամբ ընտրական իրավունքի սահմանափակման նպատակը ոչ թե պատժելն է, այլ *քվեարկության համար օրինական հիմքեր ապահովելը*[4]: Այսպիսի մեկնաբանությունը ամրապնդում է ավելի վաղ ձևակերպված «քվեատուփի մաքրագործման» և անցանկալի տարրերին ընտրական գործընթացից հեռու պահելու մոտեցումը: Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ

[1] **Jean-Jacques Rousseau,** Basic Political Writings, 1762, էջ 159 (Donald A. Cress ed. & trans., Hackett Publ'g. 1987)

[2] Letter from Thomas Jefferson to Samuel Kercheval (July 12, 1816), *in* Thomas Jefferson, Political Writings էջ 212. (Joyce Appleby & Terence Ball eds., 1999)

[3] **Velmer S. Burton,** The Collateral Consequences of a Felony Conviction: A National Study of State Statutes, 51 FED. PROBATION 52, 52 (1987)

[4] **Trop v. Dulles,** 356 U.S. 86, 96-97 (1958)

ընտրական իրավունքի սահմանափակումը, իսկ որոշ նահանգներում այս իրավունքից զրկելը, իրենց մեջ կրում են պատժիչ տարրեր թե՛ ձևի, թե՛ ստացվող վերջնարդյունքի մասով։

Ամփոփելով հասարակական դաշինքի և ընտրական իրավունքի կապի մասին իրավափիլիսոփայական մոտեցումները՝ եզրակացնում ենք, որ դրանք երկուսն են։ Առաջին մոտեցման համաձայն՝ ընտրական իրավունքի սահմանափակումն ունի պատժիչ բնույթ և հետևանք է հանցանք կատարած անձի կողմից հասարակական դաշինքը խախտելու։ Իսկ ահա երկրորդ (ամերիկյան) մոտեցման հանմաձայն՝ ընտրական իրավունքի սահմանափակման էությունը ոչ այնքան պատժիչ է, որքան պաշտպանական։ Իսկ ի՞նչ արժեք է պաշտպանության տակ առնվում այս սահմանափակմամբ։ Ըստ ամերիկյան իրավաբան-գիտնականների՝ պաշտպանվում է քվեատուփը հակաիրավական ցանկացած արարքից, պաշտպանվում են հանրապետության և ազատության գոյության հիմքերն ու սկզբունքները, քանի որ մեկ անձի բարիք չպետք է գերակա լինի ընդհանուրի բարիքից, և հակաօրինական գործողություն կամ անգործություն թույլ տվող անձը իրեն այդպիսով հեռացնում, կտրում է տվյալ հասարակությունից և համընդհանուր բարիք ստեղծելու ձգտումից։

Այժմ, ընտրական իրավունքի սահմանափակման վերաբերյալ այն կտրուկ հիմնավորումները, որ առկա էին լուսավորության դարաշրջանում, մեծապես ձևափոխվել ու մեղմվել են։ Սա 19-րդ դարի կեսերից սկիզբ առնող ժողովրդավարական հասարակարգի մասին ժամանակակից պատկերացումների հետևանք է։ Ըստ էության, ընտրական իրավունքի սահմանափակման շատ փիլիսոփայական հիմնավորումներ ոչ արդիական են, նախևառաջ որովհետև քաղաքացիական և քաղաքական իրավունքների պաշտպանության ալիքը ընտրական իրավունքը վաղուց չի դիտում որպես արտոնություն։ Եվ բնական է, որ ընտրական իրավունքի ճանաչումը, որ միտված է ապահովելու կառավարման ժողովրդավարական ռեժիմի գոյությունն ընդհանրապես, առավել համապարփակ պաշտպանության օբյեկտ է, քան նախկինում որպես արտոնություն ընկալվող ընտրելու հնարավորությունը։ Եվս մեկ համեմատաբար նոր մոտեցում խնդիրը հիմնովին այլ է դարձնում, մասնավորապես, երբ ընտրական իրավունքի սահմանափակումը դիտարկվում է ա. ծննդյան փաստով քաղաքացիության և դրանից բխող իրավունքների ձեռքբերման ու բ. հանցանք կատարած անձանց վերականգնման ու ամբողջապես հասարակության մեջ ինտեգրվելու հնարավորության/անհրաժեշտության լույսի ներքո[1]։

բ. Ընտրական իրավունքի սահմանափակման քաղաքական հիմնա-

[1] https://scholar.smu.edu/cgi/viewcontent.cgi?article=2247&context=smulr, էջ *25*

վորումները

Ի պաշտպանություն այս իրավունքի սահմանափակման՝ բերվում են նաև քաղաքական նպատակահարմարությանը վերաբերվող հիմնավորումներ: Դրանցից մեկը առաջարկում է, որ ընդհանրապես հանցանք կատարած անձանց քվեատուփին մոտ թողնելը կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության մեղմացման քաղաքականության վարման, այսինքն ենթադրվում է, որ այդ անձինք կքվեարկեն այն թեկնածուների և կուսակցությունների օգտին, որոնք հակված կլինեն մեղմելու հանցագործության հետևանքով վրա հասնող քրեական պատասխանատվությունը[1]: Այս պնդումն ունի մի շարք թերի կողմեր: Առաջին՝ քրեական պատասխանատվության մեղմացման օգտին քարոզելու և հետագայում ընտրություններում ցանկալի արդյունք ապահովելու համար հանցանք կատարած անձինք պետք է ունենան միատարր կազմակերպական մարմին, ինչը պարտադիր, բայց ոչ բավարար պայման կլիներ նման նպատակի հասնելու համար: Քրեական պատասխանատվության մեղմացմանը հասնելու համար դատապարտված անձանց անհրաժեշտ կլիներ նաև այն թեկնածուն կամ կուսակցությունը, որ պատրաստ կլիներ տանելու այդ գիծը: Այսպիսի հնարավորությունները, սակայն, որևէ փաստական հիմնավորում չունեն: Ավելին ԱՄՆ օրինակով քիչ չեն դեպքերը, երբ նախկինում հանցանք գործած և պատիժը կրած քաղաքացիները հանդես են եկել քրեական պատասխանատվության և պատժի խստացման դիրքերից, կամ երբ նրանք ընդգրկվել են երդվյալ ատենակալների ցանկում և մեղադրական եզրակացության են հանգել[2]:

Առհասարակ, համեմատաբար համասեռ խմբի ընտրական իրավունքի սահմանափակումը (այս դեպքում ազատազրկման դատապարտված անձանց) սահմանադրական և ժողովրդավարական արժեքների համապատասխանության բազմաթիվ հարցեր է ծնում: Այս խնդիրը հստակ բարձրացվում է ԱՄՆ Գերագույն դատարանի Քարրինգթոնն ընդդեմ Ռաշի գործում, որտեղ Տեխաս նահանգի իշխանությունները նահանգում ծառայող զինվորականների ընտրական իրավունքը սահմանափակում էին, եթե վերջիններս մինչև ծառայության անցնելը գրանցված չեն եղել այդ

---

[1] **Carl N. Frazier,** *Removing the Vestiges of Discrimination: Criminal Disenfranchisement Laws and Strategiesfor Challenging Them,* 95 KY. L.J. 2006թ, էջ 484-485

[2] **James M. Binnall,** *Convicts in Court: Felonious Lawyers Make a Case for Including Convicted Felons in the JuryPool,* 73 ALB. L. REV. 2010թ, 1379, 1403
https://poseidon01.ssrn.com/delivery.php?ID=078097097001120067090003013094120098026008055027062063031026095093116094067092002074110126018097001111053099093103119085081007007011088000015100031127002124001001005003018024085014088115007111096068027077083120070073025016031107081100031093123002119024&EXT=pdf

նահանգում: Նահանգային իշխանությունների մտավախությունը կապված էր տեղական ընտրություններում զինվորականների դերի և ազդեցության մեծացմամբ: Սրան ի պատասխան՝ Գերագույն դատարանը վճռեց, որ «սահմանադրորեն անթույլատրելի է որոշակի խմբի՝ ընտրողների ցուցակներից դուրս թողնելը, եթե դա պայմանավորված է միայն այն մտավախությամբ, թե ինչպես նրանք կքվեարկեն»[1]: Այս անկյունաքարային որոշումից հետևում է, որ հանցանք կատարած անձանց ընտրական իրավունքի սահմանափակման այս հիմնավորումը քննադատության չի դիմանում:

Քաղաքական նպատակահարմարության տեսանկյունից բերվում է ևս մեկ հիմնավորում, ըստ որի հանցանք կատարած անձանց ընտրական իրավունք տրամադրելը կարող է բերել ընտրախախտումների շեշտակի աճի, քանի որ ենթադրվում է, որ նախկինում օրենքը արդեն կոպտորեն խախտած անձը ավելի հակված է ընտրակեղծարարությունների, իր ձայնը վաճառելու կամ ուրիշինը գնելու[2]: Հարկ է նշել, որ մեղավորության կանխավարկածով առաջնորդվող այս ենթադրությունը որևէ փաստական բազա չունի հիմքում: Ավելին, ընտրական գործընթացին խոչընդոտելու հանցակազմ կարող է առկա լինել անկախ անձի ընտրելու իրավունքի սահմանափակված լինելու հանգամանքի:

Ամփոփելով ընտրական իրավունքի սահմանափակման օգտին բերվող երկու խումբ հիմնավորումները՝ պետք է արձանագրել, որ այսպիսի միջոցի կիրառության նպատակահարմարությանն ու արդյունավետությանը վերաբերող շատ հարցեր բաց են մնում: Այսպես օրինակ՝ ա. արդյոք ընտրական իրավունքի սահմանափակումը/զրկումը նվազեցնում է հանցագործությունների ռեցիդիվի ցուցանիշները, բ. նպաստում է արդյոք ընտրական իրավունքի սահմանափակումը ազատազրկման դատապարտված և պատիժը կրած քաղաքացու ինտեգրմանը հասարակությանը գ. արդյոք գործունակ քաղաքացիների մի մասին քաղաքական որոշում կայացնելու և իշխանության ձևավորմանը մասնակցելու իրավունքի սահմանափակումը չի խախտում ընտրական իրավունքի ընդհանրության և հավասարության սկզբունքը դ. հաշվի առնելով որոշ պետություններում անցկացվող անուղղակի ընտրությունների առանձնահատկությունները՝ արդյոք հարյուր հազարավոր քաղաքացիների ընտրական իրավունքի սահմանափակումը (ինչպես դա եղավ Ֆլորիդա նահանգում, երբ 2000թ նախագահական ընտրությունների ելքը որոշվեց ընդամենը

[1] **Carrington v. Rash,** 380 U.S. 89, 94 (1965)

[2] **Jamie Fellner & Marc Mauer,** Losing the Vote: The Impact of Felony Disenfranchisement Laws in the United States, The Sentencing Project *&* Human Rights Watch, 1998, էջ 15

537 ձայնով[1]) արտացոլում է տվյալ պետության (նահանգի) ձայների լիարժեք պատկերը և այլն։

Որպես եզրափակում՝ տեղին կլինի հիշել ԱՄՆ հեղափոխական հայր Թոմաս Փեյնի խոսքերը. «Ներկայացուցիչներ ընտրելու իրավունքը հիմնարար իրավունք է, որով էլ պաշտպանվում են մարդու այլ իրավունքները, և այս իրավունքից զրկումը իջեցնում է մարդուն ստրուկի կարգավիճակի, քանի որ ստրկության էությունը ուրիշի կամահայտնության սուբյեկտ լինելը է, որպիսի դերում հայտնվում է նա, ով ինքը չի ընտրում իր ներկայացուցչին[2]»։

Лилит Сукиасян, Обоснования ограничения избирательного права на примере Соединенных Штатов Америки - Автор представляет основания ограничения избирательного права, раскрывая их историко-политические и философские предпосылки. В статье подробно рассматриваются краеугольные решения Верховного суда США о конституционности общего ограничения избирательного права и его соответствие 14-й поправке к Конституции США. Автор приводит опыт разных штатов США, проводит параллели между законодательными обоснованиями ограничения права голосовать и обоснованиями встречающиеся в юридической литературе.

Lilit Sukiasyan, The grounds for disenfranchisement on the example of the United States - The author represents the grounds for disenfranchisement, revealing their historical, political and philosophical preconditions. The article details the US Supreme Court decisions on the constitutionality of the restriction of the right to vote and its compliance with the 14th Amendment to the US Constitution. The author brings the experience of different states of America, draws parallels between the legal grounds for disenfranchisement and justifications met in legal litarature of the developed world.

---

[1] Ֆլորիդա նահանգը մինչև 2018թ սահմանադրական փոփոխությունները ընտրական իրավունքից զրկում էր նախկինում հանցանք կատարած բոլոր անձանց։ Այժմ նահանգի Սահմանադրության հոդված VI, 4րդ մասով ընտրական իրավունքի վերականգնում է նախատեսում պատիժն արդեն կրած, ինչպես նաև պրոբացիայի ժամանակահատվածում գտնվող և պատժից պայմանական վաղաժամկետ ազատված անձանց համար, բացառությամբ սպանություն և սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց (https://www.flsenate.gov/Laws/Constitution#A11)։ Սակայն Ֆլորիդա նահանգի օրենսդիր մարմինը ընդունեց օրենք, ըստ որի պատժի կրումը ավարտուն է համարվում այն պահից, երբ հանցանք կատարած անձը վճարել է նաև բոլոր տույժերն ու տուգանքները, հատուցել է իր հակաիրավական գործողությամբ պատճառված վնասներն ամբողջությամբ։ Այս հարցով դատական գործն այժմ գտնվում է նահանգային վերաքննիչ դատարանի վարույթում։

[2] Dissertation on First Principles of Government, The Writings of Thomas Paine, ed. Moncure D. Conway, հատոր 3, էջ 267 (1895)

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԱՂԱԴՐԻՉԻ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐԻ ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանալի բառեր - իսկական բարդություն, սերող հիմք, բաղադրող հիմք, բայական հիմնաբաղադրիչ, անվանական բաղադրիչ, խնդրառություն, հոլովական իմաստ, հոլովական հարաբերություն:

Լեզվի համակարգում ամենաշարժունը բառապաշարն է, բառաբարդումը՝ լեզվի բառային կազմի հարստացման գլխավոր ուղիներից մեկը: Լեզվաբանական գրականության մեջ բարդությունը սահմանվում է իբրև երկու և ավելի հիմնական ձևույթների կամ բառերի կցումով կամ հարադրությամբ կազմված բաղադրություն՝ մեկ ընդհանուր շեշտ ունեցող: Հայերենի բառակազմության առանձնահատկությունները քննվել են թե՛ լեզվի ամբողջական կառուցվածքը ներկայացնող, թե՛ բուն բառակազմությանը նվիրված ուսումնասիրություններում:

Բառերի տրոհելիության ընկալումը նշմարելի է դեռևս վաղ քերականների գործերում[1], սակայն, ինչպես նկատում է Լ. Հովսեփյանը, «հայ քերականագիտության մեջ ընդունված սխեմայի համաձայն բառակազմության հարցերը քերականական ձեռնարկներում չեն առանձնացվել, այլ քննվել են յուրաքանչյուր խոսքի մասի նկարագրության հետ, ի թիվս դրանց ուղեկցող քերականական այլ հատկանիշների»[2]: Աշխարհաբարի քերականությունը ներկայացնող հեղինակներից առաջինը, որը, հիմնականում չկրկնելով իր նախորդներին, բառակազմական իրողությունները քննել է իբրև լեզվական համակարգի առանձին ու ինքնուրույն դրսևորումներ, եղել է Մ. Աբեղյանը: Վերջինս բարդությունները ներկայացնում է երեք խմբով՝ առանձնացնելով հարադրական, կցական և իսկական բարդություններ[3]:

---

[1] Տե՛ս **Ջահուկյան Գ.,** Գրաբարի քերականության պատմություն, Ե., 1974թ., **Ջահուկյան Գ.,** Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954թ.:

[2] **Լ. Հովսեփյան**, Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987թ., էջ 5:

[3] **Մ. Աբեղյան,** Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965թ., էջ 169:

Միջանկյալ կարգով նշենք, որ հետագայում հայ լեզվաբանները, մասնավորապես՝ Գ. Սևակը, զարգացրին աբեղյանական այս դասակարգումը՝ ավելացնելով չորրորդ տեսակը՝ «նորագույն հապավումներ» անվանումով[1]:

Ավելի ուշ Մ. Աբեղյանի բառակազմական այս ուսմունքի վերաբերյալ դրսևորվեց քննադատական վերաբերմունք, որը վերաբերում է հիմնականում «*իսկական* և *կցական* բարդություններ», «*իսկական* և *անիսկական* բարդություններ» անվանումներին[2]: Էդ. Աղայանը Մ. Աբեղյանի տեսության մեջ առավել անընդունելի է համարում այն, որ վերջինս «բարդություն» ընդհանուր անվանումով է կոչել ինչպես հարադրությունները՝ իրենց բոլոր տեսակներով, այնպես էլ բուն բարդությունները, ինչի հետևանքով մասնավորապես մթագնել են բաղադրյալ բառերի կառուցվածքային տարբերությունները[3]: «Համաժամանակյա հայեցակետով և բաղադրյալ բառերի կառուցվածքային-բառակազմական հիմնական առանձնահատկություններով, բաղադրյալ բառերը բաժանվում են երկու տեսակի՝ վերլուծական և համադրական բաղադրությունների»[4],- գրում է Էդ. Աղայանը՝ «բարդություն» անվանելով միայն այն բառերը, որոնք ներկայացնում են երկու կամ ավելի հիմնական ձևույթների միավորում մեկ բառում: Ըստ այսմ, նա առանձնացնում է բարդությունների հետևյալ տիպերը՝ բուն կամ իսկական, կցական կամ կապակցական, կրկնական և հատվածական[5]:

Բնորոշելով իսկական բարդությունների կազմությունը՝ Մ. Աբեղյանը հատկանշական է համարում հոդակապի առկայությունը, առաջին բաղադրիչի ուղղականաձև և հնչյունափոխված լինելը[6]: Ներկայումս, սակայն, այս հատկանիշներից ոչ մեկն էլ չի դիտվում որպես իսկական բարդության էական հատկանիշ[7]:

Էդ. Աղայանը իսկական բարդությունների բնորոշման հիմք է համարում նրանցում երկու բաղադրական հիմքի՝ սերող և բաղադրող հիմքերի պարտադիր առկայությունը[8]: Սերող է այն բաղադրական հիմքը, որին ավելանում է որևէ այլ բաղադրական հիմք կամ ածանց՝ կազմելով նոր բառ: Բաղադրող հիմքը այն բաղադրական հիմքն է, որը, ավելանալով սերող հիմքին, կազմում է նոր բարդություն:

---

[1] Տե՛ս **Գ. Սևակ,** Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955թ.:

[2] Տե՛ս **Մ. Աբեղյան,** Երկեր, Զ, Ե., 1974թ., էջ 137:

[3] Տե՛ս **Է. Աղայան,** Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984թ., էջ 267:

[4] **Գ. Ջահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան**, Հայոց լեզու, 1-ին մաս, Ե., 1980թ., էջ 431:

[5] Տե՛ս նշվ. աշխ., էջ 432:

[6] Տե՛ս **Մ. Աբեղյան,** Հայոց լեզվի տեսություն, էջ 189:

[7] Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Ջահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 432-433:

[8] Տե՛ս **Էդ. Աղայան,** նշվ. աշխ., էջ 271:

Ներկա հոդվածում քննության ենք առել բայական հիմքով բաղադրություններում բաղադրիչների հոլովական հարաբերությունները՝ փորձելով պարզել՝ ինչպիսի՞ն է բայական հիմնաբաղադրիչի խնդրառությունը գրաբարի իսկական բարդություններում: Ուսումնասիրությունը հենվում է հինգերորդ դարից մեզ ավանդված մատենագրության բառապաշարի վրա, որ քաղել ենք Նոր Հայկազյան բառարանից[1]: Փաստական նյութի ուսումնասիրությունը ևս մեկ անգամ հաստատում է, որ բայական հիմքերը իբրև իսկական բարդության բաղադրական միավոր խիստ կենսունակ են գրաբարում և լայնորեն վկայված են գրաբարյան բառակազմական կաղապարներում: Ընդ որում, նման կառույցներում բայական բաղադրիչը հանդես է գալիս գերազանցապես իբրև բաղադրող հիմք՝ պայմանավորված այն հանգամանքով, որ բարդության հիմնական իմաստն արտահայտողը երկրորդ բաղադրիչն է: Այս տեսակետից նշենք, որ թեև քիչ են, բայցևայնպես հանդիպում են այնպիսի բարդություններ, որոնցում ոչ թե առաջին բաղադրիչն է երկրորդի լրացումը, այլ հակառակը՝ օտարաբան կազմություններ[2]. *արժանապատիժ, արժանատանջ* և այլն:

Իսկական բարդությունների բաղադրիչները միմյանց հետ գտնվում են որոշակի քերականական հարաբերության մեջ, որով և բաղադրվում է բարդության ներքին ձևը: Այդ քերականական կապը չնայած ձևաբանորեն չի դրսևորվում, այսուհանդերձ բառակազմական հավելյալ քայլով տվյալ բարդությունը կարող ենք վերածել բառակապակցության, տվյալ դեպքում՝ բայական բառակապակցության:

Այս բարդությունները բառակապակցությունների վերածելիս առաջին բաղադրիչը, որը, նշենք, գրեթե միշտ արտահայտված է ուղիղ ձևով, գործածվում է տարբեր հոլովաձևերի նշանակությամբ: Գործառական մեծ բեռնվածություն ունեն բայական հիմնաբաղադրիչով այն կաղապարները, որոնցում ստորադաս անդամը գործածված է հայցական հոլովի նշանակությամբ:

Եվ այսպես, բերենք իսկական բարդություններում բայական հիմքին լրացնող անուն խոսքի մասի՝ տարբեր հոլովաձևերի իմաստով գործածության օրինակներ: Ուղղական-հայցականի նշանակությամբ՝ *աղբակեր (ուտել-անցյալի հիմք՝ կեր, կերօղ զաղբս), աղքատատեցութիւն (ատել-անցյալի հիմք՝ ատեաց. ատելն զաղքատս), առակագրութիւն (գրել-ներկայի հիմք՝գիր. գրել զառակս), դեղատու (տալ-անցյալի հիմք՝տու. տուօղ զդեղ), ձեռնհաս (հասանել-անցյալի հիմք՝հաս. ձեռն հասանէ), իւղարարութիւն (առնել-անցյալի հիմք՝արար. առնել զիւղ), կաշառառու (առնուլ-*

[1] Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1-ին, Ե., 1979թ., հ. 2-րդ, Ե., 1981թ.:

[2] Տե՛ս **Վ. Առաքելյան**, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Ե., 1984թ., էջ 219, **Ս. Ղազարյան,** Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 2006թ., էջ 153:

անցյալի հիմք՝ առ/առի. առօղ զկաշառ), եղեգնաբոյս (բուսանել-անցյալի հիմք՝բուս. եղեգն բուսանի):

Սեռական-տրականի նշանակությամբ՝ *դիւանուէր (նուիրել-ներկայի հիմք՝նուէր. նուիրեալ դիւաց), թիկնացաւութիւն (ցաւիլ-ներկայի հիմք՝ցաւ. թիկանց ցաւիլ), ճակատագիր (գրել-ներկայի հիմք՝գիր. գրեալ ի ճակատի), ճանապարհադաւ (դաւել-ներկայի հիմք՝դաւ. դաւել ի ճանապարհի), նաւաբեկութիւն (բեկանիլ-անցյալի հիմք՝բեկ. բեկանիլն նաւու), Աստուածիջակ (իջանել-անցյալի հիմք՝էջ. իջանելն Աստուծոյ), երկնահայեաց (հայիլ-անցյալի հիմք՝հայեաց. հայեաց յերկինս):*

Բացառականի նշանակությամբ՝ *արեգակնակէզ (կիզուլ- անցյալի հիմք՝կէզ. կիզեալ յարեգակնէ), աստուածադատ (դատիլ-ներկայի հիմք՝դատ. դատեալ յԱստուծոյ), բարոյախօս (խօսիլ-ներկայի հիմք՝խօս. խօսիլ զբարոյից), երկնանձրեւ (անձրեւել-ներկայի հիմք՝անձրեւ. յերկնից անձրեւեալ), բքալլուկ (լլկել-ներկայի հիմք՝լլուկ. լլկեալ ի բքոյ), գազանածախ (ծախել-ներկայի հիմք՝ծախ. ի գազանաց ծախեալ), դայեկասնունդ (սնանիլ-անցյալի հիմք՝սուն. ի դայեկէ սնեալ), աստուածերկիւղ (երկնչիլ-անցյալի հիմք՝երկի. երկնչիլ յԱստուծոյ), դիւաբախ (բախել-ներկայի հիմք՝բախ. բախեալ ի դիւէ), մեղուաբուծեալ (բուծանել-անցյալի հիմք՝բոյծ. բուծեալ ի մեղուաց):*

Գործիականի նշանակությամբ՝ *արիւնաթաթաւ (թաթաւել-ներկայի հիմք՝թաթաւ. արեամբ թաթաւեալ), բրածեծ (ծեծել- ներկայի հիմք՝ծեծ. ծեծել բրով), գանահար (հարկանել-անցյալի հիմք՝հար. հարկանել գանիւ), դեղագործեմ (գործել-ներկայի հիմք՝գործ. գործել դեղօք), գետապատ (պատել-ներկայի հիմք՝պատ. պատեալ գետով), ըղձալից (լնուլ-անցյալի հիմք՝լից. լնուլ ըղձիւք), կաթնասնութիւն (սնանիլ-անցյալի հիմք՝սուն. սնանիլ կաթամբ), բանապաճոյճ (պաճուճել-ներկայի հիմք՝պաճոյճ. բանիւ պաճուճեալ), մատնագոյց (ցուցանել-անցյալի հիմք՝ցոյց. ցուցանել մատամբ):*

Բերենք օրինակներ նաև այնպիսի բարդությունների, որոնցում բայական բաղադրող հիմքին լրացնող սերող հիմքը այս կամ այն հոլովաձևի նշանակությամբ գործածված է խոսքիմասային ա՛յլ՝ գոյականից տարբեր արտահայտությամբ: Այսպես, *չարակամ* (Ա+Բ, սերող հիմքը գործածված է հայցական հոլովի նշանակությամբ. զչար), *եօթնատես* (Թ+Բ, գործիական. եօթամբ), *ճշմարտակորոյս* (Ա+Բ, հայցական. զճշմարիտ), *երկաբնակ* (Թ+Բ, ներգոյության իմաստ. յերկուս), *ամենաբոյծ* (Դ+Բ, հայցական. զամենայն), *ամենաբոլոր* (Դ+Բ, գործիական. ամենայնիւ), *ինքնակոչ* (Դ+Բ, բացառական. յինքենէ):

Կատարելով գրաբարի՝ բայահիմքով իսկական բարդության կազմում անուն բաղադրիչի լրացական դերի քննություն՝ նշենք, որ վերջինս, ուղիղ ձևով հանդես գալով հանդերձ, կարող է արտահայտել ինչպես թեք

հոլովաձևի իմաստ, այնպես էլ նախդիր-նախադրությամբ կառույցի: Այսպես, օրինակ՝ *ազգաբանել-զազգէ, վասն ազգի, առ ազգ, երկրագնաց՝ ի վերայ երկրի-երկրաւ, աստուածաբոյս՝ Աստուծով-ի ձեռն Աստուծոյ, բքալլուկ՝ ի բքէ-յերեսաց բքոյ-առ բքի:*

Այս տեսակետից կարելի է առանձնացնել այն իսկական բարդությունները, որոնցում սերող հիմքն արտահայտում է ներգոյության՝ «մեջ»-ի իմաստ. *աղտեղածուփ (յաղտեղի ծփեալ), աղօթակայութիւն (յաղօթս կալ), գերեզմանաբնակութիւն (բնակիլ ի գերեզմանս), դրախտաճուն (աճեցեալ ի դրախտի), մատենապատում (պատմեալ ի մատենի), բանտակալ (կալեալ ի բանտի), եդեմատունկ (տնկեալ յեդեմ), խցարգել (արգելուլ ի խցի):*

Բայական խնդրառությանն անդրադառնալիս չմոռանանք նաև այն, որ նույն կառույցը կարող է ծառայել տարբեր իմաստների դրսևորմանը: Այսպես՝ «բանաշուրջ» բառույթում սերող հիմքը կարելի է ընկալել և՛ հայցական հոլովի նշանակությամբ՝ *որ շրջէ զբանս, և՛ բացառական հոլովի՝ որ շրջի ի բանից:*

Նմանապես, «աւազանածին» ՝ *վերածնեալ յաւազանէ, աւազանաւ, յաւազանի,* «առակախօս»՝ *խօսիլ զառակս, առակօք, խելաբերել՝ բերել ի խելս, զխելս:* Ինչպես քանիցս նշեցինք, և ինչպես հաստատում են բերված օրինակները, օրինաչափը իսկական բարդության կազմում անուն խոսքի մասի ուղղականաձև լինելն է: Այսուհանդերձ, հանդիպում են նաև այնպիսիք, որոնցում առաջին բաղադրիչը քերականական ձևավորում ունի. *<u>զմիմեանսպանութիւն</u>, <u>իւրեանցակուռ</u>, <u>իւրախօս</u>, <u>կայսերագիր</u>, <u>աստեղալից</u>, <u>օրէնսդրութիւն</u>, <u>կանանցածին</u>, <u>ձերբակալ</u>, <u>ականատես</u>, <u>արենհեղութիւն</u>:* Միևնույն ժամանակ նկատենք, որ շատ դեպքերում զուգահեռ գործածվում են հիմքի և՛ քերականական ձևավորում ունեցող, և՛ ուղղականաձև տարբերակներ (հմմտ.՝ օրէնսդրութիւն/օրինադրութիւն), արդի լեզվաբանական տերմինաբանությամբ՝ հիմքի տիպաբանական տարբերակներ:

Ամփոփելով բայահիմքի խնդրառության քննությունը գրաբարի իսկական բարդություններում՝ նշենք, որ բայական հիմքերը ներկայանում են բավական ճկուն բառակազմական հնարավորություններով: Նման բարդությունները բառակապակցությունների վերլուծելիս առաջին բաղադրիչը, որը գերազանցապես գոյական է, օրինաչափորեն լինելով ուղղականաձև, բացարձակ գերակշռությամբ ստանում է հայցական հոլովի արտահայտած իմաստ:

Анна Варданян, Управление основного глагольного компонента в сложных словах древнеармянского - В настоящей статье нами рассмотрены падежные отношения между компонентами в сочетаниях с глагольной основой и сделана попытка выяснить управление основного глагольного

компонента в сложных словах древнеармянского. Исследование основано на лексике произведений литературы пятого века, взятой нами из Нового словаря Айказян.[4] Компоненты сложных слов находятся друг с другом в определенных грамматических отношениях. Эта грамматическая связь хотя морфологически не проявляется, однако дополнительные словообразовательные шаги могут привести к трансформации данного сложного слова в словосочетание, в данном случае – в глагольное словосочетание. При трансформации данных сложных слов в словосочетания первый компонент, который почти всегда выражен прямо, употребляется в значении разных падежных форм (в значении именительного-винительного: *աղբակեր, ձեռնհաս*, родительного-дательного: *թիկնացաւութիւն, ճակատագիր,* в значении отложительного*: արեգակնակէզ, բարոյախիւս,* в значении творительного: *ըղձալից, մատնցոյց).* Большую функциональную нагрузку несут модели с основным глагольным компонентом, в которых подчиненный член употреблен в значении винительного падежа. Приведем также примеры сложных слов, в которых производящая основа в значении той или падежной формы употребляется в другом, отличном от существительного смысле. Например, *չարակամ, եօթնատես, ճշմարտակորոյս, երկաբնակ ամենաբոյծ, ինքնակոչ.* При рассмотрении глагольного управления следует также отметить, что та же конструкция может служить для выражения разных смыслов. Так, в слове «բանաշուրջ» производящую основу можно воспринимать и в значении винительного, и в значении отложительного падежа. Встречаются также слова, в которых первый компонент грамматически оформлен: *զմիմեանսպանութիւն, աստեղալից, կանանցածին, արենհեղութիւն.*

Anna Vardanyan, The declination of the verbal main component in real complexities in grabar (Classical Armenian) - In the current article we have examined the declension relations of the component parts in the constituents with verbal basis, trying to find out what is the declination of the verbal main component in real complexities in Grabar (Classical Armenian). The studies are based on the vocabulary come down to us from our manuscripts. The words were taken from New Haigazian dictionary.[4] The components of real complexities are in certain grammatical relations with each other. That grammatical connection though is not manifested morphologically and we can turn that complexity into word combinations with an additional word formation step, i.e. into verbal word combinations. In this process, the first component which is always expressed directly is used with the meaning of different cases (Nominative-Accusative - *աղբակեր, ձեռնհաս,* Genitive-Dative - *թիկնացաւութիւն, ճակատագիր,* Ablative - *արեգակնակէզ, բարո-*

յախսու, Instrumental - *ըղձալից, մատնցոյց*). Functionally loaded are those patterns in which the subordinate member is used with the meaning of Accusative case. Let us bring examples in which the first component in the complexities is not noun but another part of speech. Like, *չարակամ, եօթնատես, ճշմարտակորոյս, երկաբնակ ամենաբոյծ, ինքնակոչ*, etc. Speaking of verbal declinations it should be noted that the same construction can be manifested with the meanings of different cases: In the word "բանաշուրջ", the verbal root can be understood both in Accusative case, *որ շրջէ զբանս, and Ablative case, որ շրջի ի բանից.* There are such in which the first component has a grammatical formation *<u>զմիմեանսպանութիւն</u>, <u>աստեղալից</u>, <u>կանանցածին</u>, <u>արենհեղութիւն</u>, etc.*

ԲԱՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանալի բառեր - իսկական բարդություն, սերող հիմք, բաղադրող հիմք, բայական հիմնաբաղադրիչ, շարահյուսական կապակցություն, բայական բառակապակցություն, շարահյուսական հարաբերություն, շարահյուսական հարաբերության բազմանշանակություն:

Գիտատեսական գրականության մեջ իսկական բարդությունները բնորոշվում են սերող և բաղադրող հիմքերի պարտադիր առկայությամբ[1]: Սերող է այն բաղադրական հիմքը, որին ավելանում է որևէ այլ բաղադրական հիմք կամ ածանց՝ կազմելով նոր բառ: Բաղադրող հիմքը այն բաղադրական հիմքն է, որը, ավելանալով սերող հիմքին, կազմում է նոր բարդություն: Հայերենի բարդ բառերի գերակշռող մասում հիմնական իմաստային կենտրոն հանդիսացող մասը վերջին բաղադրիչն է, իսկ առաջին բաղադրիչը որոշակիացնում-կոնկրետացնում է այդ վերջնաբաղադրիչի արտահայտած իմաստը, ասել է, թե՝ հիմքերի հաջորդականության մեջ բաղադրող հիմքը վերջնաբաղադրիչն է[2]: Բայական հիմքերը իբրև իսկական բարդության բաղադրական միավոր նկատելիորեն հաճախադեպ են գրաբարում և լայնորեն վկայված են գրաբարյան բառակազմական կաղապարներում:

Ինչ վերաբերում է բայական հիմնաբաղադրիչով իսկական բարդության կազմում ստորադաս բաղադրիչի խոսքիմասային բնութագրին, նշենք, որ բայահիմքն առավելապես բաղադրվում է գոյականի հետ: Որպես պարզաբանում հավելենք, որ գոյական+բայահիմք կաղապարին են վերագրվում նաև այն կառույցները, որոնցում առաջնաբաղադրիչը թեև ածականական ծագման է, բայցևայնպես այդ ածականը իր բուն խոսքիմասային արժեքով հանդես չի գալիս, ինչպես՝ *առաքինասէր (սիրող առաքինութեան), բարելից (լցեալ բարեօք), խաղաղապարգեւ (պարգեւիչ խաղաղութեան), հիւանդաբեր (բերօղ զհիւանդութիւն), արդարուսոյց (ուսուցիչ արդարութեան)* և այլն: Լ. Հովսեփյանն այս առիթով գրում է. «Եթե գո-

[1] **Աղայան Է. Բ.,** Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984թ., էջ 271:

[2] **Խաչատրյան Լ. Մ.,** Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Երևան, 2011թ., էջ 15:

յականացումը այդքան հատուկ չլիներ հայերենին նրա զարգացման բոլոր փուլերում, ապա այստեղ հնարավոր կլիներ ենթադրել նաև բառակազմական գաղտնի քայլ՝ գոյականակերտ –ութիւն կամ որևէ այլ ածանցի կցում և հետագա անկում՝ բառաբարդման հաջորդող քայլի ժամանակ»[1]: Այս առումով հատկանշական է նաև Մ. Աբեղյանի դիտարկումը. «Առանձին ուշադրություն պիտի դարձնել, որ բաղադրության առաջին մասի համար «ութիւն» վերջացած անունների փոխանակ առնվում են նրանց բնեբը, օրինակ՝ փոխանակ կազմելու սրբութենասեր կամ սրբությունասեր, իշխանությունասեր…. կազմվում են՝ սրբասեր…. իշխանասեր, որ կարող են նշանակել նաև՝ սուրբ սիրող, իշխան սիրող»[2]:

Ս. Էլոյանը[3] գոյական+բայահիմք կաղապարով կազմված բարդությունները խմբավորում է ըստ ընդհանրական բառային իմաստի՝ առանձնացնելով.

ա) գործողության անվան իմաստ արտահայտող բարդություններ, ինչպես՝ *արեւցայթ* (ժամ ցայտելոյ արեւուն), *շողէջ* (էջ կամ իջումն շողոյ), *դռնբաց* (արարողութիւն բանալոյ զդուռն եկեղեցւոյ), *ակնթարթ* (թարթելն ական), *աղիւսարկ* (աղիւս արկանելն), *ազգահամար* (ի համար արկումն ազգի): Ինչպես կարելի է նկատել բերված օրինակներից, վերջադիր բաղադրիչն արտահայտում է անորոշ դերբայի իմաստ, իսկ առաջին բաղադրիչը տարբեր իմաստներով ու հարաբերություններով լրացնում է նրան: Իբրև արդյունք ստացվում են վերացական գոյականներ: Ի դեպ, Մ. Աբեղյանն այս խմբի բարդություններն այդպես էլ անվանում է՝ *վերացական անվան կամ գործողության անվան իմաստով բարդություններ*[4]:

Լ. Մաքսուդյանն ընդգծում է, որ «գործողության անուն բարդ բայանունները (հատկապես իսկական բարդությունները) իմաստի տեսակետից ավելի թանձրացական են, քան պարզ բայանունները, քանի որ գոյական բաղադրիչը, լրացնելով բայական բաղադրիչին, թանձրացականացնում է նրա իմաստը»[5]:

Պետք է նշել, որ գործողության անվան իմաստ արտահայտող բարդություններից շատերն արտահայտում են նաև ժամանակային իմաստ,

---

[1] **Հովսեփյան Լ.**, Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987թ., էջ 152:

[2] **Աբեղյան Մ.,** Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965թ., էջ 204:

[3] **Վ. Դ. Առաքելյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան,** Ժամանակակից հայոց լեզու, հտ. 1-ին, Երևան, 1979 թ., էջ 333:

[4] **Մ. Աբեղյան,** Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965թ., էջ 204:

[5] **Լ. Ս. Մաքսուդյան,** Բայանուն գոյականը ժամանակակից հայերենում, Երևան, 1984 թ., էջ 22:

ինչպես՝ *արեւագալ* (ժամ գալստեան արեւու), *հաւախօս* (խօսելն հաւու. ժամ ձայն տալոյ աքաղաղին) և այլն:

բ) գործողի անուն արտահայտող բարդություններ: Այս իմաստային խմբի բարդությունները կարելի է բաժանել երկու տեսակի՝ բարդություններ, որոնք արտահայտում են 1. գործողություն կատարող անձի իմաստ, ինչպես՝ *բանջարավաճառ* (վաճառող զբանջարս), *խրատտու* (տուօղ զխրատ), *վիպագիր* (գրօղ զվէպս), *երգահան* (որ հանէ զերգս), *խաշնաբոյծ* (բուծիչ խաշանց), 2. գործողություն կատարող առարկայի իմաստ, ինչպես՝ *ատամահան* (գործի հանելոյ զատամունս), *ժամահար* (գործի ժամ հարկանելոյ), *ծամակալ* (կապ որ կալեալ ունի զծամս), *հողաթափ* (որ թափէ զհող), *մսահան* (գործի հանելոյ զմիսն ի կատսայէ) և այլն: Սրանք հիմնականում հանդես են գալիս ենթակայական, երբեմն էլ՝ հարակատար դերբայի իմաստով, իսկ անվանական բաղադրիչն արտահայտում է կրող խնդրի իմաստ:

գ) գործողությունն իբրև հատկանիշ արտահայտող բարդություններ, ինչպես՝ *կենսաբուղխ* (բղխօղ կենաց), *աշխարհաւէր* (աշխարհ աւրօղ), *ռոմվայնապարար* (որ պարարէ զորովայն իւր), *ձիւնապատ* (ձեամբ պատեալ), *պտղաբեր* (որ բերէ զպտուղ), *արագընթաց* (որ արագ ընթանայ) և այլն: Այս խմբի բարդությունները ներկայացվում են երկու ենթատեսակով՝ բարդություններ, որոնք ներկայացնում են 1. ընթացքի մեջ գտնվող գործողությունն իբրև հատկանիշ. *օրինաղիր* (դնօղ օրինաց) և 2. գործողության հետևանքն իբրև հատկանիշ. *յուսահատ* (հատանօղ զյոյս իւր կամ հատեալ ի յուսոյ):

Պետք է նշել, որ թե՛ գործողի անուն արտահայտող, թե՛ գործողությունն իբրև հատկանիշ արտահայտող բարդությունների մի մասը լեզվի պատմական զարգացման ընթացքում իմաստի առարկայացման արդյունքում վերածվել է գործողության անվան իմաստ արտահայտող բարդությունների՝ նախկին իմաստը պահպանելով կամ ոչ, ինչպես՝ *տերևաթափ* (հմմտ.՝ որ թափէ զտերեւս իւր; թափօղ զտերեւս ծառոց (ՆՀԲ)/ծառերի տերևները թափվելը; աշնանը ծառերի տերևները թափվելու ժամանակը; տերևները թափված, տերևազուրկ եղած; տերևները թափող (ԱՀԲԲ)), *այգեկութ* (հմմտ.՝ որ կթէ զայգին (ՆՀԲ)/այգու բերքը հավաքելը, քաղելը; այգու բերքահավաքի ժամանակը; այգեկութավոր(ԱՀԲԲ)), *ծաղկակալ* (հմմտ.՝ որ բարձեալ ունի կամ կրէ յինքեան զծաղիկս(ՆՀԲ)/ծաղկաման; ծաղկաթաղար; ծաղկակոթունի վերին լայնացած մասը; ծաղկամանը կամ ծաղկաթաղարը վրան դնելու պատվանդան(ԱՀԲԲ)) և այլն:

Իսկական բարդությունների՝ ինչպես գործողի անուն արտահայտող, այնպես էլ գործողությունն իբրև հատկանիշ արտահայտող իմաս-

տային խմբերը մեծ ընդգրկում ունեն գրաբարում, մինչդեռ գործողության անվան իմաստով բարդությունները նկատելիորեն սակավ են:

Անուն խոսքի մաս+բայահիմք կաղապարով այս երեք խմբի բարդությունները՝ գործողության անուն, գործողի անուն, գործողությունն իբրև հատկանիշ արտահայտող, շարահյուսական կապակցության վերածելիս արտահայտում են հետևյալ հարաբերությունները՝ խնդրային, պարագայական, ենթակայական:

Առհասարակ, գերադաս բայական բաղադրիչով իսկական բարդությունները հիշեցնում են բայական բառակապակցություններ, որտեղ կախյալ բաղադրիչները խնդիրներ են կամ պարագաներ: Իսկական բարդության կազմում իբրև հիմնաբաղադրիչ հանդես եկող բայահիմքն ու վերջինիս ստորադասվող բաղադրիչն ունենում են շարահյուսական այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք սովորական բառակապակցություններում: Սակայն, իսկական բարդության կազմում հայերենի բայի և նրա լրացման բոլոր կարգի կապերն ու հարաբերությունները չէ, որ լրիվ կերպով դրսևորվում են: Այս մասին Ս. Էլոյանը գրում է. «Սա միանգամայն բնական է. եթե նախադասության մեջ լրացման և լրացյալի հարաբերություններն առհասարակ դրսևորվում են իրենց ամբողջությամբ և բազմազանությամբ, ապա բարդությունն այդ հնարավորությունը չունի հենց թեկուզ այն պատճառով, որ նրա շարահյուսական կապը մթագնած է և ձևաբանական կոնկրետ դրսևորում չունի: Այդ է պատճառը, որ միևնույն բարդությունը երբեմն կարող է մի քանի շարահյուսական հարաբերություն արտահայտել….»[1]:

Անվանական բաղադրիչ+բայահիմք կաղապարով երկբաղադրիչ իսկական բարդություններում բաղադրիչները, այսպիսով, աչքի են ընկնում շարահյուսական հարաբերությունների տարազանությամբ:

Փաստական նյութի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ շատ դեպքերում բարդությունների շարահյուսական հարաբերությունները ոռոշելը բավականին դժվար է, և հաճախ դրանք որոշվում են, այսպես ասած, հարաբերական առումով՝ նկատի ունենալով բարդության առավել ընդունելի և առավել բնորոշ շարահյուսական հարաբերությունը: Այսպես, «հիմնաշարժ» ձևում բաղադրիչների հարաբերության բնույթը կարելի է ընկալել թե՛ որպես տեղի պարագայական, թե՛ որպես ձևի պարագայական (շարժեալ ի հիմանէ):

---

[1] **Վ. Դ. Առաքելյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան,** Ժամանակակից հայոց լեզու, հտ. 1-ին, Երևան, 1979 թ., էջ 336:

Գրաբարի բայական հիմնաբաղադրիչով իսկական բարդություններում բաղադրական հիմքերի ներշարահյուսական հարաբերությունների քննությանը անդրադառնալով՝ նշենք, որ հաճախ բախվում ենք բաղադրիչների իմաստաշարահյուսական բնույթի բազմանշանակության հանգամանքին: Այսպես, հանդիպում են ձևեր, որտեղ լրացումն արտահայտում է խնդրային և պարագայական նշանակություններ: Բերենք օրինակներ. *ուղիղ խնդրի և ձևի պարագայի* նշանակությամբ. *առակախօս* (խօսող զառակս կամ առակօք), *կայլակահոս* (որ հոսէ զկայլակս կամ հոսի որպէս կայլակ), *հրաբորբոք* (բորբոքեալ հրով կամ իբրեւ զհուր, եւս բորբոքիչ հրոյ), *ուղիղ խնդրի և ժամանակի պարագայի* նշանակությամբ. *առաւօտաճագ* (որ ծագէ զառաւօտ կամ ծագեալ ընդ առաւօտն), *գարնանաբեր* (բերօղ զգարուն կամ յառաջ բերեալ ի գարնան), *ուղիղ խնդրի և տեղի պարագայի* նշանակությամբ. *երկրածուփ* (որ յերկրի ծփի կամ ծփէ զերկիր), *ջրածին* (ծնեալն ի ջուրս կամ ծնօղ զջուր), *ուղիղ խնդրի և չափի պարագայի* նշանակությամբ. *կարեսէր* (սիրօղ զկարիս կամ կարի սիրօղ), *ձևի պարագայի և հանգման խնդրի* նշանակություններ. *ծովահոս* (հոսեալ հորդութեամբ իբրեւ զծով կամ ի ծով) և այլն: Հաճախ միևնույն բարդության բաղադրական հիմքերն արտահայտում են *խնդրային* տարբեր նշանակություններ: Այսպես, *ուղիղ խնդրի և հանգման խնդրի* նշանակություններ. *երկնապարզ* (որ պարզեաց զերկինս կամ ընդ երկինս պարզեալ), *կենսառաք* (որ առաքէ ի կեանս կամ ծաւալէ յիւրմէ զկեանս) կամ, ասենք, *ուղիղ խնդրի և ներգործող խնդրի* նշանակություններ. *բանաշուրջ* (որ շրջէ զբան իւր կամ շրջի ի բանիցն), *խաւարակուլ* (կլանօղ խաւարի եւ կլեալ ի խաւարէ), *խորշակառ* (առեալ ի խորշակէ կամ առօղ զխորշակ), *հրեշտակացոյց* (ցուցեալ ի հրեշտակէ կամ որ ցուցանէ յինքեան զհրեշտակային ինչ նմանութիւն), *ուղիղ խնդրի և միջոցի խնդրի նշանակություններ.* դեղագործ (որ կազմէ զդեղ կամ գործօղ դեղով) և այլն:

Համեմատաբար քիչ են բայական գերադաս բաղադրիչով իսկական բարդությունները, որոնցում լրացումն արտահայտում է *պարագայական* տարբեր նշանակություններ: Այսպես, հետևյալ օրինակում լրացումն արտահայտում է *ձևի պարագայի և տեղի պարագայի* նշանակություններ. *ձորաբարձ* (որպէս զձոր ամբարձեալ կամ ի վերայ ձորոյ բարձեալ):

«Խաւարաբնակ» (բնակեալն ի խաւարի կամ ուր խաւարն բնակէ) ձևում անվանական բաղադրիչը հանդես է գալիս *ենթակայի և տեղի պարագայի* քերականական դերերով «կենսաբաշխ» (բաշխօղ կենաց կամ որով բաշխի կեանք) ձևում՝ *ենթակայի և ուղիղ խնդրի:* Երբեմն էլ բարդության կազմում բայահիմքին լրացնող անվանական բաղադրիչը, որ գերակշռող մեծամասնությամբ գոյական է, հանդես է գալիս *երեք* տարբեր քերականական դերերով. այսպես, «թանեփեաց» ձևում՝ *ուղիղ խնդրային,*

ձևի և տեղի պարագայական նշանակություններ (եփօղ զթան կամ եփեալ որպէս թան եւ ի մէջ թանի): Այսպիսով, բայական հիմնաբաղադրիչով իսկական բարդություններն առավելաբար արտահայտում են խնդրային և պարագայական, նաև՝ ստորոգումային հարաբերություններ: Սակայն շատ դեպքերում կաղապարում բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը, հետևաբար նաև շարահյուսական հարաբերության բնույթը բազմանշանակ է, ասել է, թե՝ միևնույն կաղապարում կարելի է նկատել թե՛ խնդրային, թե՛ պարագայական, թե՛ ստորոգումային հարաբերություն:

Серго Айрапетян, Анна ВарданянМногозначность характера смыслового-синтаксического отношения производящих основ истинных словосложений в грабаре - Согласно современному лингвистическому подходу, истинные словосложения характеризуются обязательным наличием двух производящих основ. Эти основы находятся в определенном синтаксическом отношении друг с другом. Между составляющими сложного слова можно найти почти все синтаксические отношения, существующие между членами предложения. В частности, при преобразовании истинных словосложений с глагольными производящими основами в синтаксические сочетания, они выражают отношения предикативов, дополнений и обстоятельств. Часто для восприятия существительного препятствовала многозначность характера смыслового-синтаксического отношения производящих основ.

Sergo Hayrapetyan, Anna Vardanyan, The ambiguity of relations of the constituent stems of real complexities in Classical Armenian - According to the modern approach of linguists, real complexities are marked by the obligatory existence of two constituent stems. These stems are in a certain syntactical relation with each other. We can find between the constituents of the complexities almost all syntactical relations typical of the members of a sentence. Particularly, in turning the real complexities with verbal stems into syntactical combinations they express objective, adverbial and predicative relations. The objective, adverbial and predicative perception of the noun is hindered by the ambiguity of the nature of the semantical-syntactical relation.

ВЗАИМОСВЯЗЬ МИФОПОЭТИЧЕСКОЙ ПАРАДИГМЫ В ТВОРЧЕСТВЕ СЕРГЕЯ ПАРАДЖАНОВА И ПЬЕРА ПАОЛО ПАЗОЛИНИ

ВЕРОНИКА ЖУРАВЛЕВА

Ключевые слова - миф, мифопоэтическая парадигма в искусстве, режиссура, страх влияния, сценарное мастерство, универсальный сюжет, коллаж, христианское искусство.

В контексте мировой художественной культуры особняком стоят работы, созданные в рамках мифопоэтической парадигмы. Их влияние на зрителя и сила эмоционального воздействия на первый взгляд не коррелирует с большой долей условности, архаики и подчас некоторого наива. Вместе с тем, мифопоэтическая парадигма в творчестве, отталкиваясь от внутренних базовых конструкций и обращаясь к чувственному началу, дает возможность зрителю, отрешившись в некоторой степени от реалий сегодняшнего времени, глубже понять собственные переживания и пространство внутренней реальности. В своей работе автор статьи анализируя взаимосвязь мифопоэтической парадигмы в творчестве Сергея Параджанова и Пьера Паоло Пазолини, прежде всего, обращается к понятию *мифа*. В контексте данной работы миф – это логически выстроенная категория сознания и в том числе способ познания бытия, он не является идеальной моделью мира, но ощущается полнокровной реальностью. Он содержит в себе четко выстроенную логику мифа и структуру, подразумевающую интерсубъективные отношения зрителя и мифа. Логика мифа есть раскрытие множества смыслов, сокрытых в нем, она базируется на чувственных образах, заключающих в себе определенные идеи. Миф имеет собственную отрешенность от обычного смысла и хода явлений, его нельзя свести до символа, аллегории и схемы, он возводит абстрактно выделяемые вещи в интуитивно понятную взаимосвязанную со зрителем сферу. Автор статьи выдвигает предположение, согласно которому мифопоэтические сюжетные конструкции в искусстве Пазолини и Параджанова не только внешне перекликаются друг с другом, но и взаимосвязаны определенным образом.

Анализируя взаимосвязь искусства Параджанова и Пазолини, мы опираемся в том числе на работу Харольда Блума «Страх влияния. Карта перечитывания»[1]. Автор исследует природу влияния одного творца на другого. С точки зрения Блума, каждый большой художник боится сознательно и бессознательно повторить своего великого предшественника, либо своего великого современника. Автор исследует этот страх, разделяя его на несколько составляющих: а) клинамен – автор исправляет собственное произведения, исходя из предположения, согласно которому до определенного момента его предшественник шел верным путем, но затем ему следовало бы отклониться именно в том направлении, в котором двигается сам автор в рамках своего нового произведения; б) тессера – автор создает собственный образ произведения из смысловых осколков произведения предшественника, как бы переосмысливая и заново собирая его; в) кеносис, как прерывающий механизм, с помощью которого автор избавляется от собственного творческого озарения таким образом, что обесценивает не только свое творение, но и творение предшественника; г) даймонизация – автор устанавливает некую связь между своим произведением и произведением предшественника, подвергая уникальность своего творения сомнению; д) аскезис, действие, направленное на отказ автором от части своего воображения и творческой энергии дабы удалиться от других и от предшественника; е) апофрадес, т.е. возвращение мертвых, где автор создает новое произведение искусства, отталкиваясь от произведения предшественника таким образом что повторяет его, но на качественно другом, новом витке.

Творчество легендарного итальянского мастера Пьера Паоло Пазолини играло особую роль в жизни Сергея Параджанова: «В Тбилиси Серёжа смотрел “Царя Эдипа” Пазолини семь раз. Объяснил почему: “Чтобы не повториться”. И смотрел бы ещё, но картину увезли…»[2]. Когда итальянский режиссёр трагически погиб, Параджанов отбывал наказание, о смерти Пазолини ему сообщила Лиля Брик: «Смерть Пазолини потрясла меня. Как смог, я выразил в коллаже “Реквием”»[3]; «...очень потрясла сенсация смерти Пазолини. Сделал удивительный коллаж и послал Брик»[4].

---

[1] **Блум Х.** Страх влияния. Карта перечитывая. – Екатеринбург: Изд-во Уральского университета, 1998. – 196 с.

[2] **Катанян В. В.** Параджанов. Цена вечного праздника [Текст] / В. В. Катанян. – М.: Четыре искусства, 1994. – С. 47.

[3] **Сергей Параджанов**. Письма из зоны [Текст] / С. И. Параджанов; авт. проекта и гл. ред. Г. Закоян. – Ереван : Фильмадаран, 2000. – С. 260.

[4] Там же. С. 101.

Позже, в 1976 году была создана работа «Евангелие по Пазолини» (рис. 1), первоначально носившая название «Притчи на тему “Пазолини + Я”»[1].



Рис 1. Евангелие по Пазолини. Коллаж. 1976.

К личности Пазолини также имеют отношение другие работы Параджанова – это серия барельефов (1980-е) по мотивам картины Пазолини «Евангелие от Матфея» (1966), а также коллажный диптих «Пазолини-Параджанов» (1980-е, см. рис. 2). Много позже, в одном из своих последних интервью Параджанов скажет: «Когда мне говорят: “Ваши картины похожи на Пазолини”, – я делаюсь выше, мне легче дышать, потому, что Пазолини для меня Бог. <…> Посмотрите фильм “Царь Эдип”, я считаю, что это произведение абсолютно гениальное»[2].

В своей автобиографии Пазолини так говорит о себе: «Жить всегда как бы в присутствие самого себя, на острие шпаги, любуясь жизнью, разбитой на отдельные эпизоды, вызывающие щемящую ностальгию по своей малой родине»[3], – это в полной мере справедливо и для Сергея Параджанова. Родившись в Тбилиси Сергей Иосифович прожил «несколько творческих жизней» в контексте разных культур – грузинской, армянской, украинской и русской.

---

[1] Там же. С. 318.

[2] Цит. по документальному фильму «Код Параджанова. Орфеи спускается в ад» (реж. Левон Григорян, 2003)

[3] **Сичилиано Э.** Жизнь Пазолини: Роман. – СПб.: Лимбус Пресс, ООО «Изд-во К. Дублина», 2012. – С. 45



Рис 2. Пазолини-Параджанов. Коллаж. 1980-е

Этим он обязан, во-многом, месту своего рождения – мультикультурному Тбилиси, городу, вобравшему в себя множество национальных колоритов и черт. Мы отмечает ностальгию по малой родине, присутствующую в творчестве как Пазолини, так и Параджанова. У Пьера Паоло она выражалась, в первую очередь, в рамках его литературной деятельности, в использовании им в поэтических текстах и прозе родного наречия, Параджанов же возвращается в город своего детства в рамках сценария «Исповедь»: «В 1969 году у меня было двустороннее воспаление лёгких. Я умирал в больнице и просил врача продлить мне жизнь хотя бы на шесть дней. За эти несколько дней я написал сценарий. В нём речь идёт о моём детстве. Когда Тифлис разросся, то старые кладбища стали частью города. И наше светлое, ясное, солнечное правительство решило убрать кладбища... И тогда ко мне в дом приходят духи моих предков – они ведь стали бездомными... <...> «Исповедь» – моя личная Библия. Мой любимый сценарий»[1].

Пазолини обращается к проблемам своей малой родины, показывая сквозь их призму Италию какой она есть, Параджанов – рассказывает о собственном внутреннем мире воспоминаний и снов. Сценарий «Исповедь» наполнен яркими образами, позже воплотившимися в серии коллажей к нему, подобные вспышки, позволяющие нам проникнуть во внутренний мир Пазолини, присутствуют в его воспоминаниях, более того,

[1] Коллаж на фоне автопортрета. Жизнь – игра [Текст]: [воспоминания о Сергее Параджанове: сборник / авт. идеи, предисл., коммент. и сост. К. Д. Церетели]. – Нижний Новгород: ДЕКОМ, 2005. – С. 108.

Tatul Manaseryan, Grigor Magistros and economic diplomacy of historical Armenia - Economic diplomacy, as it is known, presupposes the realization of practical steps, made on the deprivation of harmlessness by foreigners and the attainment of economic competitiveness, and also the creation and realization of the necessary potential for the purpose of doing so. These are the goals of Grigor Magistros, who played an important role in the social, political and gov-erning life of Armenia in the 11th century. He became a participant of dramatic councils in Ani in 1045, after which he aimed at strengthening the foreigners as in traditional, as well as in military relations, he used different possibilities of diplomacy, especially economic diplomacy. He set before him the whole pur-pose of establishing and renewing the land, which he invariably received, espe-cially the occasional participation in the multifaceted and diverse cultural, po-litical and governmental works. In all this he has shown not only wisdom, but also perseverance and compassion.

ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր - առցանց ուսուցման էվոլյուցիա, հեռավար դասավանդման կազմակերպում, համացանցով ուսուցման միջազգային փորձ, հեռավար դասավանդման միտումներ:

Առցանց ուսուցումը, որը հատկապես COVID-19 աշխարհավարակի պայմաններում արագորեն արմատավորվեց համալսարանական համակարգում, ունի իր կազմակերպման առանձնահատկությունները, քանի որ գործառույթներով և նպատակադրումներով էականորեն տարբերվում է ավանդական կրթության կազմակերպչական համակարգից; Եվ այդ տարբերությունները բնավ չեն սահմանափակվում տեղեկատվական տեխնոլոգիաների, ծրագրային ապահովումների, հաղորդակցման կապուղիների հնարավորություններով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մասնագիտական գրականության մեջ միաժամանակ օգտագործվում ինչպես «հեռաուսուցում», այնպես էլ «առցանց ուսուցում» եզրույթները և կարծես տպավորություն է ստեղծվում, որ դրանք հոմանիշներ են և միմյանցից գրեթե չեն տարբերվում:[1] Եվ կարող է հարց առաջանալ, թե իմաստային առումով արդյո՞ք դրանք տարբերվում են իրարից, թե՞ ո՛չ: Այս հարցին բազմաթիվ անդրադարձ կատարվելով, մասնագետների մի մասը բնավ տարբերություններ չի գտնում նման զուգահեռներ անցկացնելիս:[2] Սակայն մեր կարծիքով, տարբերությունները բավական խորքային են, և ունեն իրենց մեկնաբանությունները:

Այսպես, հեռաուսուցումը, կամ հեռավար ուսուցումը, ի տարբերություն առցանց ուսուցման, մեթոդաբանական առումով չի կարող կրկնօրինակել ավանդական ուսուցմանը: COVID-19 հանկարծահաս համաճարակի արդյունքում մոլորակի բոլոր կրթօջախները, այդ թվում նաև հայաստանյան կրթական համակարգը, թեկուզ և անպատրաստի, բայց անմիջապես անցում կատարեցին առցանց ուսուցման: Արդյունքում, ըն-

[1] **Хусаинов Т. М.** История развития и распространения дистанционного образования // Педагогика и просвещение. - 2014, № 4. стр. 30-41.

[2] **Иванченко Д. А.** Системный анализ дистанционного обучения : монография. - М.: Союз, 2005, 192 с.

դամենը փոխվեց կրթական ծառայությունների մատուցման միջավայրը՝ համալսարանական լսարաններից ու դպրոցների դասարաններից փոխադրվելով համացանց: Բայց արդյունքում բնավ չփոխվեց կրթական ծառայությունների մատուցման մեթոդաբանությունը և ուսումնառությունը կազմակերպվեց իր ավանդական ձևաչափով և սովորողը չզգաց կրթական ծառայությունների մատուցման խորքային տարբերություններ, բացի համացանցում դասերին մասնակցելիս: Թերևս համաճարակի հրամայականով մեզ դեռևս չհաջողվեց կազմակերպել հեռավար ուսուցում, ինչպես որ հարկն է:

Իսկ եթե կազմակերպվեր հեռավար ուսուցում, ապա ի՞նչ փոփոխություններ կարձանագրվեին կրթական ծառայությունների մատուցման ոլորտում և ինչպիսի՞ ուղուլություններով դրանք ի հայտ կգային: Նախ պիտի նշենք, որ այդ փոփոխությունները պիտի համակարգային լինեին՝ սկսած դասացուցակի կազմումից մինչև դասավանդման մեթոդաբանություն: Հեռավար ուսուցումը, որն իրականացվում է առցանց միջավայրում, պահանջում առարակայական առանձնահատուկ ծրագրեր, որոնք ուսանողակենտրոն են, հիմնված են սովորողի ինքնակազմակերպման ունակությունների վրա, պահանջում են դասավանդման և ուսումնառության հատուկ հմտություններ:

Արձանագրենք նաև, որ հեռաուսուցման պարագայում համալսարանական լսարանային դասախոսությունները զուգորդվում են առցանց ինտերակտիվ քննարկումներով, ֆորումներով, գործնական աշխատանքները ավելի խմբային բնույթ են ստանում, WEB սեմինարները իրականացվում են «ուսանող-դասախոս» բանավիճային հենքով: Ստեղծվում է ակադեմիական հատուկ միջավայր, երբ ուսանողը ինքն է մասնակցում մասնագիտական կարողությունների ձեռքբերման ճարտարապետությանը, ռրոշակիորեն մասնակիցը դառնալով նաև ուսումնառության արդյունքների ձևավորման վարչարարությանը:

Հետևաբար, հեռաուսուցումը մեթոդաբանական առումով արմատապես տարբերվում է առցանց ուսուցումից: Ավելի կոնկրետ, ***առցանց ուսուցումը ընդամենը հանդես է գալիս հեռաուսուցման մեկ բաղադրիչ,*** և ոչ ավելին: Այս առումով, հեռաուսուցում ասելով ավելի շատ պետք է ի նկատի ունենալ առցանց համակարգում գործող ակադեմիական հատուկ միջավայր, որը գործում է կառավարման իր հատուկ սկզբունքներով և կազմակերպչական ու կրթական տեխնոլոգիաների կիրառման հատուկ կանոններով:

Առցանց դասավանդման ժամանակ ծագում են մեթոդաբանական նոր խնդիրներ, որոնք առնչվում են ակադեմիական խմբերի կենդանի շփումների պակասը լրացնելուն, ուսանող-համակարգիչ հաղորդակ-

ցման անկենդան մթնոլորտը հնարավորինս գրավիչ դարձնելուն, ուսանողի ինքնամեկուսացման բացասական հետևանքները հաղթահարելուն, սովորողի ինքնակազմակերպման աստիճանը բարձրացնելուն:

Այս առումով, առցանց ուսուցման սոցիալ տնտեսական հետևանքները մշտապես ենթարկվում են վիճակագրական համաշխարհային դիտարկումների:[1] Այսպես, համաձայն առցանց ուսուցման զարգացման առկա միտումների, Էլեկտրոնային ուսուցման կառավարման համակարգի (ELMS) համաշխարհային շուկայի տարողունակությունը ակնկալվում է, որ մինչև 2026 թվականը կհասնի 29 միլիարդ դոլարի՝ 19,1% տարեկան աճով:

Վիճակագրական դիտարկումները ցույց են տալիս, որ հեռաուսուցումը կրթական տեխնոլոգիաների ամենաարագ զարգացող շուկան է, որը 2000 թվականից մինչ այժմ թռիչքաձև աճ է ունեցել՝ շուրջ 900%: Ավելին, առցանց ուսուցումը ներկայումս ակադեմիական միջավայրից տեղափոխվել է նաև գործարար աշխարհ: Մասնավորապես, խոշոր կորպորացիաները, որոնք մասնաճյուղեր ուներ տարբեր երկրներում, գերադասում են աշխատակիցների վերապատրաստման դասընթացները կազմակերպել առցանց ճանապարհով: Մինչև 2026 թվականը կանխատեսվում է, որ էլեկտրոնային ուսուցման համաշխարհային արդյունաբերությունը կհասնի 336,98 միլիարդ դոլարի:

Հաշվարկները ցույց են տալիս, որ խոշոր կազմակերպությունների վերապատարաստման ռեսուրսների շուրջ 60%-ը կազմում են վերապատրաստվողնների գործուղման և ճամփորդության ծախսերը, որոնք որ արդեն չեն իրականացվում առցանց թրեյնիգների ժամանակ: Առցանց վերապատրաստումների շնորհիվ IBM կորպորացիայի ղեկավարները կարողացան հինգ անգամ ավելի շատ հմտություններ ձեռք բերել, ընդ որում կատարելով ավանդական թրեյնիգնների կազմակերպման ծախսերի մեկ երրորդը: Արդյունքում, IBM-ը միայն 2019 թվականին խնայեց 200 միլիոն դոլար: Վերապատրաստման դասասենյակներից թրեյնինգները տեղափոխվելով էլեկտրոնային ուսուցման միջավայր՝ Dow Chemical կազմակերպությունը խնայեց 34 միլիոն դոլար, յուրաքանչյուր վերապատրաստողի գծով դասընթացի օրական ծախսերը կրճատելով 95 դոլարից մինչև 11 ԱՄՆ դոլար: Էլեկտրոնային ուսումը շահավետ է ոչ միայն գործատուների, այլև աշխատողների համար, քանի որ այն վերջիններից պահանջում է 40%-ից 60%-ով ավելի քիչ ժամանակ, քան ավանդական ուսումը:

Աշխարհում խոշորագույն նավթային ընկերություններից մեկը՝ Shell-ը, էլեկտրոնային ուսուցումն օգտագործելով, բարձր ինքնարժեքով դասընթացների ծրագրերի արժեքը 90%-ով կրճատեց, ավելի քան 12,000

[1] https://e-student.org/e-learning-statistics/

վիրտուալ դասեր կազմակերպելով և ավելի քան 200 միլիոն ԱՄՆ դոլար խնայելով: Աշխատակիցների 94% -ը համոզմունք հայտնեցին, որ իրենք ավելի պատրաստ կլինեն մնալ կորպորացիայում, որտեղ առցանց ճանապարհով ներդրումներ են կատարում աշխատողների կարիերայի զարգացման մեջ:

Airbus կորպորացիան աշխարհի ամենախոշոր ինքնաթիռների արտադրողը, 2019 թվականի դրությամբ 35 երկրներում շուրջ 100 000 աշխատակիցների տրամադրեց ավելի քան 6.900 միավոր պարունակությամբ էլեկտրոնային ուսուցման գրականություն: Այդ ճանապարհով Airbus-ին հաջողվեց կրճատել դասընթացների ծախսերը միլիոնավոր դոլարներով: Բացի ծախսերի խնայողությունից, փոփոխությունը դրական ազդեցություն ունեցավ աշխատակիցների ներգրավվածության և բավարարվածության մակարդակի վրա:

Եթե առցանց ուսուցման զարգացումները դիտարկվում են ըստ տարածաշրջանների, ապա պետք է արձանագրել, որ 2017-ից 2022 թվականների ընթացքում ԱՄՆ-ում էլեկտրոնային ուսուցման շուկան նախատեսում է 6.22 միլիարդ դոլարով աճի հնարավորություն: Թերևս, մինչև COVID-19 համավարակը, ամերիկյան ավագ դպրոցի աշակերտների 63% -ը ամեն օր օգտագործում էր էլեկտրոնային ուսուցման գործիքներ, իսկ տարրական դասարանների աշակերտների 45% -ը օրական օգտագործում էր առցանց ուսուցման բաղադրիչներ: Ամերիկյան համալսարանական ուսանողների ավելի քան 30% -ը արդեն իսկ մասնակցել է առնվազն մեկ առցանց դասընթացի: Ընդ որում, ամերիկացի շրջանավարտների 52%-ը առցանց քոլեջի մակարդակի կրթությունը որակել է ավելի լավ, քան ավանդական դասարանների ուսուցումը:

Ինչ վերաբերում է Եվրոպային, ապա Գերմանիան հեռաուսուցման շուկայում ամենաբարձր բաժինն ունի ԵՄ-ում: Գերմանիայի հեռաուսուցման շուկան տարեկան 8,5% է աճում, այն դեպքում, երկրի տնտեսության տարեկան աճը դրսևորվում է շուրջ 2,9%-ով: Եվրոպայում տարեկան 3 միլիոն եվրո միջին շրջանառություն, և առնվազն 25 աշխատող ունեցող կազմակերպություններում արդեն իսկ կիրառվում են էլեկտրոնային ուսուցմամբ վերապատրաստումներ:

Առցանց կրթության առանձնահատուկ պայմաններ են ձևավորվել Էստոնիայում: Երկրի մանկապարտեզների 60% -ը առաջարկում է SS ռոլորտի վրա հիմնված ուսուցման գործողություններ: PISA կրթության վերջին հետազոտության մեջ Էստոնիան Եվրոպայի լավագույն պետությունն է: Նախակրթարանների աշակերտների 45% -ը նշել է, որ իրենց սիրված ուսուցման մեթոդներն են թվային ուսուցման խաղերը և առցանց տեսանյութեր դիտելը:

Ավստրալիան նույնպես հեռավար ուսուցման գծով առաջավոր մայրցամաք է հանդիսանում, որտեղ համալսարանական ուսանողների շուրջ 62%-ը առնվազն մեկ առցանց մոդուլի մասնակից է: Ավստրալիան առանձնանում է նրանով, որ հեռավար ուսուցման ակադեմիական խմբերը իրենց կազմով դուրս են գալիս մայրցամաքի սահմաններից և սովորողների առնվազն մեկ երրորդը միջազգային ուսանողներն են: Ընդհանուր առմամբ, միշտ էլ ավստրալիական համալսարանները առցանց ուսուցման կազմակերպման առաջամարտիկներից են եղել:

Համաշխարհային մակարդակով, ընդհանուր առմամբ առցանց ընդունող ուսանողների թիվը տարեկան 5% աճ է արձանագրում: Առցանց կրթություն ստացող բակալավրիատի ուսանողների 46.4%-ը սովորում է բիզնես (17%), SS մասնագիտություններ՝ 16.1%: Մեկ կամ մի քանի առցանց դասընթացներ անցնող բակալավրիատի ուսանողների շրջանակը 2004 թ.-ի 15.6% -ից՝ 2016 թվականին արդեն հասավ 43.1%-ի: Ներկայումս, իրավագիտական ուսանողների կեսից ավելին անցնում է իրենց մագիստրոսական առարկաները ամբողջությամբ, կամ, մասամբ առցանց ձևաչափով: Ավելի քան 3 միլիոն ուսանող այժմ բարձրագույն կրթությունն ամբողջությամբ հեռաուսուցման համակարգում է սովորում: Ընդ որում, համաշխարհային մակարդակով առցանց կրթություն ստացող ուսանողների 24.9%-ը 30 տարեկան և ավելի բարձր տարիքի են: Առցանց դասընթացների շրջանավարտների 86%-ի համար իրենց առցանց աստիճանից ստացված արժեքը գերազանցել է, կամ հավասար է դրա համար վճարած արժեքին:

Հատկանշական է նաև, որ ի տարբերություն ավանդական ուսումնառության, մագիստրոսական առցանց դասընթացների շրջանավարտների 86%-ի համար աշխատանքային գործունեությունից ստացված եկամուտը փոխհատուցել է ուսումնառության արժեքը՝ կրկնակի արագությամբ: Համաշխարհային մասշտաբով, առցանց ձևաչափով մագիստրոսական ծրագրերում ընդունող շրջանավարտների տեսակարար կշիռը 2008-ի 6,1%-ից՝ 2018 թվականին հասել է 29.3% -ի:

Առցանց ուսուցման վիճակագրական դիտարկումները, անշուշտ կտրուկ փոփոխությունների կենթարկվեն COVID 19 աշխարհավարակից հետո: Եթե մինչ այդ, առցանց ուսուցումը զարգանում էր իր բնականոն հունով, ապա աշխարհավարակից հետո, արդեն իսկ այն կունենա սրընթաց զարգացումներ: Դրան կարող են նպաստել նաև սովորողների անձնային տնտեսական շահերը, քանի որ հեռաուսուցմամբ կրթական ծախսերը շատ դեպքերում նրանց համար առավել քիչ են, քան ավանդական ուսուցման դեպքում:

Այսպես, ուսանող Արամը որոշում է կայացնում, համալսարան ընդունվելիս ընտրել կրթության ավանդական, կամ հեռավար ձևաչափը: Որոշման կայացման հիմքում դրվում է տնտեսական անձնային շահը, և այս առումով Արամը համեմատական վերլուծություն է իրականացնում ավանդական և հեռաուսուցման դեպքում ուսումնառության ծախսերի գծով:

Ուսումնառության տարիներ.

- հեռաուսուցում՝ 5 տարի
- ավանդական ուսուցում՝ 4 տարի:

Տարեկան կրթավճարներ

- հեռաուսուցում՝ 500 հազ. դրամ
- ավանդական ուսուցում՝ 800 հազ. դրամ:

Կրթավճարները ողջ ուսումնառության ընթացքում.

- հեռաուսուցում՝ 500 հազ. դրամ x 5 տարի = 2 500 000
- ավանդական ուսուցում՝800 հազ. դրամ x 4տարի = 3 200 000

Ուսումնառության ընթացքում համալսարան հաճախելու տրանսպորտային ծախսեր.

- ավանդական ուսուցում՝ 400 հազ. դրամ
- հեռաուսուցում՝ այլընտրանքային եկամուտ:

Համալսարան այցելության ժամերին աշխատավայրում չգտնվելու համար գործատուի կողմից աշխատավարձից ընդհանուր պահումներ՝ողջ ուսումնառության ընթացքում

- հեռաուսուցում՝ 700 հազ. դրամ
- ավանդական ուսուցում՝ այլընտրանքային եկամուտ:

Ինտերնետային արագընթաց կապի լրացուցիչ փաթեթների ձեռք բերում՝ ողջ ուսումնառության ընթացքում

- հեռաուսուցում՝ 200 հազ դրամ
- ավանդական ուսուցում՝ այլընտրանքային եկամուտ:

Տեղեկատվական լրացուցիչ սարքերի ձեռք բերում.

- հեռաուսուցում՝ 100 հազ դրամ
- ավանդական ուսուագում՝ այլընտրանքային եկամուտ:

Վերլուծության ընթացքում Արամը համադրում է իր ուսումնառության ծախսերը հեռավար և ավանդական կրթության պարագայում՝ հաշվի առնելով նաև այլընտրանքային եկամուտները:

Ավանդական ուսուցում = 3 200 000 + 400 000 + (700 000) + (200 000) + (100 000) = 2 600 000

Հեռավար ուսուցում = 2 500 00 + (400 000) + 700 000 + 200 000 + 100 000 = 3 100 000

Ուսումնառության ծախսերի համեմատական վերլուծության ընթացքում, եթե հաշվարկները չիրականացվեն ներկա արժեքով, համալսարանի դիմորդ Արամը որոշում կկայացնի սովորել ավանդական կրթության ձևաչափով, որը անձնային շահի տեսանկյունից տնտեսապես ավելի նպատակահարմար է.

2 600 000 < 3 100 000

Այս առումով, սովորողները, որոնք պահպանողական դիրք էին ընդունել հարյուրամյակների ընթացքում վարվող ավանդական կրթության նկատմամբ, համաճարակային պայմաններում կտրուկ փոխեցին իրենց դիրքորոշումը կրթական ծառայությունների մատուցման ձևաչափերի հանդեպ: Իհարկե, աշխարհավարակի արդյունքում անպատրաստի ընդունելով առցանց ուսուցման մարտահրավերները, թե՛ կրթության կազմակերպիչները և թե՛ ակադեմիական խմբերը մեծ խանդավառության չունենացան հեռավար կրթության հանդեպ: Ընդհակառակը, նրանց զգալի մասը դեռևս դժգոհ է համաճարակի արդյունքում առանց կրթության ոլորտի ստեղծված իրավիճակից: Բայց այդ դժգոհությունը առավելապես պայմանավորվեցին նրանով, որ դեռևս լիարժեք կարգավորում չստացան հեռավար կրթության ձևաչափերը, որի արդյունքում ստեղծվեցին օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարություններ:

Սակայն մյուս կողմից, տեղեկատվական տեխնոլոգիաների ներկայիս արագընթաց զարգացումը, համացանցի ընդլայնումը հանգեցնում են նրան, որ ակնառու ակտիվանում է «մոբայլ կրթությունը», երբ ուսանողները բջջային հեռախոսներն են օգտագործում որպես առցանց ուսումնառության գործիք՝ ճկունություն ցուցաբերելով իրենց ակադեմիական վարքագծում:

Եվ վերջապես, COVID 19 աշխարհավարակը վերհանելով զանգվածային առցանց ուսուցման թե՛ բացասական, և թե՛ դրական կողմերը, կարողացավ նաև հասարակության մեջ կոտրել ավանդական կրթության «կատարելիության և անփոխարելիության» կարծրատիպը, որն էլ տեսանելի ապագայում անհրաժեշտություն կառաջացնի կանոնակարգելու առցանց ուսուցման համակարգը «նախակրթարան –դպրոց - համալսարան - ցկյանս կրթություն» շխթայում: Ուրեմն, ուզենք թե չուզենք, պամանավորված SS առաջընթացով և ժամանակի պահանջով, առցանց ուսուցումը կթակի մեր դռները՝ իր հաստատուն տեղը գրավելով յուրաքանչյուրիս ապրելակերպում:

Нонна Хачатрян, Социально-экономическое развитие дистанционного обучения в условиях пандемии - Онлайн-образование, которое быстро внедрилось в университетскую систему, особенно во время мировой

эпидемии COVID-19, имеет свои особенности организации, поскольку оно значительно отличается от традиционной системы менеджмента образовательных услуг с точки зрения функций и целей. И эти различия не ограничиваются возможностями информационных технологий, программного обеспечения, каналов связи. В статье рассматриваются мировые тенденции развития дистанционного обучения.

Nonna Khachatryan, Socio Economic development of distance under pandemic condition - Online education, which quickly **implemented** in the university system, especially during the COVID-19 world epidemic period, has its peculiarities of management, as it differs significantly from the traditional education organization system in terms of functions and goals. And these differences are not limited to the possibilities of information technologies, software, communication channels. The article discusses the world wide development trends of distance learning.

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր - Աշխատավարձ, աշխատանքի բավարարություն, մոտիվացիա, աշխատանքի արտադրողականություն

Արդի աշխարհում հասարակության բարեկեցության, երջանկության և բավարվածության կարևորագույն ցուցանիշ է հանդիսանում հասարակության անդամների նյութական ունեցվածքը: Չնայած գոյություն ունեցող հասարակարգերի մշակութային, տնտեսական և գաղափարական տարբերությունների, այսօր պետությունների մեծ մասը համարվում է կապիտալիստական (հաճախ՝ սոցիալ-կապիտալիստական) հասարակարգի վրա հիմնված խառը տնտեսական համակարգերի (mixed economy) քաղաքական-հասարակական միավորներ: Այսպիսի տնտեսություններում հասարակության տարբեր անդամների եկամուտի աղբյուրները տարբեր են, սակայն մարդկանց մեծ մասի հիմնական եկամտի աղբյուրը աշխատավարձն է: Այս պարագայում, եթե մեկ մարդու նյութական ունեցվածքը կարող է որոշակի պատկերացում տալ նրա հասարակական դիրքի, բարեկեցության մակարդակի և երջանկության վերաբերյալ, ապա աշխատավարձերի մակարդակը, մեկտեղված այլ տնտեսական ցուցանիշների հետ, կարող է մատնանշել ամբողջ հասարակության բարեկեցության աստիճանը:

Աշխատավարձը, որպես մարդու կարիքների ֆինանսավորման միջոց բավականին պարզ կատեգորիա է և, հարաբերվելով այլ տնտեսական ցուցանիշների, մասնավորապես՝ գների մակարդակի և սպառողական զամբյուղների դրամական արժեքների հետ, կարող է ցույց տալ աշխատավորի բարեկեցության աստիճանը և նյութական բավարավածությունը:

Մյուս կողմից, աշխատավարձը կարող է դիտարկվել նաև այն աշխատանքի համատեքստում, որի համար այն վճարվել է աշխատողին: Աշխատավարձը, որպես կատարված կամ կատարվելիք աշխատանքի դրամական փոխհատուցում կարող է չափվել տարբեր եղանակներով, հաշվի առնելով՝ աշխատանքի կատարման վրա ծախսված ժամանակը, դրա համար պահանջվող մասնագիտական ունակությունները, վտանգները և այլն: Հաճախ, տնտեսական այս փոխգործակցությունը կարող է կատարվել հակառակ ուղղությամբ, այսինքն՝ կատարված կամ պահանջվող աշխատանքի արժեքին համապատասխան աշխատավարձ սահմանելու փոխարեն, գործատուն կարող է սահմանել աշխատավարձ և դրան համապատասխան՝ ակնկալել որոշակի աշխատանք: Օրինակ՝ կազմակերպության երկու ա-

վագ մասնագետներից գործատուն առավել շատ «արժեք» է ակնկալում նրանից, ով ստանում է ավելի բարձր աշխատավարձ: Այդ «արժեքը» կարող է պայմանավորված լինել աշխատանքային փորձով, կրթությամբ և ստացած որակավորումներով, նվիրված աշխատանքով և այլն:

Երկար տարիներ այս երևույթը վերագրվում էր աշխատավարձի մոտիվացիոն տեսությանը[1], երբ գործատուները, բարձրացնելով աշխատողների աշխատավարձը, փորձում էին նրանց մոտիվացնել և այդ կերպ ակնկալում էին աշխատուժի արդյունավետության բարձրացում: Անշուշտ, մոտիվացիան համարվում է կառավարման կարևորագույն օղակներից մեկը և ճիշտ մոտիվացված մարդկային ռեսուրսները կարող են ցուցաբերել արդյունավետության բարձր մակարդակ, գերակատարել սահմանված նախագծային աշխատանքները, կարող են աշխատել բարձր ճնշման տակ և սահմանել բարձր նշաձողեր: Սակայն այս դեպքում մեզ հետաքրքրում է ոչ թե մոտիվացիան որպես առանձին երևույթ, այլ մոտիվացիայի վրա աշխատավարձի ազդեցությունը:

Աշխատավարձի մոտիվացիոն տեսության ջատագովները պնդում են, որ բարձր աշխատավարձը, տարբեր տեսակի հավելավճարները կամ պարգևատրումները ոգևորում են աշխատակիցներին, բարձրացնում են նրանց աշխատանքային բավարարվածությունը, և աշխատողները սկսում են աշխատել ավելի նվիրված կերպով:

Այդուհանդերձ, մինչ այժմ աշխատավարձի չափի և աշխատանքային արդյունավետության կապը ստուգելու համար կատարված բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքները միանշանակ չեն: Որոշ մասնագետներ կարծում են, որ *«կա էմպիրիկ ապացույց, որ վճարը անմիջական ազդեցություն ունի աշխատանքի արտադրողականության վրա, որը երբեմն կարող է ներազդվել այլ փոփոխականների կողմից»*[2]: Այդ փոփոխականները կարող են լինել տարբեր՝ կախված յուրաքանչյուր առանձին օրինակից՝ կազմակերպությունից, աշխատողից, աշխատանքից և այլն: Այդ փոփոխականներից մեկն է, օրինակ, ինքնագնահատականը:

Կան նաև կարծիքներ այն մասին, որ աշխատավարձը կարող է ազդեցություն ունենալ աշխատողների մոտիվացիայի վրա միայն կարճաժամկետում կամ միայն ցածր վարձատրությունների տիրույթում, քանի որ բարձր աշխատավարձերի դեպքում աշխատավարձի բերած սահմանային արդյունքը (խթանիչ ազդեցությունը) փոքր է:

---

[1] **Галимова, А. Ш., Галимова, Л. Ф., & Тимербулатова, А. Р.** (2015). Заработная плата как фактор мотивации к труду. Вестник Волжского университета им. В.Н. Татищева, (1 (33)), 163-169.

[2] **Donald Gardner** et al, "The effects of pay level on organization-based self-esteem and performance: A field study", Journal of Occupational and Organizational Psychology, September 2004

Աշխատավարձի մոտիվացիոն տեսությունը հնարավորինս լավ ուսումնասիրելու համար առանձնացնենք երկու գործոն՝


1. Աշխատողների բավարարությունը իրենց աշխատանքից (job satisfaction)

2. Աշխատողների բավարարությունը իրենց աշխատավարձից (pay satisfaction)

Համաձայն 2010թ.ԱՄՆ-ում կատարված ուսումնասիրության[1], վարձատրության չափը թույլ կոռելացիայի մեջ է գտնվում աշխատանքից և աշխատավարձից բավարարության աստիճանների հետ:

Հաշվի չառնելով փոքր բացառությունները՝ հետազոտությունը հանգում է նրան, որ աշխատավարձի չափը նշանակալի ազդեցություն չի ունենում աշխատողների բավարարվածության վրա:


Նկար 1. Աշխատանքի բավարարության կախումը աշխատավարձի չափից՝ արտահայտված 2009թ. ԱՄՆ դոլարով[2]



[1] **Timothy A. Judge, Ronald F. Piccolo, Nathan P. Podsakoff, John C. Shaw, Bruce L. Rich,** "The relationship between pay and job satisfaction: A meta-analysis of the literature", Journal of Vocational Behavior, April 2020

[2] **Timothy A. Judge, Ronald F. Piccolo, Nathan P. Podsakoff, John C. Shaw, Bruce L. Rich,** "The relationship between pay and job satisfaction: A meta-analysis of the literature", Journal of Vocational Behavior, April 2020


Նկար 2. Աշխատավարձի բավարարության կախումը աշխատավարձի չափից՝ արտահայտված 2009թ. ԱՄՆ դոլարով[1]



Ուսումնասիրության հաջորդ հարցը հետևյալն է՝ արդյոք աշխատողների բավարարվածությունը ունի դրական կամ բացասական ազդեցություն նրանց կատարած աշխատանքի արդյունավետության վրա: Հարցը կարելի է դիտարկել երկու տեսնակյունից. մի կողմից՝ աշխատողների բարձր բավարարվածության պայմաններում հանձնարարված կամ պահանջվող աշխատանքը կատարվում է հաճույքով, հետևաբար՝ որակին հատկացվում է պատշաճ ուշադրություն, իսկ մյուս կողմից՝ բարձր բավարարվածությունը հանդիսանում է հարմարավետության գոտու ստեղծման նախապայման և վնասում է աշխատանքային նորարարությանը: Այսպիսի երկակի ազդեցությունից բխում է, որ աշխատողների բավարարությունը, ըստ այդմ նաև աշխատավարձի չափը՝ չի կարող համարվել խթանի ուղղակի և անքննելի աղբյուր: Իսկ եթե աշխատավարձը (երկարաժամկետում կամ բարձր աշխատավարձերի տիրույթում) չի համարվում մոտիվացիայի աղբյուր, ապա այն չի կարող բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը:

[1] **Timothy A. Judge, Ronald F. Piccolo, Nathan P. Podsakoff, John C. Shaw, Bruce L. Rich,** "The relationship between pay and job satisfaction: A meta-analysis of the literature", Journal of Vocational Behavior, April 2020

Դիագրամ 1. Աշխատավարձի ազդեցությունը աշխատանքի արդյունավետության վրա



Չնայած այն փաստի, որ դրամը ներկայացվում է որպես մոտիվացիայի աղբյուր և տեսաբանների կողմից այդպիսինն է համարվում երկար տարիներ շարունակ, վերջին տասնամյակում տպագրված բազմաթիվ հոդվածներ կասկածի տակ են դնում աշխատավարձի այդպիսին լինելը՝ հատկապես բարձր աշխատավարձերի տիրույթում:

Այսպիսով, արդյո՞ք կարելի է պնդել, որ նույն մասնագիտություն ունեցող, սակայն տարբեր աշխատավարձեր ստացող երկու աշխատողներ ունեն նույն արտադրողականությունը: Տեսականորեն, իրավիճակը ամբողջովին հնարավոր է, սակայն պետք է ընդգծել, որ աշխատավարձը ոչ միայն կառավարման կատեգորիա է, այլև տնտեսագիտական: Աշխատավարձը աշխատուժի գինն է և այն հավասարակշռում է աշխատուժի շուկան: Ուրեմն, աշխատավարձը ոչ միայն մոտիվացիոն գործոն է (եթե վերջինս համարում ենք մոտիվացիոն գործոն), այլև մի գործիք, որի միջոցով տեղի է ունենում աշխատաշուկայի զտում: Այլ կերպ ասած, բարձր աշխատավարձը գրավում է բարձր արհեստավարժություն ունեցող և մրցունակ մասնագետներին, սակայն ցածր որակավորում ունեցող մասնագետները աշխատավարձի բարձրացումից չեն սկսում ավելի լավ աշխատել:

Վերոնշյալից հետևում է, որ «Ցածր աշխատավարձով աշխատողը չի կարող պատշաճ որակի ծառայություններ մատուցել» պնդումը առավե-

լապես մոլորություն է և չունի տնտեսագիտական կայուն հիմք: Ցածր աշխատավարձ առաջարկողը ակնկալում է աշխատանքի հրավիրել ցածր որակավորում ունեցող մասնագետի, իսկ ցածր որակավորում ունեցող մասնագետը, չկարողանալով հավակնել բարձր աշխատավաձի, համաձայնում է աշխատել առաջարկվող ցածր աշխատավարձով և ճիշտ հակառակը: Այսպիսով ձևավորվում է աշխատանքային շուկայի հավասարակշռություն, որը տրամաբանական է և համընթաց շուկայական հարաբերությունների սկզբունքներին:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարծում ենք, որ նախորդ դարի տեսաբանների կողմից որպես կաղապար ներկայացրած աշխատավարձի մոտիվացիոն տեսությունը ունի վերանայման կարիք և այլևս չպետք է ներկայացվի որպես բացարձակ ճշմարտություն, պարգևավճարային համակարգերը պետք է հնարավորինս խստացվեն և չբացատրվեն վերջինիս մոտիվացիոն տեսությամբ՝ առնվազն բարձր վարձատրությունների տիրույթում: Աշխատավարձը մեկնաբանում է մրցունակ կադրերի տեղաբաշխումը շուկայում, սակայն աշխատավարձի բարձրացումը (ուղղակի կամ այլ վճարների միջոցով) անպայմանորեն չի բարձրացնում աշխատողների արդյունավետությունը:

Айк Оганнисян, О теории мотивации заработной платы - Эта статья ставит под сомнение теорию мотивации заработной платы, в частности, в ней обсуждается мотивационный фактор заработной платы, влияние заработной платы на удовлетворенность сотрудников и его влияние на производительность. Многочисленные исследования показывают, что заработная плата не оказывает значительного влияния ни на удовлетворенность сотрудников оплатой, ни на удовлетворенность сотрудников работой. В течение многих лет заработная плата считалась одним из важнейших факторов, определяющих производительность труда. Однако в данной работе показано, что заработную плату следует трактовать в основном как рыночно-экономическую категорию, а не как управленчески-мотивационный фактор. Высокая заработная плата делает работу привлекательной для высококвалифицированных специалистов, но сама по себе не является инструментом повышения квалификации и / или наращивания потенциала.

Hayk Hovhannisyan, About The Motivation Theory of Salary - This article aims to challenge the salary motivation theory, in particular, it discusses the motivational factor of salary, the impact of salary on employee satisfaction and its impact on productivity. Numerous studies show that wages do not have a significant impact on either employees' pay satisfaction or their job. For years, salary has been considered as one of the most important factors in determining

labor efficiency. However, this work shows that wages should be interpreted mainly as a market-economic category, not as a managerial-motivational factor. High salary makes work attractive for highly qualified professionals, but it is not in itself a tool for raising qualifications and/or capacity building.

ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ԱՍՏՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Բանալի բառեր - ծախսերի վերահսկողություն, նորմաներից շեղումների հաշվառում, ծախսերի ձևավորման պատասխանատվության կենտրոններ, կրթական ծառայություններ:

Կրթական շուկայում համալսարանների մրցակցությունը չի սահմանափակվում միայն մատուցվող կրթական ծառայությունների որակով: Ներկայումս կարևորվում է նաև ծառայությունների մատուցման տնտեսական կողմը և այս առումով համալսարանները ձգտում են կրթական ծառայությունների ծախսային բարձր հատույցի: Այս համատեքստում, համալսարանները կանգնում են կրթական ծախսերի վերահսկողության արդյունավետության բարձրացման մարտահրավերների առջև և փորձում են հնարավորինս նպատակային ծախսել հավաքագրվող կրթավճարները ու պետությունից ստացվող ֆինանսական աջակցությունը:

Փորձը ցույց է տալիս, որ կրթական ծառայությունների մատուցման ծախսերի հաշվառումն ու վերահսկողությունը ՀՀ բուհերում հիմնականում իրականացվում է "կաթսայական" սկզբունքով, երբ ծախսային հոդվածները սահմանվում են ոչ թե ըստ բուհական առանձին ստորաբաժանումների, այլ ամբողջ համալսարանի կտրվածքով: Ավելին, համալսարանների ստորաբաժանումների գծով հիմնականում չեն սահմանվում ծախսային լոկալացված նախահաշիվներ, որը ներքին վերահսկողության համակարգում խոչընդոտում է ռեսուրսների գերածախսերի ձևավորման կենտրոնների և դրանց պատասխանատուների հայտնաբերումը: Այս առումով, կարևոր ենք համարում ծախսերի նորմատիվային հաշվառման ներդրումը ՀՀ բուհերում:

Նորմատիվային հաշվառումը նոր երևույթ չէ ֆինանսական վերահսկողության համակարգում: Այն լայն տարածում ստացավ ԱՄՆ-ում դեռևս 1960-ական թվականներին, Standart Cost անվանումով:[1] Հիմնականում հաշվառման նման մեթոդաբանություն կիրառվեց այն արտադրական կազմակերպություններում, որոնք ունեին բարձր նյութատարութ-

[1] **Лебедев В.Г., Дроздова Т.Г., Кустарев В.П.** Управление затратами на предприятии: учебник для вузов / Под ред. Г. Краюхина. - СПб.: Питер, 2012, С. 411-412

յամբ արտադրություններ: Ներդնելով ծախսերի նորմատիվային հաշվառման համակարգ, ֆինանսական կառավարիչները հետամուտ էին լինում, թե արտադրության որ տեղամասերում էին ունենում նախատեսվածից ավելի նյութական ծախսումներ, ինչ գործոններ էին ազդում այդ շեղումների վրա, ովքեր էին գերածախսերի պատասխանատուները: Գործնականում, նաև սկսվեց կիրառվել շեղումների հաշվառում, որով նորմաներից ավել կամ պակաս փաստացի շեղումները ոչ միայն չափվում էին, այլև արձանագրվում և ընդգրկվում էին հաշվապահական հաշվառման համակարգ հետևյալ տեղեկատվական սխեմայով.

Փաստացի ծախսեր = Նորմատիվային ծախսեր +,- Շեղումներ

Այնուհետև պարզ դարձավ, որ նորմատիվային հաշվառումը կարող է հանդես գալ որպես ֆինանսական վերահսկողության արդյունավետ գործիք ոչ միայն արտադրական կազմաերպություններում, այլև ծառայությունների ոլորտում, և արդեն իսկ անցյալ դարաշրջանի 80-ականներից շեղումների հաշվառման մեթոդաբանությունը լայն տարածում գտավ նաև ծառայությունների ոլորտում:[1] Այս դեպքում արդեն նորմատիային հաշվառումը սկսեց կիրառվել ոչ մայն նյութածախսի, այլև աշխատանքային ծախսումների և վերադիր ծախսերի վրա:

Հաշվառման նման համակարգի ներդրումը հատկապես արդյունավետ էր տնտեսավարման այն ոլորտներում, որտեղ իրականացվում էր շխթայաան տնտեսական գործունեություն: Կազմակերպությունների ստորաբաժանումները հաճախ ներտնտեսական կոնֆլիկտներ էին ունենում հենց այն պատճառով, որ իրենց մոտ ձևավորված բացասական երևույթների պատճառները փոխանցվում էին տնտեսական գործունեության նախորդ շխթաներից: Այսպես, դետալների թողարկման արտադրամասում նյութածախսի պատճառները գալիս էին վերամշակման նախորդ փուլը սպասարկող արտադրամասի կողմից թողարկված անորակ կիսաֆաբրիկատներից: Կամ, կրթական ծառայություններ մատուցող կազմակերպություններում ծամանակային ծախսումների հիմնական պատճառը կայանում էր նրանում, որ սովորողի կրթական նախորդ մակարդակում չէր ապահովվել անհրաժեշտ գիտելիքների կուտակումներ, որոնք օգտագործվելու էին հաջորդ մակարդակում: Եվ ստիպված, հաջորդ կրթական մակարդակում ծախսվում էին ավելորդ ժամանակային ռեսուրսներ, լացնելու համար նախորդի բացթողումները: Հետևաբար, երբ իրականացվում էր ռեսուրսների նորմատիվային հաշվառում, ապա պարզ էր դառնում, թե իրականում գործունեության որ փուլում էին թաքված բացասական շեղումների պատճառները:

[1] **Друри К.** Управленческий и производственный учёт, М.: Юнити-Дана, 2016. - С. 469-517.

Աստիճանաբար ակնհայտ էր դառնում, որ նորմատիվային հաշվառման կիրառման շնորհիվ ձևավորվում էր ֆինանսական վերահսկողության տեղեկատվական ընդարձակ բազա, որը կարող էր զգալիորեն բարձրացնել ռեսուրսների վերահսկողական գործառույթների արդյունավետությունը: Այնուհանդերձ, կրթական ծառայությունների նորմատիվային ծախսերի հաշվառումը իր կիրառումը չգտավ ՀՀ բուհերում, որը մեր կարծիքով, պայմանավորված է հետևյալ պատճառներով:

Առաջին, ՀՀ բուհերում գործող ֆինանսական մենեջմենթը թերևս չի նախատեսում ծախսային նախահաշիվների կազմում ըստ առնձին ստորաբաժանումների և ամբիոնների, ընդամենը բավարարվելով միայն բուհի ընդհանուր ծախսային նախահաշվային հոդվածների կազմումով և հաստատումով:

Երկրորդ, ծախսային նախահաշիվների կազմման նախաձեռնությունը սկսում է ոչ թե "ներքևից", այլ "վերևից", որով հնարավորություն չի ստեղծվում հիմնավորելու ծախսային նորմաների հավաստիությունը: Այսինքն, համալսարանների ստորաբաժանումների ղեկավարներին չի ամրագրվում պարտավորվածություն մասնակցելու իրենց իսկ գործունեության ծախսերի նախահաշիվների կազմմանը, որը ինչ-որ չափով նվազեցնում է ծախսային նորմաների սահմանման իրատեսականությունը:

Երրորդ, կրթական ծառայությունների ծախսային նախահաշիվների կազմումը ունի որաշակի բարդություններ, կախված կրթույան կազմակերպման առանձնահատկություններից և կրթության որակի անհրաժեշտ մակարդակի ապահովման հետ: Այս հանգամանքներով պայմանավորված, ծախսային նախահաշիվները բուհերում կազմվում են ոչ թե ծառայությունների մատուցման գործունեության բաղադրիչների անհրաժեշտ ռեսուրսատարողունակության հենքով, վիճակագրական մոտեցումներով, հաշվի առնելով նախորդ տարիներին արձանագրված ծախսային փաստացի ցուցանիշները:[1]


Հետևաբար, բուհերում կրթական ծառայությունների ծախսերի նորմատիվային հաշվառման կազմակերպման գործընթացը առաջին հերթին պահանջում է.

- ✓ ըստ առանձին ստրաբաժանումների հիմնավոր ծախսային նախահիվների կազմում,
- ✓ սահմանված ծախսային նախահաշիվներից փաստացի շեղումների արձանագրում,
- ✓ ծախսային նորմաներից արձանագրված շեղումների հաշվապահական հաշվառում և դրանց գծով առնձին հաշիվների վարում,

[1] **Ճուղուրյան Ա. Կիրակոսյան Գ.,** Կրթության աուդիտ, "Տնտեսագետ", Եր. 2004, էջ 18

✓ կրթական ծառայություններ մատուցող ստորաբաժանումների կողմից իրենց ամրագրված ծախսային նախահաշվային և փաստացի մեծությունների գծով հաշվետվողականության բարձրացում,

✓ սահմանված նախահաշիվներից ծախսային նորմաների բացասական շեղումների վերացման գծով կառավարչական որոշումների կայացում (տես գծապատկեր 1):



Գծապատկեր 1 Կրթական ծառայությունների ծախսերի նորմատիվային հաշվառման կազմակերպման շրջանակը:[1]

Սակայն, պետք է արձանագրել, որ բուհերում կրթական ծառայությունների ծախսերի բյուջետավորումը դյուրին իրականացվող գործընթաց չէ և պետք է համահունչ լինի ֆինանսական ներքին վերահսկողության նպատակադրումներին: Հատկապես, այս դեպքում կարևորվում է համալսարանական գործունեության ներկայացումը ըստ առանձին ծախսային կենտրոնների (ամբիոններ, վարչական ստորաբաժանումներ), որը գործնականում դժվարություններ է առաջացնում: Անհրաժեշտություն է առաջանում ծախսերի հիմնավոր տեղաբաշխման ու լոկալացման ուղղությամբ: Այս առումով, առաջարկում ենք նախ և առաջ կրթական ծախսերի տեղաբաշխումը ըստ պատասխանատվության կենտրոնների, որքան որ հնարավոր է, իրականացնել ուղղակիորեն, իսկ վերադիր ծախսերը ամբիոնների միջև բաշխել անուղղակիորեն, հնարավորինս կիրառելով ծախ-

[1] Կազմվել է հեղինակի կողմից:

սերի ձևավորմանը սերտ առնչություն ունեցող հիմքեր: Այս դեպքում արդեն, բուհական համակարգում ֆինանսական վերահսկողությունը առավել հասցեական և ուղղորդված կկազմակերպվի:

Астхик Погосян, Взаимосвязь нормативного учета и контроля над расходами образовательних услуг в университетах - Конкуренция университетов на рынке образования не ограничивается только качеством предоставляемых образовательных услуг. В настоящее время учитывается также экономическая сторона данного процесса, в связи с чем вузы стремятся к высокой отдачи образовательных услуг. В этом контексте университеты сталкиваются с проблемой повышения эффективности контроля над расходами на образование, стараясь как можно больше одресно и целенаправлено использовать частных платежей за обучение и финансовую государственную поддержку.

Astghik Poghosyan, Standard Cost accounting and educational service expenditure control interrelation in universities - University competition in the education market is not limited to the quality of educational services provided. At present, the economic side of services is being used; in this regard, universities are striving for a cost higher outcomes of educational services. In this context, universities face the challenge of increasing the effectiveness of education spending control and trying to spend the collected tuition fees and financial support from the state as purposefully as possible.

ԲՈՒՀԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ


ՎԱՀԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Բանալի բառեր – ֆինանսական գործակիցներ, դրամական հոսքեր, ֆինանսական պաշար, բուհերի ֆինանսական կայունություն:

Հաշվապահական հաշվառման միջազգային հաշվետվություններով նախատեսվող դրամական հոսքերի ներկայացման ձևաչափի կիրառումով, ներկայումս ՀՀ բուհերի կառավարման մարմինները լիարժեք չեն կարողանում ներգործել դրամական պորտֆելի որակական բարելավումների գործընթացի վրա, քանի որ այս պարագայում ընդամենը տեղեկատվություն է ստացվում գործառնական կամ ներդրումային ոլորտներում հոսքերի գծով կառավարչական որոշումներ կայացնելու համար: Այս առումով, կարևորվում է բուհերի դրամական միջոցների պորտֆելի որակական կազմի մշտադիտարկման համակարգի կիրառումը, հիմնված հոսքերի արագության և ժամանակայնության վրա (տես գծապատկեր 1):

Այստեղ արդեն կառավարչական որոշումների կայացման համար կիրառվում է ֆինանսական գործակիցների շրջանակ, որով բուհերի դրամական միջոցների պորտֆելի որակական բարելավման ազդակներ են հաղորդվում կառավարման մարմիններին: Հետևաբար, դրամական հոսքերի խմբային համադրումները ըստ ձևավորման հաճախականության և ժամկետայնության որոշիչ դերակատարում ունեն ֆինանսական գործակիցների հաշվարկման համար:

Բուհերում դրամական նպատակային հոսքերի հասանելիության համար առաջարկում ենք ակտիվացնել ֆինանսական գործակիցների դերակատարումը կառավարման համակարգում: Այդ նպատակով նախ և առաջ կարևորում ենք դրամական հոսքերի խմբավորումները՝ ըստ ժամկետայնության և կրկնման հաճախականության հատկանիշների (տես գծապատկեր 1): Ընդ որում, այստեղ բոլոր բուհերի համար ստանդարտ մոտեցումները հիմնավոր չեն կարող համարվել, քանի որ եթե կրթօջախը առավելապես գիտահետազոտական ծրագրեր է իրականացնում և այնտեղ գերակշռում է դոկտորական կրթությունը, ապա որպես ընթացիկ դրամական հոսքեր կարող են հանդես գալ նաև դրամաշնորհներն ու հետազոտական արդյունքների առևտրայնացումը (C_3), որոնք բակալավրիատի կրթական ծրագրերի գերակշռման դեպքում հանդես են գալիս որպես ոչ ընթացիկ դրամական հոսքեր (տես աղյուսակ 1):



Գծապատկեր 1 ֆինանսական գործակիցների դերը բուհի դրամական միջոցների հոսքերի կառավարման համակարգում[1]

[1] Կազմվել է հեղինակի կողմից:

Այսպես, Նորվեգիայի այն համալսարանները, որոնք իրենց գործունեության ծանրության կենտրոնը տեղափոխել են կրթությունից դեպի հետազոտական ոլորտ, գործում են ոչ թե ուսանողների կրթավճարների, այլ Եվրամիության դրամաշնորհների և երկրի գիտության ռազմավարական զարգացման խորհրդի կողմից հատկացվող ֆինանսավորումների հաշվին[1]: Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական համակարգում գործող կազմակերպությունները հիմնականում բակալվարիատի, և մասամբ էլ՝ մագիստրոսական կրթական ծրագրեր են իրականացնում,[2] հետևաբար, այս պարագայում ընթացիկ դրամական ներհոսքերում կխմբավորվեն ուսանողներից հավաքագրվող կրթավճարները, պետպատվերով ֆինանսավորումը, իսկ արտահոսքերում՝ կրթական ծառայությունների կազմակերպման գործառնական ծախսերին ուղղված ֆինանսավորումը:

Ֆինանսական գործակիցների դերը բուհի դրամական միջոցների պորտֆելի կառավարման համակարգում սահմանային ներդաշնակություն է ապահովում: Ուստի դրամական միջոցների ներհոսքերի և արտահոսքերի գծով սահմանված նորմատիվների խախտումները բուհի դրամական միջոցների պորտֆելի կազմի և կառուցվածքային բարելավման կառավարչական որոշումների առիթ են տալիս: Եվ եթե բուհը ձգտում է ֆինանսական պաշարների ձևավորման բացարձակ կայունության, ինչպես նաև դրամային ներհոսքերի և արտահոսքերի ցանկալի ներդաշնակության, ապա համեմատելով առաջարկվող գործակիցների սահմանային նորմատիվները փաստացի մեծությունների հետ, այն պետք է դիմի դրամական միջոցների պորտֆելի կառուցվածքային վերանայման գծով կառավարչական որոշումների և հաջորդ տարում ձևավորի դրամական միջոցների նոր պորտֆել (տես գծապատկեր 1):

Այսպես, բուհի դրամական հոսքերի հաշվեկշիռը, որը կազմում է 145 մլն դրամ, կարելի է ներկայացնել երեք սցենարով՝ վատագույն, միջին և լավագույն (տես աղյուսակ 1): Եթե դիտարկում ենք առաջին սցենարը, պարզվում է, որ համալսարանն ունի ոչ միայն ֆինանսական պաշարների ձևավորման անկայուն իրավիճակ ($C_1 > E_1$, $C_2 < E_2$, $C_3 < E_3$, $C_4 < E_4$), այլև ընդհանրապես չի ապահովում դրամական միջոցների հոսքերի սահմանային ներդաշնակություն, քանի որ խախտվում են մեր կողմից առաջարկվող ֆինանսական բոլոր գործակիցների նորմատիվային մեծությունները (տես աղյուսակ 2):

---

[1] **Ճուղուրյան Ա., Մխիթարյան Ա.,** Ասպիրանտուրայից դոկտորանտուրա, «Հյուսիսային համալսարան», Երևան, 2016, էջ 56:

[2] **Խաչատրյան Ն.,** Մասնագիտական կրթության տնտեսագիտություն, հեղ. հրատ., Եր. 2010, էջ 32:

Նման իրավիճակում, բուհի դրամական միջոցների պորտֆելի վերանայման հստակ կառավարչական որոշումներ են անհրաժեշտ, որպեսզի մի կողմից բուհը կայունացնի իր ֆինանսական պաշարները, և մյուս կողմից կարողանա ձևավորել դրամական այնպիսի հոսքեր, որոնց պարագայում կբավարարվեն գիտակրթական ծառայությունների կարճաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորման պահանջները:

Աղյուսակ 1. Բուհի դրամական միջոցների հոսքերի հաշվեկշռման սցենարային ներկայացումներ (մլն դրամ)

Ցուցանիշներ	Նշանակ.	Սցենարներ			Ցուցանիշներ	Նշանակ	Սցենարներ		
		I	II	III			I	II	III
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ	C_1	34	22	15	Դրամական միջոցների վերջնական մնացորդ	E_1	5	27	65
Կրթավաճառներ և պետպատվերի ֆինանսավորում	C_2	31	32	85	Ընթացիկ կրթական ծառայությունների ֆինանսավորում	E_2	50	38	47
Հետազոտական արդյունքների առևտրայնացում	C_3	47	55	25	Գիտության ֆինանսավորում	E_3	50	54	15
Նվիրատվություններ և ներդրումներ	C_4	33	36	20	Հեռանկարային ծրագրերի ֆինանսավորում	E_4	40	26	13
Հաշվեկշիռ		**145**	**145**	**145**	***Հաշվեկշիռ***		**145**	**145**	**145**

Դրամական հոսքերի հաշվեկշռման երկրորդ սցենարի դեպքում (աղյուսակ 1), համալսարանին նորից չի հաջողվում հասնելու ֆինանսական պաշարների ձևավորման բացարձակ կայունության, քանի որ չի արձանագրվում $C_1 < E_1$, $C_2 > E_2$, $C_3 > E_3$, $C_4 > E_4$) իրավիճակ: Սակայն, այս պարագայում դրամական միջոցների պորտֆելի նպատակային կառավարման արդյունքում բարելավվում են դրամական հոսքերի որոշ գործակիցներ, իրենց մեծություններով փոքր ինչ մոտենալով սահմանված նորմային, իսկ դրամական միջոցների կայունության փաստացի գործակիցը **(K_4)** արդեն իսկ գտնվում է սահմանված նորմայի սահմաններում (տես

աղյուսակ 2.): Հետևաբար, վերլուծելով առաջին սցենարի պարագայում դրամական միջոցների պորտֆելի բացասական կողմերը, բուհում ֆինանսական գործակիցների ազդակներով հնարավոր է դառնում իրականացնելու պորտֆելի կառուցվածքային բարեփոխումներին ուղղված կառավարչական որոշումներ:

Աղյուսակ 2. Ֆինանսական գործակիցների դերը բուհի դրամական միջոցների հոսքերի սցենարային կառավարչական որոշումների կայացման ոլորտում[1]

Ֆինանսական գործակիցներ	Սահմանափակումներ	Փաստացի մեծություններ			Նորմաներից շեղումներ		
		I	II	III	I	II	III
Դրամական ընթացիկ հոսքերի կայունության գործակից	$K_1 > 2,0$	1,3	1,4	2,1	⇩ -	⇩ -	+ ⇧
Դրամական ոչ ընթացիկ հոսքերի կայունության գործակից	$K_2 > 1,5$	1,12	1,18	2,0	⇩ -	⇩ -	+ ⇧
Դրամական հեռանկարային հոսքերի կայունության գործակից	$K_3 > 3,0$	1,6	1,69	3,46	⇩ -	⇩ -	+ ⇧
Դրամական միջոցների մնացորդների կայունություն	$K_4 > 1,1$	0,1	1,2	4,33	⇩ -	+ ⇧	+ ⇧

Ի վերջո, համալսարանը ձգտելով ֆինանսական պաշարների բացարձակ կայունության, կառավարչական արդյունավետ որոշումների արդյունքում ձևավորում է դրամական միջոցների այնպիսի պորտֆել, որը ապահովում է դրամական միջոցների հոսքերի հաշվեկշռման լավագույն սցենարը: Այս դեպքում, կարճաժամկետ և երկարաժամկետ հոսքերը առաջանցիկ բնույթ են կրում համանուն դրամական ներհոսքերից և ապահովում է տարեսկզբի նկատմամբ դրամական միջոցների մնացորդի կայուն աճ (տես աղյուսակ 2, սցենար III): Միաժամանակ, դրամական միջոցների արդյունավետ կառավարման արդյունքում լավագույն սցերարի պարագայում դրամական հոսքերի բոլոր ֆինանսական գործակիցների

[1] Կազմված է աղյուսակ 1-ի տեղեկատվությամբ:

փաստացի մեծությունները գտնվում են սահմանված նորմաների շրջանակում (տես աղյուսակ 2):

Հետևաբար, դրամական միջոցների հոսքերի գծով սահմանված ֆինանսական գործակիցները բուհի կառավարման համակարգում արդյունավետ գործիքներ են հանդիսանում ֆինանսական պաշարի կառուցվածքային թերությունների բացահայտման և դրանց շտկման ուղղությամբ կառավարչական որոշումների կայացման ոլորտում: Սակայն, մյուս կողմից հիմնախնդիր է առաջանում առաջարկվող ֆինանսական գործակիցների նորմատիվային սահմանաչափերի որոշումը բուհական համակարգում, որին մեր կարծիքով, չպետք է ստանդարտ մոտեցում ցուցաբերվի:

Մեր կարծիքով, յուրաքանչյուր բուհ, ելնելով իր մրցակցային առավելություններից, պետք է զարգացման ռազմավարական ծրագրում ընդգրկի դրամական միցոցների հոսքերին առնչվող ֆինանսական գործակիցների նորմատիվային մեծությունները: Այսպես, եթե բուհը կարողանում է օպտիմալացնել իր գիտակրթական գործունեության ծախսերը և դիվերսիֆիկացնել դրամական խոշոր ներհոսքեր, ապա կարող է իրեն թույլ տալ սահմանելու ֆինանսական գործակիցների ոչ այնքան խիստ նորմատիվային մեծություններ: Եվ հակառակը, այն փոքրամաշտաբ բուհերը, որոնք հիմնականում գործում են կրթավճարների հաշվին և գտնվում են կրթական ծառայությունների մատուցման լարված մրցակցային դաշտում, իրենց զարգացման ռազմավարական ծրագրերում պետք է դիրքորոշում ունենան սահմանելու առավել կոշտ ֆինանսական գործակիցների նորմատիվային մեծությունների սահմանմանը:

Եզրակացություն

Համալսարանները ձգտելու են պարբերաբար վերանայելու դրամական հոսքերի գծով սահմանված նորմատիվները, ելնելով կրթական շուկայում իրենց մրցակցային դիրքերի փոփոխություններից: Հետևաբար, ֆինանսական գործակիցների գործառնական դերը բուհի դրամական միջոցների պորտֆելի կառավարման համակարգում հիմնականում թիրախավորվելու է հետևյալ ուղղություններով.

Առաջին, բուհի ֆինանսական պաշարի կայունության ապահովման մշտադիտարկմանը և դրամական հոսքերի ներդաշնակ հաշվեկշռմանը:

Երկրորդ, բուհի դրամական հոսքերի շարունակական բարելավմանը, ելնելով կրթական ծառայությունների մատուցման շուկայի պահանջարկի դինամիկ փոփոխություններից:

Երրորդ, ընթացիկ, միջնաժամկետ և հեռահար դրամական հոսքերի կառավարման գործնթացի ինտեգրմանը՝ բուհի մարտավարական և ռազմավարական ծրագրերի անխափան իրականացմանը, ֆինանսական

պաշարի որակական բարելավման ազդակներ հաղորդելով համալսարանի կառավարման մարմիններին:

Ваан Геворгян, Пути улучшения оценки финансовых ресурсов в университетах - Используя формат движения денежных средств, представленный в Международных бухгалтерских отчетах, руководящие органы университетов РА не могут в полной мере влиять на процесс улучшения качества финансового портфеля, поскольку в этом случае поступает только информация для принятия решений по управлению денежными средствами в операционной или инвестиционной сферах. В статье предлагаются способы совершенствования системы мониторинга качества финансовых ресурсов вузов, исходя из скорости и своевременности денежных потоков.

Vahan Gevorgyan, Ways to improve the assesment of the universities financal resources - Using the cash flow format presented in the International Accounting Reports, the governing bodies of RA universities cannot fully influence the process of improving the quality of the financial portfolio, since in this only information is received for making decisions on cash management in the operating or investment areas. The article proposes ways to improve the system for monitoring the quality of financial resources of universities, based on the speed and timeliness of cash flows.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ


ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Բանալի բառեր – վճարային գործիքներ, էլեկտրոնային փողեր, վճարահաշվարկային համակարգ, կրիպտոարժույթ, վճարային միջավայրի վիրտուալիզացիա:

Վճարային գործիքակազմի էվոլոյուցիան փողի վերափոխումների և դրանց նյութական ու ոչ նյության կրիչների, ինչպես նաև վճարահաշվարկային միջավայրի փոխակերպումների հետ է պայմանավորված: Այս համախմբում առանցքային է համարվում ոչ թէ կրիչը, որը ներկայանում է որպես վճարման գործիքի ձև, այլ վճարահաշվարկային միջավայրը, որը վճարային գործիքների բովանդակային մասն է ապահովվում: Այս առումով էլեկտրոնային վճարային գործիքների էվոլյուցիան սերտ առնչություն ունի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և վճարային միջավայրի վիրտուալիզացիայի հետ:

Էլեեկտրոնային վճարման գործիքակազմի էվոլյուցիան պայմանավորված է վճարահաշվարկային համակարգի ընդլայնումով և որակական փոփոխություններով: Որոշ հեղինակներ էլեկտրոնային փողերի տնտեսական գործառույթները քննարկում են նեղ իմաստով՝ որպես վճարամիջոց:[1] Այս դեպքում, էլեկտրոնային փողերի էվոլյուցիան ներկայացվում է երեք փուլով (տես գծապատկեր 1.): Առաջին փուլը առանձնանում է մագնիսական կրիչների վրա փողի արժեքի փոխադրումով, երբ զուգահեռաբար սկսեցին կիրառվել դեբետային և կրեդիտային քարտեր: Էլեկտրոնային վճարային գործիքակազմի էվոլյուցիոն երկրորդ փուլը դրսևորվեց դրական մնացորդով սմարթ քարտերի կիրառմամբ: Այս երկու ժամանակահատվածում գործարքներն դեռևս իրականացվում էին լոկալ վճարային միջավայրում՝ կանխիկ դրամաշրջանառության գերիշխող պայմաններում: Սակայն արդեն իսկ ակնհայտ էր, որ էլեկտրոնային վճարումներն ունեին որոշակի առավելություններ ավանդական վճարումների նկատմամբ: Էլեկտրոնային փողերի էվոլյուցիոն երրորդ փուլը առնչվում է համացանցում վճարումների իրականացման հետ, երբ վճարահաշվարկային գործարնքները սկսեցին ակտիվորեն ընդլայնվել առցանց համակարգում:

[1] **Коробейникова О.М.,** Платежные технолигии среди интернеы, //Финансы и кредит, 2012, 347, стр 29-38



Գծապատկեր 1. Էլեկտրոնային վճարային համակարգերի էվոլյուցիոն փուլերը[1]

Էլեկտրոնային փողերի առաջացման պահանջը ի սկզբանե պայմանավորվեց վճարային չեկերով գործարքների թերությունների հետ: Դեռևս անցյալ դարաշրջանի 50-ականներին պարզ դարձավ, որ անկանխիկ հաշվարկների միջավայրում կիրառվող չեկերը որպես վճարամիջոցներ ունեին թերություններ վճարողի իդինտիֆիկացման, վճարային գործարքների արագության և անվտանգության առումով: Չեկերով կատարվող ավանդական գործարքների կրճատումը և էլեկտրոնային կրիչներով վճարային գործարքների ներդրումը առավելապես ցայտուն դրսևորվեցին հատկապես Հյուսիսային ամերիկայի երկրներում, որտեղ մինչև անցյալ դարաշրջանի 90-ական թվականները մանրածախ և մեծածախ առևտրում չեկերով վճարումները էական տեսակարար կշիռ ունեին: Եվ եթե 1990 թվականին առևտրային գործարքներում չեկերի շրջանառությունը ԱՄՆ-ում կազմում էր 82% իսկ Կանադայում 67%, ապա արդեն իսկ 2009 թվականին այդ ցուցանիշները համապատասխանաբար նվազեցին մինչև 26% և 13%, իրենց տեղը զիջելով վճարման քարտային գործիքների գործածությանը:[2] Ընդ որում, այդ քարտերը փոխկապակցված էին մագնիսական կրիչների հետ, և դրանցով վճարումներն իրականացվում էին ավանդական սկզբունքներով, որի արդյունքում դեռևս 1950 թվականին ԱՄՆ-ում ստեղծվեց առաջին կրեդիտ քարտը՝ Diners Club-ը:

Այդ նույն ժամանակահատվածում, մի քանի բանկեր նույնպես փորձում էին ստեղծել նմանատիպ քարտեր, սակայն հաջողության չէին հասնում, քանի որ չկային օգտատերեր, քիչ էին այն հաճախորդները, ովքեր

[1] Կազմվել է հեղինակի կողմից:

[2] **Коробейникова О. М.,** Развитие современных платежных услуг в сфере связы и электронных коммуникациях, // ФИНАНСОВЫЙ БИЗНЕС., 2013. №3, стр. 24-30

այդ քարտերով գնումներ կկատարեին և հակառակը՝ օգտատերերը չէին ցանկանում օգտվել քարտերից, քանի որ դեռևս չկային համապատասխան գործարքային կետեր, որտեղ հնարավոր կլիներ վճարումներ կատարել բանկային քարտերով: Այդ ճգնաժամը հաղթահարվեց, երբ Ֆրեզնո քաղաքում Bank of America-ն իր հաճախորդներին, որոնք կազմում էին քաղաքի բնակչության 45%-ը, բաժանեց շուրջ 60 հազար քարտ: Այս պարագայում արդեն վաճառականները և ազգաբնակչությանը ծառայություններ մատուցողները հետաքրքրվեցին և ընդունեցին քարտային վճարամիջոցներով առևտուրը, որը թերևս լոկալ բնույթ էր կրում: Հետագայում, այդ քարտի շրջանառությունը դուրս եկավ լոկալ շրջանակներից և արդեն իսկ 1976 թվականին քարտն օգտագործվում էր 15 երկրներում, որոնք միանալով մեկ ասոցիացիայում ստեղծեցին բրենդ, որը կոչվեց VISA.[1]

Էլեկտրոնային վճարային գործիքների էվոլյուցիոն երկրորդ փուլը սկիզբ առավ 1960-ական թվականներին, երբ շրջանառության մեջ մտան սմարտ քարտերը և ստեղծվեցին առաջին բանկոմատները (ATM – automated teller machine): Այս դեպքում արդեն, սմարթ քարտերով հնարավոր էր կատարել ոչ միայն վճարումներ, այլև շուրջօրյա ռեժիմով մուտք գործել անձնական հաշիվ, ստուգել մնացորդը, կատարել կանխիկացումներ: Բնականաբար, սմարթ քարտերով էլեկտրոնային վճարումները լոկալացված բնույթ չէին կրում և գործարքների իրականացման շրջանակը առավել ընդգրկուն էր տեղական և միջազգային բանկային համակարգերում:

Էլեկտրոնային վճարային ցանցի արագընթաց զարգացումը հանգեցրեց նրան, որ արդեն 1980-ական թվականներն կիրառության մեջ մտավ PhoneBanking-ը, որով հաճախորդները զանգահարելով բանկ և նույնականացնելով իրենց անձը, կարող էին վճարման հանձնարարականներ իրականացնել տարբեր ծառայություններից օգտվելու համար: Առաջին փորձը մասնակիորեն տեղի ունեցավ Նյու Յորքում, որը մատուցվեց City բանկի կողմից և կոչվեց Test at Home Banking, իսկ 1983 թվականին Bank of Scotland-ը նման վճարային ծառայություններ մատուցեց, որը կոչվեց Home Link.

Արդեն ակնառու դարձավ, որ ավանդական վճարամիջոցներին զուգահեռ շրջանառության համակարգում իրենց զգալի տեղն են զբաղեցնում էլեկտրոնային վճարամիջոցները, որն էլ պահանջ դրեց դրանց օգտագործումը պետական մակարդակով կարգավորելու համար: Այդ առաքելությունը հանձն առան Եվրամիության երկրները, երբ Եվրոպական կենտրոնական բանկը 2000 թվականին ընդունեց էլեկտրոնային փողերի ճանաչ-

[1] **Դանիելյան Հ., Համբարձումյան Ա., Ստեփանյան Է.,** Խորհրդավոր կրիպտոաշխարհ, հեղ. հրատ. 2019, էջ 16

ման և շրջանառության կարգաբերման հրահանգներ:[1] Այս հրահանգների անհրաժեշտությունը հատկապես ակնառու դարձավ, երբ էլեկտրոնային վճարային գործիքները սկսեցին օգտագործվել առցանց համակարգում և ներխուժեցիոն վիրտուալ տիրույթ՝ հիմնված ինովացիոն տեխնոլոգիաների վրա (տես գծապատկեր 1.2.1): Մինչ այդ, արդեն ամերիկյան Stamp of Credit Union ֆինանսական խոշոր ընկերությունը իր հաճախորդներին արդեն իսկ առաջարկում է Internet Banking ծառայություն, իսկ 1995 թվականին Presidential ֆինանսական կազմակերպությունը հնարավորություն տվեց հաճախորդներին ոչ միայն օգտվելու առցանց վճարային ծառայություններից, այլև տեսնելու իրենց հաշիվների շրջանառությունը: Էլեկտրոնային վճարային գործիքակազմի այդ զարգացումների ֆոնին անհրաժեշտություն առաջացավ կարգաբերելու էլեկտրոնային փողերի թողարկման, ճանաչման, շրջանառության ապահովման գործարքները:[2]

Միջազգային սկզբունքներով էլեկտրոնային փողերը սկսվեցին դիտարկվել որպես թողարկողի պարտավորվածություն, որը արձանագրվում էր էլեկտրոնային կրիչների վրա և ծառայում էր օգտագործողների համար որպես վճարամիջոց: Հետևաբար, էլեկտրոնային փողերի առկայությունը առաջին հերթին ամրագրվեց հետևյալ չափանիշներով.

- արձանագրում և ներկայացում էլեկտրոնային կրիչներով,
- թողարկում էմիտենտների կողմից, այլ սուբյեկտներից կատարված դրամական միջոցների մուտքերի հիման վրա, ոչ պակաս դրամական արժեքների ընդունած մուտքերի արժեքից,
- այլ սուբյեկտների կողմից ճանաչում որպես վճարամիջոց:[3]

Դեռևս 1993 թ միջազգային ֆինանսական պրակտիկայում ձեռնամուխ եղան ոչ միայն քարտային հենքով (card based), այլև ցանցային հենքով (network-based) էլեկտրոնային փողերի թողարկմանը: Արդյունքում, 1994 թվականին Եվրամիության երկրները սկսեցին ճանաչել էլեկտրոնային փողերը և Եվրամիության կենտրոնական բանկը հանձն առավ իրականացնելու մշտական էլեկտրոնային փողերի թողարկման և շրջանառության մշտական մոնիտորինգ, համապատասխան տեղեկատվության հաշվետվողականության կազմակերպում, անգամ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի կայունությանը նպաստող քաղաքական որոշումների աջակցում: Իսկ 1996 թվականից սկսած, Միջազգային հաշվարկների բանկը (*Bank for International Settlements-BIS*)) տարածաշրջա-

[1] The E-Mony Directive, 2000/46/EC//Europian Central Bank, 2000

[2] **Кочергин Д. А.** Электронные деньги: организация эмиссии, проведение платежей, регулирование денежного оборота, СпбГУЭФ, 2006 стр. 25–35.

[3] **Обаева А.** Обеспечение стабильности и развитие националйной платежной системы системы – новая цель деятельности банка России//Денги и кредит, 2012, #1, стр. 29

նային կենտրոնական բանկերի աջակցությամբ պարբերաբար սկսեց վերլուծել էլեկտրոնային վճարամիջոցների զարգացման ընթացքը և մինչ օրս հրապարակել համապատասխան հաշվետվություններ:

Էլեկտրոնային փողերի կիրառությունը ավելի ակտիվացավ, և ակնառու դարձավ դրանց որոշակի առավելությունները ավանդական փողի նկատմամբ: Հատկապես այն դրսևորվեց զանգվածային վճարումների դեպքում, երբ էլեկտրոնային փողերով իրականացվում էին մանրածախ գործարքներ, գումարը ակնթարթորեն փոխանցվում էր վճարողից ստացողին, կարիք չեր զգացվում ծառայություններ ստանալիս վճարման հերթեր ձևավորելու, մանրադրամը հետ վերադարձնելու և այլն: Ընդհանուր առմամբ, ավանդական փողի նկատմամբ էլեկտրոնայինը ունեցավ հետևյալ առավելությունները.

✓ դրամի բաժանելիության հարմարավետությունը, երբ չի զգացվում մանրադրամի վերադարձի անհրաժեշտություն,

✓ դրամի տեղափոխման հարմարավետություն, քանի որ էլեկտրոնային փողերը ի տարբերություն ավանդականի, չունեն զանգված և ֆիզիկական պարամետրեր,

✓ թողարկման չափազանց ցածր ինքնարժեք, քանի որ ի տարբերություն ավանդական փողի, անհրաժեշտություն չկա մետաղադրամներ հատելու կամ թղթադրամներ թողարկելու,

✓ փողի քանակի հաշվարկային դյուրինություն, երբ էլեկտրոնային կրիչների վրա փողի մնացորդի հաշվարկը կատարվում է ավտոմատ, ի տարբերություն ավանդական փողի, որի ֆիզիկական քանակի հաշվարկի համար կիրառվում են տարբեր տեխնիկական միջոցներ,

✓ փողի պահպանման ինքնարժեքի ցածր մակարդակ, երբ ի տարբերություն ավանդականի, էլեկտրոնային փողի համար չեն կիրառվում հատուկ պահեստարաններ և բունկերներ,

✓ փողի շարժի արձանագրման օպերատիվության բարձր աստիճան և ճկուն հաշվետվողականություն:

Սակայն շատ կարճ ժամանակաընթացքում փորձը ցույց տվեց, որ էլեկտրոնային փողին հատուկ են ոչ միայն առավելություններ, այլև թերություններ: Մասնավորապես.

▪ կիրառման իրավական դաշտի անհամապատասխանությունները որոշակի տարածաշրջաններում, երբ շատ երկրներ դեռևս միանշանակ չեն ընկալում էլեկտրոնային փողերի կիրառումը և իրավական տարբեր նորմեր են ընդունում այդ ուղղությամբ,

▪ էլեկտրոնային կրիչների վրա պահպանման տեխնոլոգիական բարդությունները և տեխնիկական անվտանգությունը,

▪ ճանաչման բարդությունը, քանի որ հատուկ միջոցներ են անհրա-

ժեշտ փողերի մնացորդների և շարժի տեղեկատվության հասանելիության համար,

- վճարողի և փոխանցողի միջև ուղղակի հաղորդակցման անհնարինությունը, որը ակնառու էր ավանդական փողով վճարումներ կատարելիս,
- կիբեռհարձակումների ռիսկը, երբ հավանական է հակերային գործիքներով էլեկտրոնային քսակներից կատարելու գողություն:[1]

Էլեկտրոնային վճարային համակարգերի կառավարման խնդիրն ավելի բարդացավ, երբ սկսեցին նախորդ դարաշրջանի 90-ականների վերջերին, էլեկտրոնային փողերի պաշտոնական թողարկմանը զուգահեռ, մասնավոր ոլորտի նախաձեռնությամբ սկսեցին թողակվել կրիպտոարժույթներ (տես գծապատկեր 1.2.2): Այսինքն պետական կարգավորումների շրջանակից դուրս սկսեցին շրջանառվել էլեկտրոնային փողեր (Bitcoin, Ethereum, Яндекс.Деньги, STECARR), որոնք որոշակի տարածաշրջաններում հաջողությամբ ընդունվեցին որպես վճարամիջոցներ (-Ճապոնիա, Բելառուս, Վրաստան):

Ընդհանուր առմամբ, գործողության մեջ դրվեցին համացանցային հենքով կարգաբերվող էլեկտրոնային վճարային համակարգեր, ինչպիսիք էին PayPal-ը, SRRICC, Яндекс.Деньги աֆրիկյան վճարային համակարգ M-Pesa, որն առավել ակտիվ է գործում Քենիայում և Տանզանիայում: Իսկ սմարթ քարտերի հենքով առավել ակտիվ գործող կենտրոնական բանկերի կողմից պաշտոնապես կարգաբերվող էլեկտրոնային վճարահաշվարկային օբյեկտներ հանդես եկան Visa Cash, WEBMONEY, Mondex, հոլանդական Chipknip, Hwnkangi Otkopus համակարգերը: Փաստորեն, դրանց զուգահեռ, սկսեցին թողարկվել մասնավոր նախաձեռնությամբ էլեկտրոնային փողեր որոնք չէին անցնում կենտրոնական բանկերի պաշտոնական կարգաբերումներով:

Հայաստանի Հանրապետությում էլեկտրոնային փողերի թողարկման և էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի պաշտոնական կարգավորումները թերևս նախաձեռնվեցին 2000-ականների սկզբին, երբ ընդունվեցին ոլորտին առնչվող օրենքներ և ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգեր, որոնք սկսեցին ակտիվ գործնական կիրառություն ստանալ: Վիճակագրությունը ցույց տվեց, որ վերջին տարիներին ՀՀ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերը կայունություն են դրսևորում:

Արդյունքում ՀՀ վճարահաշվարկային համակարգում ներկայումս գործունեություն են ծավալում այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Թել-Սել - Իզի Փեյ, Իդրամ, Մոբիդրամ և այլն: Դրանք մատուցում են վճարահաշվարկային ծառայություններ, ստեղծում են արդի տեխնոլո-

[1] **Парасоцкая Н.,** Архипова А., Электронные денги: проблемы и перспектижы, // Бухгалтерский учет в бюджетных и некомерческих организациях, 14 (350), 2014, стр 38-42


գիական վճարային գործիքներ, իրականացնում վճարային գործիքների սպասարկում և այլն: Այս համակարգերի միջոցով հնարավոր է դառնում տերմինալներով, բջջային հեռախոսներով կամ առցանց կատարել զանազան վճարային գործառնություններ՝ կոմունալ ծառայություններ, բաժանորդավճարներ, վարկային պարտավորություններ, ապահովագրավճարներ, պետվճարներ, արագ դրամական փոխանցումներ և այլն: Այս ընկերությունների մի մասն ունի տերմինալների բավականին զարգացած ցանց, որն ընդգրկում է ինչպես Երևան քաղաքը, այնպես էլ մարզերը (օրինակ՝ Թել-Սել ընկերությունը ունի 1800-ից ավելի, իսկ Իզի Փեյը՝ շուրջ 1400 տերմինալներ):[1]

Ընդ որում նշված ընկերությունները ՀՀ կենտրոնական բանկից ստացել են էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն, որի շնորհիվ տարածվում և խրախուսվում է էլեկտրոնային փողի օգտագործումը Հայաստանում՝ նպաստելով էլեկտրոնային առևտրի զարգացմանը, հաճախորդներին հնարավորություն է ընձեռվում առցանց ռեժիմով կատարելու բազմատեսակ վճարումներ, և կատարելագործվում են դրամական փոխանցումների հնարավորությունները: Դրան զուգահեռ, ՀՀ-ում արդեն իսկ սկսվել է բջջային կապի օպերատորների կողմից սեփական վճարային համակարգերի ստեղծման գործընթացը: Այսպես, Վիվասել ՄՏՍ-ը ստեղծել է «Մոբիդրամ», Յուքոմը՝ «Յուփեյ» համակարգերը, որոնք ունեն ՀՀ ԿԲ խորհրդի կողմից տրված Վճարահաշվարկային կազմակերպության դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու լիցենզիա:[2]

Բացի այդ, ՀՀ առևտրային բանկերը ներկայումս աշխատանքներ են տանում՝ զարգացնելու վճարահաշվարկային մի շարք գործառնություններ, ինչպիսիք են հեռակա բանկային ծառայությունների մատուցումը (E-Banking, E-Card Banking, Mobile-Banking, SMS-Banking), չիպային քարտերի թողարկում/սպասարկումը, արտարժույթի ավտոմատ փոխանակման սարքերի (ԱԱՓՍ) կիրառումը, կանխիկի մուտքագրման Cash-in ավտոմատ մեքենաների տեղադրումը: Ներկայումս ակտիվություն է նկատվում նաև ՀՀ առևտրային բանկերի կողմից միջազգային վճարային համակարգերին անդամակցության ճանապարհով քարտերով իրականացվող նոր վճարամիջոցների գործառնությունների ներդրման, անգամ սեփական պրոցեսինգային կենտրոնների հիմնադրման ուղղությամբ:

[1] www. banks.am.

[2] **Տեփոյան Ա.,** Վճարահաշվարկային համակարգի դերը ՀՀ տնտեսությունում, Բանբեր ԵՊՀ, 20192., էջ 67-75



Գծապատկեր 2. Էլեկտրոնային փողերի էվոլյուցիոն փուլերի ներկայացման առաջարկվող մոտեցումները[1]

Այսպիսով, մեր կողմից էլեկտրոնային փողերի էվոլյուցիոն փուլերի ներայացվում են նոր մոտեցումներով, որոնք հիմնվում են էլեկտրոնային վճարման գործիքակազմի ընդլայնման շարժառիթների վրա (տես գծապատկեր 2): Այստեղ, էլեկտրոնային փողերի ձևավորման էվոլյուցիոն գործընթացը ներկայացվում է ոչ թե երեք (տես գծապատկեր1), այլ չորս փուլով, երբ դրամի արձանագրման ավանդական կրիչներին զուգահեռ հանդես եկան էլեկտրոնային կրիչներ (I փուլ), այնուհետև դրամին համարժեք միավորները սկսեցին թողարկվել ոչ միայն ֆինանսական, այլև ոչ ֆինանսական կառույցները (II փուլ): Էլեկտրոնային փողերի էվոլյուցիոն երրորդ փուլը համարվեց անանուն վճարային գործարքների իրականացումը: Եվ վերջապես, մեր օրերում էլեկտրոնային փողերի թողարկման և շրջանառության առանձնահատկությունը կայանում է կրիպտոարժույթների ի հայտ գալով (IV փուլ), որոնց գծով չեն իրականացվում պետական կարգաբերումներ:

Եզրակացություն

Էլեկտրոնային փողերի էվոլյուցիոն փուլերի ներկայացման մեր մոտեցումները թույլ են տալիս կատարելու մի շարք եզրահանգումներ:

Առաջին, էլեկտրոնային փողի ձևավորման էվոլյուցիաի հետ մեկտեղ վերանայվում են փողի ֆունկցիաները: Այստեղ առաջնահերթ է դառնում փողի վճարամիջոց ֆունկցիան, քանի որ էլեկտրոնային փողերը գրեթե չեն կատարում կուտակման գործառույթ: Ավելին, հիմնականում

[1] Կազմվել է ատենախոսի կողմից:

հանդես գալով որպես վճարամիջոց, էլեկտրոնային փողերը անուղղակի դերակատարում են ունենում արժեքի չափայնության գործառույթում: Հանդիսանալով որպես վիրտուալ չափման միավոր, էլեկտրոնային փողերը հիմնականում ներկայանում են որպես նրանց հետևում կանգնած իրական փողերի փոխակերպումներ, դրանով իսկ կորցնելով արժեքի չափման գործառույթը: Ուստի, էլեկտրոնային փողերի ձևավորման էվոլյուցիայի հիման վրա կարելի է պնդել, որ ներկայումս դրսևորվում է վիրտուալ փողի մի ածանցված՝ փոխարժեքի ներկայացման գործառույթը: Եվ հենց այդ նոր՝ փոխարժեքի ներկայացման գործառույթը հետին պլան է մղում "համաշխարհային փող" ֆունկցիան, քանի որ էլեկտրոնային փողը միջազգային շուկաներում ինքնին արժութային փոխակերպման է ենթարկվում և հանդես է գալիս պահանջվող փոխարժեքով:

Երկրորդ, փողի թվայնացման էվոլյուցիան հանգեցրեց նրան, որ դրամի էմիսսիայի և շրջանառության պետական կարգավորումներին զուգահեռ սկսեցին թողարկվել պետական կարգավորիչ համակարգերից դուրս էլեկտրոնային փողեր: Այսօր արդեն իրականություն է դառնում ոչ պաշտոնական էլեկտրոնային փողերի էմիսսիան և շրջանառությունը, որը հիմնախնդիրներ է առաջացնում պետական մակարդակով էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի գործունեության ֆինանսական կառավարման գծով:

Երրորդ, էլեկտրոնային փողի ձևավորման էվոլյուցիաի հետ մեկտեղ ակտիվանում են բազմաբնույթ թվայնացված վճարամիջոցները և ընդլայնվում դրանց սպասարկող ենթակառուցվածքները: Թվայնացվող վճարահաշվարկային գործառույթները վերանայում են անկախիկ շրջանառության ավանդական սկզբունքներն ու մոտեցումները, որոնք որակական փոխակերպումների են ենթարկվում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջավայրում:

Грачья Даниелян, Исторический обзор развития электронной платежной систем - Эволюция системы платежных инструментов связана с трансформацией денег, их материальных и нематериальных носителей, а также трансформацией платежной и расчетной среды. Ключом к этой консолидации является не оператор связи, который является платежным инструментом, а платежная среда, которая обеспечивает содержание платежных инструментов. В этом смысле развитие электронных платежных инструментов тесно связано с развитием информационных технологий и виртуализацией платежной среды. В статье обсуждаются новые подходы к этапам эволюции электронных денег, основанные на мотивах, стоящих за расширением инструментов электронных платежей.

Hrachya Danielyan, Historical overview of the development of the electronic payment systems - The evolution of the payment instrumentation system is due to the transformations of money, their material and intangible carriers, as well as the transformations of the payment and settlement environment. The key to this consolidation is not the carrier, which is the payment instrument, but the payment environment, which provides the content of the payment instruments. In this sense, the evolution of electronic payment instruments is closely related to the development of information technology and the virtualization of the payment environment. This article discusses new approaches to the evolutionary stages of e-money based on the motivations behind the expansion of e-payment tools.

RECOURSES MANAGEMENT PECULIARITIES IN PAYMENT AND SETTLEMENT ACTIVITIES

BEHNOOD SOURY

Keywords – payment and settlement system, Central Bank regulations, accelerations of cash flow, payment transactions management.

Resource management goals are strongly correlated with the specifics of economic activity organizations. In this respect, payment and settlement transactions are significantly different from other services in the financial system, as a result of which the allocation of resources providing payment and settlement activities has its own characteristics and, in this connection, specific management features.[1]

In particular, as financial market participants, payment and settlement organizations do not act as financial intermediaries (attracting and then allocating financial resources), which is done in the commercial banks or credit organizations. The payment and settlement activity is mainly targeted at the use of communication channels ensuring the movement of money resources, the timely implementation of money transfers, the smooth organization of payment document processing and clearing. In this regard, payment and settlement activities do not require the involvement of financial resources, which is observed in banks. Instead, it requires the contribution of highly technological, professionally qualified labor resources, access to modern communication systems in the financial sector.[2]

In addition, the full cycle of payment transactions, in contrast to the complete cycle of banking transactions, is relatively short in time. If banks involving on long-term financial resources (from several months to several years) to replace short-term and long-term loans, the payment transaction cycle ends in a matter of hours and can take up to three business days.[3] Therefore, the financial resources that ensure the stability of payment transactions are not very large, in contrast to financial intermediation transactions, which has an impact on the resource management of payment service providers.[4]

---

[1] **Awais Ahmed, Abdul Aziz1, Muhammad Muneeb,** Electronic payment system: A complete guide, Journal of Multidisciplinary Sciences, Sci. 2019, 1(2), pp. 1-17., www.multidisciplines.com

[2] Oversight of Payment and Settlement Systems, Centre of excellence in finance, // https://www.cefsee.org/20-pssoversight

[3] Payment, clearing and settlement in various countries, https://www.bis.org/cpmi/paysysinfo.htm

[4] Settlement systems, https://www.suomenpankki.fi/en/money-and-payments/settlement-systems/

According to the current legislation of the Republic of Armenia, payment and settlement services are

a) opening and running bank accounts;

b) receiving/making payments in Armenian Dram and/or foreign currency from/to individuals and legal entities, using bank accounts;

c) receiving/making payments in Armenian Dram and/or foreign currency from/to individuals and legal entities, without using bank accounts;

d) issuing payment cards, checks, electronic monies and other payment instruments determined by CBA Board;

e) servicing and marketing payment cards, checks, electronic monies and other payment instruments determined by CBA Board;

f) processing;

g) clearing;

h) performing cash operations for the third parties; and

i) other operations, as accepted in international practice, pertinent to parties rendering payment and settlement services in agreement with CBA.[1]

The following have the right to provide payment and settlement services in the Republic of Armenia:

a) CBA, in compliance with the Republic of Armenia Law on Central Bank;

b) banks, in compliance with the Republic of Armenia banking laws and CBA normative regulations;

c) payment and settlement organizations, in compliance with this Law and CBA normative regulations;

d) Central Treasury of the Republic of Armenia, as required by the Republic of Armenia laws on the treasury system;

e) other parties that are entitled to render payment and settlement services under laws of the Republic of Armenia and international agreements.[2]

Due to the peculiarities of payment and settlement services, the task of management is to ensure the necessary level of highly liquid assets in order to be able to immediately reimburse the payment obligations assumed by them. The calculation of highly liquid assets includes the assets listed below, for which there is no limitation on their disposal. Among them are:

1) Bank account opened in resident banks and / or at the cash desk available funds, including on the road and payment operated by a payment and settlement organization

[1] Law of RA, "Payment and Settlement Systems and Payment and Settlement Organizations", 2004 article 17

[2] Law of RA, "Payment and Settlement Systems and Payment and Settlement Organizations", 2004 article 17

Cash in terminals, equal to cash payment documents. Moreover, at the bank account and / or at the cash desk available cash and cash equivalents Documents in the calculation of highly liquid assets should be high at least 30% of the total amount of liquid assets

2) Demand deposits;

2.1) time deposits, for which it is defined by the depositor termination of the bank deposit agreement at any time before the deadline opportunity, provided that the contract is terminated early. As a result, the depositor will not be fined, which can not be pledged or act as a guarantee

3) bank gold, including bank gold on the way;

4) By the Ministry of Finance of the Republic of Armenia issued transferable bills, which are due before maturity The period is up to 1 year, which are subject to mandatory payment. By the Central Bank of the Government of the Republic of Armenia from the means of the common treasury account, of Armenia State Treasury Bonds of the Republic and Central Securities issued by the bank at current (market) value

5) refinancing credit organizations bonds issued by current (market) value,

6) Settlement accounts in resident and non-resident banks[1]

Consequently, there is no limit for using of highly liquid assets that can be disposed during payment and settlement transactions, and they are strongly directed to the reimbursement of financial obligations.[2]

As for current liabilities, for payment and settlement functions they are recognized in accordance with International Accounting Standards. Thus, an entity classifies a liability as current when:

- expects the liability to be repaid during the normal operating phase of the organization;
- has no unconditional right to defer repayment of the liability.[3]

The peculiarity of payment transactions is that the normal operating period is very short (operating day), there is simply no possibility to delay the repayment of the recipient's obligation. Therefore, when managing the financial resources of payment and settlement organizations, it is intended to always ensure the principle of "Highly liquid assets > Current liabilities".

---

[1] Economic norms defined by the activity of payment and settlement organizations and the procedure for their calculation, Regulation of the Central Bank of the Republic of Armenia 17/02, Republic of Armenia, Decision No. 269-N of the Central Bank Board of October 14, 2011.

[2] Fundamentals of global payment systems and practices, Treasury alliance groupe// www.treasury alliance.com

[3] International Accounting Standard 1 Presentation of Financial Statements, paragraph 69

Duty is an obligation or responsibility to act in a certain way. Obligations can be legally enshrined as a binding contract or a legal requirement. It is necessary to draw a line between the current responsibility and the "future commitment". Repayment of the present obligation usually represents the provision of financial benefits by the entity to meet the other party's claim.

The current liability can be repaid in several ways, for example:

a) by payment of funds;

b) by transfer of other assets;

c) by providing services;

d) replacing that obligation with another obligation, or

e) by converting the liability into equity.

It is noteworthy, that there is no requirement of keeping capital adequacy in payment and settlement organizations, only the minimum capital threshold is set from central bank. The reason is, that there is no risk of resource allocation between the payer - receiver as a cash flow providing company, so capital adequacy does not apply to risk-weighted assets, which is done in commercial banks.[1]

One of the peculiarities of managing the resources of payment and settlement organizations, is that according to the Central Bank's regulations, the disposed assets are not assessed as risky, which is done for commercial banks. This circumstance also stems from the fact, that payment and settlement activities are mainly based on the communication of "payer-receiver" money transfers, or the settlement of short-term liabilities, do not require special accumulations of own financial resources, and therefore also large-scale managed resources.

There is an opinion in the professional literature that the working resources of organizations should also be valued as assets and even become measurable in the accounting system. Employees, as rule involved in the business of organizations, although playing a key role for inflow of economic benefits, are not traditionally recognized as assets and are not reflected in the financial statements. They believe, that the organization's labor resources should be recognized as an active in accounting system and interpreted according principles of asset use.[2]

This circumstance is justified by the fact that the asset, enables for organization to provide an inflow of economic benefits, or has the potential to receive economic benefits. In our opinion, this provision is especially applicable to pay-

[1] **Baseri, Y., Takhtaei, B., Mohajeri, J. Secure** untraceable off-line electronic cash system. Sci. Iran. 20(3), 2013, 37-646.

[2] **Tshuguryan A.,** The issues of recognition and measurement companies labor recourses as an assets,//Finance and accounting, #2, 2020, pp.34-35

ment and settlement organizations, where the staff involved have not only modern tools for the implementation of financial functions, but also modern IT tools.




Figure 1 Peculiarities of Resource Management Objectives of Payment and Settlement Organizations[1]

Conclusion

When managing the resources of payment and settlement organizations, great attention will be paid to ensuring the efficiency of the human capital involved.

Thus, the peculiarities of the resource management objectives of payment and settlement organizations are mainly focused in the following directions (see figure 1).

The first is the implementation of the goal of securing IT assets through payment technical network means, which ensures a stable and complete process of conducting payment and settlement transactions.

The second, goal of the management is the acceleration of the resources included in the payment and settlement transactions, which ensures the competitive position of the payment and settlement organizations in the financial market.

Third, the range of regulatory indicators of central banks to payment and settlement transactions, in contrast to the financial and economic standards of commercial banks, is quite narrow, which allows for the expansion of "bottom-up" management liberalization of payment and settlement organizations' resources.

[1] Composed by author.

Բենուդ Սուրի, Վճարահաշվարկային գործունեության ռեսուրսների կառավարման առանձնահատկությունները - Ռեսուրսների կառավարման նպատակները խիստ փոխկապակցված են տնտեսական գործունեության կազմակերպությունների առանձնահատկությունների հետ: Այս առումով վճարահաշվարկային գործարքները զգալիորեն տարբերվում են ֆինանսական համակարգի այլ ծառայություններից, որի արդյունքում վճարահաշվարկային գործունեություն ապահովող ռեսուրսների բաշխումն ունի իր առանձնահատկությունները և, այդ կապակցությամբ, կառավարման առանձնահատուկ մոտեցումները: Հոդվածում քննարկվում են վճարային գործարքներում ներգրավված ռեսուրսների կառավարման առանձնահատկությունները:

Бейнуд Сури, Особенности управления ресурсами в платежно-расчетной деятельности - Цели управления ресурсами сильно коррелируют со спецификой хозяйственной деятельности организаций. В этом отношении платежные и расчетные операции существенно отличаются от других услуг в финансовой системе, в результате чего распределение ресурсов, обеспечивающих платежно-расчетную деятельность, имеет свои особенности и, в этой связи, своеобразные подходы управления. В данной статье рассматриваются особенности управления ресурсами, задействованными в платежных операциях.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աշոտ Ներսիսյան - Պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր (ashot-nersisyan@mail.ru)

Աննա Վարդանյան - Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարանի ասպիրանտ (anneta.anna.vardanyan@mail.ru)

Աստղիկ Պողոսյան – Հյուսիսային համալսարանի հայցորդ (ast.poghosyan@gmail.com)

Բեհնուդ Սուրի - Եվրոպական համալսարանի ասպիրանտ (Jarmen1@yandex.ru)

Թաթուլ Մանասերյան – Տնտեսագիտության դոկտոր, ԵՊՀ պրոֆեսոր (tatoulm@gmail.com)

Լիլիթ Սուքիասյան - ԵԿՏԱ Իրավագիտության ամբիոնի դասախոս, (lilitsukiasyan@yahoo.com,)

Խոսրովադուխտ Ազատյան - ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ, (khosrovadukht.azatyan@ysu.am)

Հայկ Հովհաննիսյան - Սորբոնի համալսարանի Սորբոնի Կառավարման դպրոցի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող (Hayk.hovh@hotmail.com)

Հրաչյա Դանիելյան - Հյուսիսային համալսարանի հայցորդ, (hro@rambler.ru)

Մարիաննա Հակոբյան - ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի հայցորդ. (marianna.hakobyan90@gmail.com)

Նոննա Խաչատրյան - Տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դոցենտ (nonnakhachatryan@yahoo.com)

Սերգո Հայրապետյան – ՇՊՀ, Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ (artashes.ghazaryan@rambler.ru)

Վալերի Թունյան - Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող (tounyan@rambler.ru)

Վահան Գևորգյան – Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի պրոռեկտոր (gevorgyan_vahan@yahoo.com)

Վերոնիկա Ժուրավլյովա – ՀՀ ԳԱԱ Արվեստի ազգային ինստիտուտի հայցորդ (veronika.barhudaryan@yandex.ru)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ---------- 3

ВАЛЕРИЙ ТУНЯН
СВЯТОЙ ЭЧМИАДЗИН ---------- 20

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒՅՈՒՆ

ՄԱՐԻԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃԻ ՀԱՆԳՈՒՅԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԸ.
ԱՄՆ ՕՐԻՆԱԿԸ ---------- 29

ԽՈՍՐՈՎԱԴՈՒԽՏ ԱԶԱՏՅԱՆ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ ---------- 44

ԼԻԼԻԹ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ ---------- 57

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԲԱՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԱՂԱԴՐԻՉԻ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐԻ ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ---------- 67

ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԲԱՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ ---------- 74

ՄՇԱԿՈՒՅԹ

ВЕРОНИКА ЖУРАВЛЕВА
ВЗАИМОСВЯЗЬ МИФОПОЭТИЧЕСКОЙ ПАРАДИГМЫ В ТВОРЧЕСТВЕ СЕРГЕЯ ПАРАДЖАНОВА И ПЬЕРА ПАОЛО ПАЗОЛИНИ ---------- 80

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ---------- 100

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ---------- 106

ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ---------- 114

ԱՍՏՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ
ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ---------- 121

ՎԱՀԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԲՈՒՀԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ---------- 126

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ ---------- 133

BEHNOOD SOURY
RECOURSES MANAGEMENT PECULIARITIES IN PAYMENT AND SETTLEMENT ACTIVITIES ---------- 143

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ---------- 149

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆԴԵՍԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Պատմություն և քաղաքականություն» հանդեսում տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ: Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով: Հոդվածի շարվածքը պետք է լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4: Հոդվածի սկզբում անհրաժեշտ է գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն և ազգանունը՝ մեծատառերով: Հղումները պետք է դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշելով աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը): Հոդվածի բանալի բառերը, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը պարտադիր են: Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցեն (e-mail): Հոդվածներն ուղարկել **generalsepuh@gmail.com** էլեկտրոնային հասցեներով: Հանդեսն ունի իր համացանցային կայքը (**www.generalnews.am**), ուր զետեղված են նրա էլեկտրոնային տարբերակները, հոդվածների վերաբերյալ կարծիքները, տեղեկություններ խմբագրական խորհրդի կազմի և էթիկայի կանոնների մասին:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
ԹԻՎ 5(10)

Հիմնադիր՝ « Ջորավար Սեպուհ պատմաքաղաքական վերլուծական կենտրոն» ՀԿ

Գրանցման համար՝ 2111711003993, գրանցման ամսաթիվ՝ 02.02.2018

Հասցե՝ Երևան, Էրեբունի թաղամաս, Սարի թաղ 3 – րդ շարք, բնակարան 39

Գործունեության հասցե՝ Երևան, Ե. Քոչար, 8/8, հեռ, 011-562519, 091-56-25-19, 077 – 67-20-87

Նյութերը գրախոսությունների հետ միասին ընդունվել և խմբագրական խորհրդի կողմից երաշխավորվել են տպագրության 2020թ. օգոստոս - սեպտեմբեր ամիսների ընթացքում:

Համարի պատասխանատու՝ Թ. Սարգսյան
Ստորագրված է տպագրության՝ 26.10.2020

Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 70X100/16;
Ծավալը՝ 12 պայմ,.տպ. մամուլ:
Տպագրության եղանակը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 100

Տպագրվել է «Տիր» հրատարակչության տպագրատանը
Հասցեն՝ Երևան, Ա. Միկոյան փող., 2/2
Էլ.փոստ՝ tirpublishinghoushe@gmail.com
Հեռ. (+374 94) 50 99 00